



**«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ
ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

ԵՐԵՎԱՆ – 2024



Հարգելի Հաճախորդ,

Շնորհակալություն ենք հայտնում «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ ծառայություններից օգտվելու համար: Խնդրում ենք ծանոթանալ ստորև նշված պայմաններին և կանոններին (այսուհետ՝ «**Ընդհանուր Պայմաններ**» կամ «**Պայմաններ**»), որոնք կարգավորում են «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ կողմից առաջարկվող ծառայություններից օգտվելու կապակցությամբ Ձեր և «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ միջև ծագող պայմանագրային հարաբերությունները:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	3
1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ.....	4
2. ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ և ԿԻՐԱՌՈՒՄ.....	5
3. ԲԱՆԿԻ և ՀԱՃԱԽՈՐԴԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	6
4. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ.....	10
5. ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ.....	13
6. ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԿՈՒՄ.....	13
7. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՇԻՎՆԵՐ.....	14
8. ԱՎԱՆԴՆԵՐ.....	16
9. ՉԵԿԱՅԻՆ ԳՐՔՈՒՅԿՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	20
10. ՀԵՌԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ.....	21
11. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՀԱՏԵՂՈՒՄ(ԴԵՊՈԶԻՏԱՐ ՊԱՀԱՏՈՒՓ) ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՊԱՀԱՏԵՂԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ.....	25
12. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	28
13. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	31
14. ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ: ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	39
15. ԲԱՆԿԻ և ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	40
16. ԿԻՐԱՎՈՂ ԻՐԱՎՈՒՆՔ, ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ.....	40
17. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ.....	42
ԾԱՆՈՒՑՈՒՄ՝ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ և ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ (ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ և ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ).....	44
ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ.....	45
ԻՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԲՈՂՈՔ ՈՒՆԵՔ.....	46
ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	47



1. Սահմանումներ եվ հապավումներ

Պայմանագրերում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը, եթե այլ բան չի նշված, կամ բովանդակությունը կամ համատեքստը այլ բան չի պահանջում.

«**Բանկ**»՝ «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերություն:

«**Հաճախորդ**»՝ Բանկի ծառայություններից օգտվող կամ օգտվել ցանկացող ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր, իրավաբանական անձ (այդ թվում՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն կամ այլ սուբյեկտ, որն իր նկատմամբ կիրառվող իրավունքի համաձայն կարող է ունենալ բանկային հաշիվներ և օգտվել այլ բանկային ծառայություններից), ընդ որում իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում տարեկան շրջանառությունը՝ ըստ նախորդ ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների և Բանկի կարծիքով այլ հավաստի տվյալների (ԱԱՀ և շահութահարկի հաշվարկներ և այլն), պետք է կազմի 400.000.000 ՀՀ դրամ և ավելի:

«**Ավանդադրու**»՝ Հաճախորդ, ով Բանկի հետ կնքել է բանկային ավանդի պայմանագիր,

«**Բանկային հաշիվներ/Հաշիվներ**» (այսուհետ՝ նաև Հաշիվ)՝ Բանկի կողմից Հաճախորդներին առաջարկվող ընթացիկ, քարտային, խնայողական, ավանդային, վարկային, մետաղական և այլ հաշիվներ: Հաճախորդի առանձին տեսակների հաշիվների սպասարկումից բխող Բանկի և Հաճախորդի հարաբերությունները կարող են կարգավորվել Բանկի կողմից սահմանված կարգով ընդունված այլ փաստաթղթերով, որոնց անբաժանելի մասն են կազմում նաև սույն Պայմանագրերը:

«**Կառուցապատող**»՝ Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը հողամասի սեփականատեր է և հողամասում կառուցվող ստորաբաժանված շենքի ճարտարապետահատակագծային առաջադրանքի, ճարտարապետաշինարարական նախագծի, շինարարության իրականացման թույլտվության և ճարտարապետաշինարարական նախագծով նախատեսված ստորաբաժանված միավորների ցուցակի հիման վրա վերջինիս անվամբ Կադաստրի կոմիտեում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված է որոշակի մակերեսով կառուցվող շենքի նկատմամբ կառուցապատողի իրավունքներն ու պարտականությունները:

«**Գնորդ**»՝ Կառուցապատողի հետ կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրի (այսուհետ՝ նաև Գնման իրավունքի պայմանագիր) գնորդ կողմ հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձ:

«**Գործընկեր**»՝ Բանկի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող կամ այդպիսի ցանկություն հայտնաձևող անձ, ով չի հանդիսանում Բանկի Հաճախորդ:

«**Կառուցապատողի հատուկ հաշիվ**»՝ Բանկի կողմից Կառուցապատողներին առաջարկվող հատուկ հաշիվ, որը նախատեսված է գնորդների հետ կնքված կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրերի հիման վրա կառուցվող շենքում բնակարանների և ոչ բնակելի տարածքների ձեռքբերման նպատակով Գնորդների օգտին գործող երրորդ անձ վճարողների կողմից կանխավճարների և ձեռքբերմանն ուղղված այլ վճարների ստացման համար:

«**Սակագներ**»՝ Բանկի կողմից հաստատվող և ժամանակ առ ժամանակ վերանայվող փաստաթուղթ, որը նախատեսում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց Հաճախորդից գանձվող վճարների տեսակները, դրանց գանձման կարգն ու չափերը և տվյալ ծառայության այլ հատուկ պայմանները: Սակագները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը: Ընդ որում, Բանկը կարող է սահմանել ընդհանուր և անհատական սակագներ՝ առանձին Հաճախորդների կամ Հաճախորդների խմբերի համար:

«**Բանկային օր**»՝ (այսուհետ՝ նաև գործառնական օր) աշխատանքային կամ ոչ աշխատանքային օր, երբ Բանկը մատուցում է բանկային ծառայություններ: Բանկում բանկային օրն սկսվում է Երևանի ժամանակով ժամը 9:15-ին և ավարտվում 16:45-ին, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ առանձին ծառայությունները կարգավորող պայմանագրերում կամ պայմանագրերում:

«**Պայմանագիր**»՝ Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու նպատակով Բանկի հետ կնքվող գրավոր գործարք (գրավոր համաձայնություն), որն ուղղված է կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանմանը, փոփոխմանը կամ դադարեցմանը:

«**Դիմում-պայմանագիր**»՝ Բանկի սահմանած ձևի՝ Բանկի կողմից մատուցվող ծառայություններից (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ բանկային հաշիվ բացելու, չեկային գրքույկ տրամադրելու, հեռակառավարման համակարգերով գործառնություններ կատարելու, ավանդ ներդնելու) օգտվելու նպատակով համապատասխան պայմանագիր կնքելու առաջարկություն պարունակող դիմում:

«**Հեռակառավարման համակարգ**» կամ «**Համակարգ**»՝ ARDSHININVESTBANK I-BANKING համակարգ, որի միջոցով, էլեկտրոնային փաստաթղթերի և/կամ հատուկ տեխնիկական միջոցների (սերտիֆիկատներ, բանալիներ և այլն) կիրառմամբ Բանկը հաճախորդին մատուցում է առանձին բանկային ծառայություններ:



«Դրամարկղային ծառայություններ»՝ կանխիկ դրամով իրականացվող գործառնությունների սպասարկման ծառայություններ, այդ թվում, բայց ոչ միայն, կանխիկ դրամական միջոցների մուտքագրում հաշվին, ելքագրում հաշվից, ոչ հաշվետեր հաճախորդների կողմից դրամական փոխանցումների իրականացում, կոմունալ վճարումների իրականացում, դրամական միջոցների փոխարկումներ և այլն:

«Կանխիկ դրամ»՝ շրջանառության մեջ գտնվող, ինչպես նաև շրջանառությունից հետ կանչված և հանված, սակայն փոխանակման ենթակա ՀՀ դրամը, արտարժույթը՝ թղթադրամների և մետաղադրամների տեսքով,

«Այլ արժեքներ»՝ ՀՀ դրամով կամ արտարժույթով արտահայտված վճարային արժեթղթեր, վճարահաշվարկային փաստաթղթեր, թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ, հուշադրամներ, թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, հաճախորդներից ի պահ կամ գրավ ընդունված արժեքներ, ինչպես նաև այլ արժեքներ կամ արժեքավոր իրեր, որոնց պահպանությունը Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով նախատեսված է դրամապահոցում,

«Արժեքներ»՝ կանխիկ դրամ և այլ արժեքներ,

«Արժեթղթեր»՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված արժեթղթեր (բացառությամբ վճարային արժեթղթերի),

«Բրոքերային հաշիվ»՝ Բանկում բացված դրամական հաշիվ, որն օգտագործվում է Ներդրումային ծառայության շրջանակներում դրամական միջոցների հաշվառման նպատակով,

«Դեպո հաշիվ»՝ Հաճախորդին պատկանող կամ Բանկից (Բանկի միջոցով) գնված Արժեթղթերը հաշվառելու նպատակով Բանկում բացված հաշիվ, որտեղ Արժեթղթերը հաշվառվում են ըստ առանձին ներդրողների, թողարկողների, պահպանման վայրի,

«Պահպարտ»՝ արժեքների տեղադրման և պահպանման համար Բանկի դիմած Հաճախորդ, որը Բանկից վարձակալում է անհատական պահատեղ,

«Պահառու»՝ Բանկ,

«Պարվեր»՝ Հաճախորդի կողմից Բանկին ներկայացվող և Հաճախորդի միջոցների հաշվին Բանկի կողմից կատարման կամ Բանկի կողմից երրորդ անձանց ի կատարում հաղորդման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ, էլեկտրոնային կամ ձայնային հաղորդագրություն, որի նպատակը Հաճախորդի կողմից Արժեթղթերի օտարումը կամ ձեռքբերումն է,

«Պահասենյակ»՝ սեփականության իրավունքով Բանկին պատկանող կամ վարձակալված տարածքում, նորմատիվ տեխնիկական պահանջներին համապատասխան կառուցված՝ արժեքների պահպանման անհատական պահատեղերի համար նախատեսված պահասենյակ,

«Անհատական պահապտեղ»՝ պահասենյակում տեղադրված մետաղյա դարակաշարի (պահատեղերի) մեկ առանձին բջիջ (պահատեղ), որտեղ պահվում է անհատական պահատուփը,

«Անհատական պահապտուփ»՝ անհատական պահատեղի շարժական մեկ առանձին բջիջ,

2. Պայմանների կարգավորման առարկան և կիրառում

2.1 Սույն Պայմանները սահմանում են Բանկի կողմից հաշիվների բացման և վարման (սպասարկման), այլ բանկային, այդ թվում՝ արժեթղթերի պահառության և ներդրումային ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները և կարգավորում են դրանց հետ կապված Բանկի և Հաճախորդի, Գործընկերոջ (այսուհետ միասին՝ Կողմեր) միջև ծագած պայմանագրային հարաբերությունները:

2.2 Բանկի ծառայություններից օգտվելով, ինչպես նաև Բանկի հետ պայմանագիր (ներառյալ՝ դիմում-պայմանագրեր) ստորագրելով՝ Հաճախորդը հայտարարում է, որ ընդունում է սույն Պայմանները և Սակագները, հասկացել է դրանց իմաստը, տեղյակ է, որ դրանք պարտադիր են Հաճախորդի և Բանկի համար և ունեն պայմանագրի ուժ:

2.3 Հաճախորդը կարող է ծանոթանալ Պայմաններին Բանկի կենտրոնական գրասենյակում և մասնաճյուղերում տեղադրված տեղեկատվական վահանակներից, ինչպես նաև՝ Բանկի պաշտոնական ինտերնետային կայքէջից՝ www.Ardshininvestbank.am, որտեղ տեղադրված Պայմաններն ունեն նույն իրավաբանական ուժն ու կիրառելիությունը: Հակասությունների հայտնաբերման դեպքում գերակայում է ինտերնետային կայքէջում հրապարակված տարբերակը:

2.4 Բանկի առանձին ծառայություններ և գործառնություններ կարող են տրամադրվել այլ պայմանագրերի, ինչպես նաև՝ Բանկի կողմից սահմանվող այլ կանոնների և պայմանների հիման վրա: Սույն Պայմանները համարվում են այդ պայմանների անբաժանելի մասը, և կարգավորում են նաև այլ բանկային, այդ թվում՝ արժեթղթերի պահառության և ներդրումային ծառայությունների մատուցման հետ կապված Բանկի և Հաճախորդի պայմանագրային հարաբերությունները, այնքանով, որքանով այլ բան սահմանված չէ առանձին ծառայություններին վերաբերող հատուկ պայմանագրերով և պայմաններով:



2.5 Եթե օրենքով, ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Բանկի և Հաճախորդի լրացուցիչ գրավոր համաձայնությամբ, այդ թվում Դիմում-պայմանագրով, սահմանված են այլ դրույթներ, քան Ընդհանուր Պայմաններով, ապա այդ ակտերի դրույթները ճանաչվում են գերակայող:

2.6 Պայմանները, Սակագները, ինչպես նաև՝ բանկային ծառայություններին վերաբերող ուղեցույցները, հավելվածները և այլ փաստաթղթերը հաստատվում են Բանկի կողմից և կարող են ժամանակ առ ժամանակ Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել և լրացվել, բացառությամբ Հաճախորդի համար անհատական սակագին սահմանելու դեպքերի, որոնք հրապարակման ենթակա չեն: Կատարված փոփոխություններն ու լրացումները Բանկը իր հայեցողությամբ հրապարակում է տեղեկատվության այնպիսի միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս ծանոթանալու այդ տեղեկություններին: Ըստ այդմ էլ Բանկը փոփոխությունների ու լրացումների վերաբերելի տեղեկությունները հրապարակում է՝

2.6.1 Բանկի ինտերնետային կայքէջում, և(կամ)

2.6.2 Բանկի մասնաճյուղերում և Հաճախորդների սպասարկում իրականացնող այլ ստորաբաժանումներում առկա տեղեկատվական վահանակներում հայտարարությունների տեղադրման միջոցով, և(կամ)

2.6.3 Հաճախորդների էլեկտրոնային փոստային հասցեներով ուղարկելու միջոցով, և(կամ)

2.6.4 այլ միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս Հաճախորդին ստանալու և հավաստիանալու, որ տվյալ տեղեկությունները ստացել է Բանկից:

Բանկն իր բացառիկ հայեցողությամբ տեղեկությունները հրապարակում է վերոհիշյալ միջոցներից որևէ մեկով կամ մի քանիսով: Պայմանների և Սակագների փոփոխություններն ուժի մեջ են մտնում Բանկի պաշտոնական ինտերնետային կայքէջում www.Ardshinvestbank.am կայքում հրապարակելու օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրը, եթե Բանկի կողմից հրապարակմամբ համապատասխան փոփոխություններն ուժի մեջ մտնելու այլ ժամկետ չի սահմանվում, ընդ որում, հրապարակման օր է համարվում Բանկի ինտերնետային կայքում դրանց տեղադրման ամսաթիվը: Հաճախորդը համաձայնում է, որ Բանկի ծառայություններից օգտվել շարունակելը (ներառյալ՝ հաշիվները չփակելը՝ առանց դրանցով գործառնություններ կատարելու) նշանակում է, որ փոփոխություններն ընդունվել են Հաճախորդի կողմից: Սույն կետով սահմանված միակողմանիորեն կատարվող փոփոխություններն ուժի մեջ մտնելու ժամկետի և սույն Պայմանների հետ միասին Հաճախորդի հետ կնքված պայմանագրի անբաժանելի մաս կազմող այլ փաստաթղթերով սահմանված՝ միակողմանիորեն կատարվող փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետի միջև հակասություններ առաջանալու դեպքում գործում է սույն կետով սահմանված ժամկետը:

2.7 Հաճախորդի համար անհատական սակագին սահմանվելու դեպքում, սակագինն ուժի մեջ է մտնում Բանկի կողմից սահմանված ժամկետում:

2.8 Պայմաններով սահմանված կարգով Պայմաններում, Սակագներում և Բանկի կողմից մատուցվող առանձին ծառայություններից բխող հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերում փոփոխություններ կատարելուց բացի Բանկն իրավունք ունի փոփոխել նաև Հաճախորդի կողմից ստորագրվող պայմանագիրը, այդ թվում՝ Դիմում-պայմանագիրը, Բանկի սահմանած ձևի այլ տիպային փաստաթուղթը առանց Հաճախորդի ստորագրությունը ստանալու, եթե փոփոխությունները կրում են տեխնիկական բնույթ ((թվաբանական սխալներ, տառասխալներ, վրիպակներ, բացթողումներ) կամ կատարվում են հոգուտ Հաճախորդի և հանգեցնում են Հաճախորդի համար բարենպաստ հետևանքների:

3. Բանկի և հաճախորդի գործարար հարաբերություններ

3.1 Բանկի ծառայություններից օգտվելով՝ Հաճախորդը երաշխավորում և հավաստիացնում է, որ գործառնությունների կնքման և կատարման համար ունի անհրաժեշտ իրավունակություն և գործունակություն, ստացել է խնամակալների, հոգաբարձուների, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ կառավարման մարմինների, վերստուգող կամ վերահսկող մարմինների, պարտատերերի և այլ մարմիններից և անձանցից պահանջվող բոլոր թույլտվություններն ու համաձայնությունները:

3.2 Կողմերը հավաստիացնում են, որ Պայմաններն իրենց համար իրավաբանորեն պարտադիր և վավեր են և իրենց հայտնի չէ որևէ հանգամանք, որը կարող է հանգեցնել սույն Պայմաններից բխող պարտավորությունների անվավերությանը:

3.3 Եթե որևէ գործառնություն իրականացնելու համար Բանկի կողմից սահմանված է փաստաթղթերի որոշակի օրինակելի ձև, Բանկն իրավունք ունի չընդունել այդ ձևին չհամապատասխանող ցանկացած փաստաթուղթ և հրաժարվել գործառնության իրականացումից: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերում տեղեկությունների անճշտության համար:



3.4 Բանկն իրավունք ունի պահանջել՝ թարգմանել օտար լեզուներով ներկայացված փաստաթղթերը հայերեն լեզվով, ինչպես նաև՝ սահմանված կարգով վավերացնել դրանք: Բանկն իրավունք ունի պատճենել կամ իր մոտ պահել փաստաթղթերը՝ առանց Հաճախորդի ծախսերը հատուցելու պարտավորության:

3.5 Բանկի ծառայություններից օգտվելիս՝ Հաճախորդը պարտավոր է ներկայացնել փաստաթղթեր և տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռում Բանկին պատշաճ կերպով նույնականացնել Հաճախորդին և ստուգել տվյալ գործառնությունն իրականացնելու Հաճախորդի իրավասությունը:

3.6 Հաճախորդին նույնականացնելիս՝ Բանկն ապահովում է համապատասխան փաստաթղթի, դրա վրա առկա ստորագրության կամ ներկայացված անձի նույնականացումը տեսողական զննության միջոցով: Բանկը պարտավոր չէ կիրառել նույնականացման հատուկ միջոցներ և պատասխանատու չէ Հաճախորդի անունից կատարված գործարքների արդյունքում Հաճախորդի կորուստների և վնասների համար, եթե տվյալ իրավիճակում խելամուտք են հնարավոր չէր պարզել, որ գործառնությունը չէր բխում Հաճախորդի իրական կամքից:

3.7 Հաճախորդը կարող է իր Հաշիվների տնօրինման իրավունքը փոխանցել այլ անձի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված, Բանկի համար ընդունելի լիազորագրի հիման վրա: Լիազորված անձի միջոցով գործառնություններ կատարելիս՝ Հաճախորդը պարտավոր է ապահովել, որ լիազորագիրը հստակ ձևով արտահայտի Հաճախորդի կամքը Հաճախորդի անունից տվյալ գործառնությունը կատարելու համար որևէ երրորդ անձին իրավունք ընձեռելու վերաբերյալ: Հաճախորդը այլ անձին տրված լիազորագիրը հետ կանչելու դեպքում, պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցել Բանկին (լիազորագրի հիման վրա գործարք կատարող Բանկի մասնաճյուղին): Բանկը պատասխանատվություն չի կրում լիազորված անձի միջոցով կատարված գործողությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար, եթե Լիազորված անձի կողմից համապատասխան գործողությունների իրականացման պահին Բանկը (լիազորագրի հիման վրա գործարք կատարող Բանկի մասնաճյուղը) չի ստացել Հաճախորդի գրավոր ծանուցումը լիազորագիրը հետ կանչելու մասին: Հաճախորդը Բանկի առջև ամբողջ ծավալով պատասխանատվություն է կրում իր կողմից լիազորված անձանց գործողությունների համար: Հայերենից տարբերվող այլ լեզվով լիազորագիր ներկայացնելու դեպքում՝ Բանկ պետք է ներկայացվի նաև լիազորագրի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանված տարբերակ, ընդ որում Բանկը իր հայեցողությամբ կարող է ընդունել լիազորագիր առանց թարգմանություն պահանջելու:

3.8 Հաճախորդը պարտավոր է Բանկ ներկայացնել լիարժեք տվյալներ, որոնք անհրաժեշտ են իր հետ կապ հաստատելու համար, ինչպես նաև՝ տրամադրել այլ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք ժամանակ առ ժամանակ պահանջվում են Բանկի կողմից՝ բանկային գործառնությունների կատարման շրջանակներում: Հաճախորդը պարտավոր է անհապաղ գրավոր ծանուցել Բանկին այդ տվյալների բոլոր փոփոխությունների մասին: Տվյալների փոփոխության մասին սահմանված կարգով Բանկին չտեղեկացնելու բացասական հետևանքների ռիսկը կրում է Հաճախորդը:

3.9 Հաճախորդը պարտավոր է անհապաղ Բանկին գրավոր տեղեկացնել բոլոր այն հանգամանքների և իրադարձությունների մասին, որոնք կարող են ազդել Բանկի հետ փոխհարաբերությունների վրա (ներառյալ՝ առանց սահմանափակման՝ Հաճախորդի անվան/անվանման, կազմակերպարավական ձևի, ռեզիդենտության, հասցեի, ներկայացուցիչների և նրանց լիազորությունների ծավալի փոփոխությունները, Հաճախորդի նկատմամբ սնանկության/անվճարունակության վարույթի հարուցումը և այլն)՝ Բանկի պահանջով ներկայացնելով համապատասխան հանգամանքները և իրադարձությունները հաստատող փաստաթղթեր:

3.10 Բանկը Հաճախորդի վերաբերյալ իր մոտ առկա, այդ թվում՝ Հաճախորդի կողմից ներկայացված տվյալները համարում է հավաստի և հիմնվում է դրանց վրա այնքան ժամանակ, քանի դեռ Հաճախորդը Բանկին պատշաճ կերպով չի տեղեկացրել դրանց փոփոխությունների մասին: Ընդ որում, Հաճախորդը տեղեկացված է, որ փոխանցում ստացողի նույնացումը կարող է իրականացվել ստացողի բանկի կողմից՝ հիմնվելով միայն հաշվեհամարի վրա: Միևնույն ժամանակ, Բանկն իրավունք ունի ստուգել Հաճախորդի կողմից ներկայացված տեղեկատվությունը, ինչի համար պայմանագրի կնքմամբ Հաճախորդը լիազորում է Բանկին իրականացնել ցանկացած, Բանկի կարծիքով անհրաժեշտ վերստուգում, այդ նպատակով Հաճախորդի անունից հարցումներ կատարել համապատասխան տեղեկատվությանը տիրապետող անձանց և մարմիններին:

3.11 Կողմերին ընդունում են, որ Պայմաններից բխող ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում պետք է լինի գրավոր ձևով, ստորագրված լինի այն ուղարկող կողմի կողմից և պետք է ուղարկվի մյուս կողմի իրեն հայտնի վերջին հասցեով՝ ցրիչի կամ փոստային առաքման միջոցով կամ վերջին հայտնի էլեկտրոնային փոստի հասցեից մյուս կողմի իրեն հայտնի վերջին էլեկտրոնային փոստի հասցեին, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով, սույն կանոններով կամ կողմերի փոխադարձ համաձայնությամբ կոնկրետ պահանջը, ծանուցումը կամ հաղորդումը ուղարկելու համար հաղորդակցման հատուկ կարգ է սահմանված: Հաճախորդի վերջին հայտնի հասցե, այդ թվում՝ վերջին հայտնի էլեկտրոնային փոստի հասցե է համարվում Հաճախորդի կողմից տրամադրված և Բանկում գրանցված վերջին հասցեն: Ընդ որում, Բանկի կողմից ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում, որն ուղարկվում է ցրիչի կամ փոստային առաքման միջոցով մյուս կողմի վերջին հայտնի հասցեին,



համարվում է մյուս կողմի կողմից պատշաճ ստացված (հանձնված) նշված կարգով ուղարկման պահից սկսած յոթերորդ օրը, թեկուզև հետագայում պարզվի, որ մյուս կողմը նշված ծանուցումը փաստացի չի ստացել: Բանկի ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում, որն ուղարկվում է մյուս կողմի վերջին հայտնի էլեկտրոնային փոստի հասցեին, համարվում է մյուս կողմի կողմից պատշաճ ստացված նշված կարգով ուղարկման պահից սկսած յոթերորդ օրը, կամ նշված յոթօրյա ժամկետում համապատասխան պահանջը, ծանուցումը կամ այլ հաղորդումը ուղարկված էլեկտրոնային փոստի հասցեին պահանջը, ծանուցումը կամ այլ հաղորդումը ստանալու մասին հավաստում ստանալու օրվանից: Պահանջի, ծանուցման կամ այլ հաղորդման ուղարկման օրը որոշվում է պահանջը, ծանուցումը կամ այլ հաղորդումը պարունակող էլեկտրոնային նամակի ուղարկման օրով:

3.12 Տրամադրելով իր տվյալները Բանկին՝ Հաճախորդը համաձայնում է Բանկից փոստային կապով, էլեկտրոնային փոստով, հեռախոսակապով և կապի այլ միջոցներով ստանալ Բանկի ծառայությունների վերաբերյալ տեղեկատվական նյութեր, պայմանագրեր կնքելու առաջարկներ և այլ փաստաթղթեր:

3.13 Բանկն իրավունք ունի ծայնագրել, լուսանկարել կամ տեսագրել Հաճախորդի և Բանկի միջև հեռախոսային խոսակցությունները, Հաճախորդի այցելությունները և Բանկի տարածքում կատարվող գործառնությունների ընթացքը: Այդ ծայնագրությունները, լուսանկարները ու տեսագրությունները պահվում են Բանկում և կարող են ծառայել որպես ապացույց՝ հնարավոր տարաձայնությունների լուծման համար:

3.14 Հաճախորդը սույնով տալիս է իր համաձայնությունը Բանկին այլ անձանցից ընդունել Բանկի առջև Հաճախորդի ունեցած դրամական պարտավորությունների կատարմանն ուղղված գումարները և Բանկին ազատում է այդ գործողություններից բխող ցանկացած պահանջներից և պատասխանատվությունից:

3.15 Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը և թույլտվությունը, որպեսզի Բանկը երրորդ անձանց բացահայտի իր, որպես Բանկի հաճախորդի անվան և ազգանվան առաջին տառերը, ինչպես նաև ազգանվան տառերից կամ ընտրական որևէ տառ, Բանկում հաշիվ ունենալու հանգամանքը՝ առանց բանկային և/կամ քարտային հաշիվներին, հաշվի և/կամ քարտի համարների բացահայտման: Հաճախորդը պարտավորվում է սույն կետի ներքո կատարված բանկային գաղտնիքի բացահայտման կապակցությամբ Բանկին չներկայացնել որևէ բողոքներ և/կամ պահանջներ: Այն դեպքում, երբ Հաճախորդը չի ցանկանում, որպեսզի հիշյալ տեղեկությունները բացահայտվեն, ապա Հաճախորդը Բանկին ներկայացնում է համապատասխան դիմում՝ Բանկի համար ընդունելի ձևով:

3.16 Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց Հաճախորդը վճարումները կատարում է համաձայն Բանկի Սակագների, ընդ որում՝ համապատասխան ծառայությունը արժույթի փոխարկում պահանջելու դեպքում, փոխարկումը կատարվում է համաձայն Բանկի սահմանած փոխարժեքի: Բանկն իրավունք ունի Սակագներով սահմանված վճարները, ինչպես նաև՝ Հաճախորդին ծառայությունների մատուցման արդյունքում Բանկի կատարած ծախսերը, և Բանկի հետ կնքված պայմանագրերով Բանկի նկատմամբ պարտքեր ձևավորելու դեպքում, համապատասխան գումարները անակցեպտ կարգով՝ առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարությունների գանձել Հաճախորդի Հաշվից: Ընդ որում, Բանկն իրավունք ունի փոխարկել արտարժույթային Հաշվից ելքագրման ենթակա գումարը Բանկի սահմանած փոխարժեքով և գանձել փոխարկման համար Սակագներով սահմանված վճարը: Այն դեպքում երբ համապատասխան ծառայությունը Բանկի կամքից անկախ հանգամանքներում չի մատուցվել և վճարված գումարը՝ այդ թվում գանձված միջնորդավճարը ենթակա են վերադարձման Հաճախորդին, Հաճախորդի՝ համապատասխան արժույթով հաշվի բացակայության դեպքում Բանկն իրավունք ունի այդ գումարները փոխարկել այն արժույթի, որով Հաճախորդի անվամբ առկա է հաշիվ Բանկում՝ համաձայն փոխարկման պահին Բանկում սահմանված փոխարժեքի և փոխանցել այդ հաշվին:

3.17 Կողմերն ընդունում են, որ Պայմաններով սահմանված դեպքերում էլեկտրոնային եղանակով Հաճախորդին ներկայացվող փաստաթղթերը և տվյալներն ունեն կողմերի ստորագրությամբ ամրագրված թղթային բնօրինակ փաստաթղթի ուժ և նույն իրավական նշանակությունը, համարվում են պաշտոնապես փոխանցված Հաճախորդին և հիմք են հանդիսանում Հաճախորդի Հաշիվներով գործողություններ կատարելու համար: Այն դեպքում, երբ փաստաթղթերի ներկայացումը իրականացվում է Հեռակառավարման համակարգերի միջոցով՝ սույն կետով սահմանված դրույթները վերաբերում են նաև Հաճախորդից նշված համակարգերի միջոցով ստացվող փաստաթղթերին: Ընդ որում, սույն կետում նշված եղանակներով Հաճախորդին տրամադրվող (Հաճախորդից ստացվող) տվյալների (տեղեկատվության) հիման վրա կատարվող գործողություններից (որոշակի գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալուց) բխող իրավական հետևանքների դիսկը, հնարավոր վնասները, կորուստները և ծախսերը կրում է Հաճախորդը:

3.18 Կողմերն ընդունում են, որ Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ առանց որևէ պատճառաբանության հրաժարվել Դիմում-պայմանագրով վարկային բյուրոյին հարցում կատարելու վերաբերյալ իր կողմից տրված համաձայնությունից՝ Բանկին ներկայացնելով համապատասխան թղթային գրավոր դիմում:

3.19 Եթե Բանկը ստացել է որևէ տեղեկություն, որ Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված Հաճախորդի հաղորդակցման տվյալները, այդ թվում՝ հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե,



բնակության հասցե և այլն, Հաճախորդին այլևս չի պատկանում, ապա Բանկն իրավունք ունի, իսկ Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը Բանկի կողմից միակողմանիորեն դադարեցնել տվյալ հաղորդակցման միջոցներով Հաճախորդին հաղորդագրությունների, ծանուցումների կամ պայմանագրով կամ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկությունների ուղարկումը: Սույն կետով սահմանված դեպքում հաղորդագրությունների(ծանուցումների) չուղարկման պարագայում Հաճախորդն ընդունում է, որ Բանկին չի ներկայացնելու դրանց չստացման հետ կապված պահանջներ:

Հաճախորդը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Բանկը մշակի (հավաքագրում, ամրագրում, մուտքագրում, համակարգում, պահպանում, օգտագործում և այլն) իր անձնական տվյալները, մասնավորապես, անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշի կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Հաճախորդի ինքնությունը համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, Բանկի հետ պայմանագրեր կնքելու, հետագայում Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու, Բանկի կողմից անցկացվող ակցիաների (առաջարկների), այլ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Սույն կետի ուժով Հաճախորդը լիազորում է Բանկին իրեն վերաբերելի ցանկացած տեղեկություն, որը հասանելի է դարձել Բանկին, ներառյալ իր անձնական տվյալները, տրամադրել այլ կազմակերպություններին, այդ թվում՝ Բանկի հետ համագործակցող, որոնց կողմից մատուցվող ծառայություններից օգտվում է Հաճախորդը, և Բանկի գործակալներին, այդ թվում՝ վարկային բյուրոներին, ապահովագրական ընկերություններին կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և/կամ այլ անձանց պատկանող տեղեկատվական համակարգերին, տեղեկատվական ընկերություններին (այդ թվում, սակայն չսահմանափակվելով՝ «Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամ»-ին, Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակին (այսուհետ՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ)), նշված տեղեկությունները ստուգելու, վարկային պատմությունը պարզելու և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ապահովվածություն ստանալու համար: Միաժամանակ Հաճախորդը լիազորում է Բանկին այլ ընկերություններից ու կազմակերպություններից, ինչպես նաև իր աշխատանքային վայրից ստանալ իր անձնական տվյալները, ինչպես նաև տալիս է իր համաձայնությունը «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի միջոցով իր անձնական տվյալների վերաբերյալ հարցում կատարելու համար:

Հաճախորդը հավաստում է, որ գիտակցում է, որ տրամադրված տեղեկությունները և տվյալները, կախված դրանց բովանդակությունից, կարող են ազդել Բանկի կողմից կայացված համապատասխան որոշման վրա:

3.19.1 Անձնական տվյալների մշակման համաձայնությունը համարվում է Հաճախորդի կողմից տրված, և Բանկը ստանում է Հաճախորդի անձնական տվյալները մշակելու իրավունք՝

- 1) Հաճախորդի՝ Բանկ դիմելու պահից,
- 2) Հաճախորդի և Բանկի միջև կնքված պայմանագրերի գործողության ընթացքում այդ պայմանագրերով սահմանված գործողությունների կատարման նպատակով,
- 3) ինչպես նաև «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն Բանկի հետ համագործակցող կազմակերպություններին/անհատներին տրամադրելու նպատակով, պայմանով, որ դա անհրաժեշտ է Բանկին համապատասխան ծառայությունը մատուցելու և/կամ Բանկի համար աշխատանքներ կատարելու և/կամ գույք ձեռքբերելու համար և/կամ բոլոր այն դեպքերում, երբ այդ տվյալների մշակման պահանջն ուղղակիորեն սահմանված է օրենքով:

3.19.2 Հաճախորդի կողմից անձնական տվյալների մշակման մասին համաձայնության գրավոր հետ կանչման, կամ անձնական տվյալների ուղղում կամ ոչնչացում (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար) կատարելու պահանջ ներկայացնելու դեպքում՝ Բանկը պարտավորվում է դադարեցնել անձնական տվյալների մշակման գործողությունները կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Հաճախորդի և Բանկի միջև առկա չեն չկատարված պարտավորություններ և բացակայում են գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես Հաճախորդի և Բանկի միջև պայմանագրային հարաբերությունները ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Հաճախորդի անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում Հաճախորդի անձնական տվյալները դադարում են մշակվել Բանկի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:



3.19.3 Անձնական տվյալների մշակման համաձայնությունը տրվում է պայմանագրերի գործողության ողջ ժամանակահատվածի համար, կամ տվյալներ մշակելու նպատակներն իրականացնելու համար օբյեկտիվորեն անհրաժեշտ ժամկետով:

3.19.4 Սույն կետի ուժով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Բանկի կողմից հարցում կատարվի «ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին և վերջինիս լիազորում է Բանկին տրամադրել իր ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք Բանկի կողմից կարող են հաշվի առնվել.

1. վարկային (փոխառության և այլն) պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում կայացնելիս (սույն կետը պարտադիր պայման է վարկային հայտ ներկայացնելիս),
2. Մոնիթորինգ իրականացնելիս,
3. Այլ ծառայություններ առաջարկելիս:

Ինչպես նաև տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Բանկի կողմից Հաճախորդի հետ պայմանագիր կնքելու դեպքում տվյալ պայմանագրի գործողության ողջ ընթացքում ցանկացած պահի, առանց Հաճախորդին նախապես տեղյակ պահելու, «ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ն Բանկին տրամադրի իր ապագայում առաջացող ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ:

Հաճախորդը սույնով տեղեկացվում է, որ վարկային հարցումների քանակը կարող է բացասական ազդեցություն ունենալ վարկային ամփոփ գնահատականի վրա: Եթե հարցումը կատարվում է մոնիթորինգի շրջանակներում, ապա այն բացասական ազդեցություն չի ունենում:

4. Բանկային հաշիվներ

4.1 Հաշիվները բացվում են Բանկի կողմից սահմանված փաստաթղթերը ներկայացվելու դեպքում՝ Բանկի կողմից սահմանված օրինակելի ձևի Դիմում-պայմանագրի, պայմանագրի կամ Բանկի կողմից սահմանված այլ տիպային փաստաթղթի հիման վրա: Սույն Պայմանները, Սակագները, ինչպես նաև՝ տվյալ տեսակի Հաշվի առանձնահատկությունները կարգավորող Բանկի կողմից ընդունված այլ փաստաթղթերը միասին կազմում են Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

4.2 Արժույթները, որոնցով կարող են բացվել Հաշիվները, և համապատասխան արժույթով բացված Հաշվով իրականացվող գործառնությունների տեսակները սահմանվում են Բանկի կողմից: Յուրաքանչյուր Հաշիվ սպասարկում է միայն մեկ արժույթ, եթե այլ բան սահմանված չէ Բանկի կողմից:

4.3 Հաշվի մնացորդի նկատմամբ տոկոսները հաշվարկվում և վճարվում են համաձայն Բանկում գործող Սակագների, եթե այլ բան սահմանված չէ տվյալ տեսակի Հաշվի հատուկ պայմանագրերով, կանոններով և/կամ պայմաններով:

4.4 Բանկը Հաշվից դրամական միջոցները դուրս է գրում Հաճախորդի Հաշվին առկա դրամական միջոցների սահմաններում: Բանկը իրավասու է նաև մերժել Հաճախորդի հանձնարարականը այն ներկայացնելու պահին հաճախորդի հաշվին գործարքը կատարելու և/կամ Սակագներով սահմանված գումարները գանձելու համար գումարի անբավարության դեպքում: Այդուհանդերձ, Հաշվից միջոցներ դուրսգրելու կարգադրությունները Բանկը կարող է ընդունել կատարման՝ անկախ կարգադրություններում նշված գումարների չափերից և Հաշվին դրամական միջոցների առկայությունից Հաճախորդի կողմից Բանկին տրված պարբերական կամ այլ վճարումների հանձնարարականի հիման վրա: Ընդ որում, Հաճախորդի Հաշվի անբավարար մնացորդի դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում վճարման հանձնարարականի չկատարման համար:

4.5 Հաճախորդի հետ կնքված վարկային կամ այլ պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով Բանկը կարող է պայմանագրի համաձայն վարկավորել Հաճախորդի բանկային Հաշիվը՝ հնարավորություն ընձեռելով գումար դուրսգրել Հաշվին դրամական միջոցների բացակայության պայմաններում: Հաշվին դրամական միջոցների բավարար լինելու փաստը որոշվում է Բանկի կողմից:

4.6 Բանկը Հաճախորդի Հաշվին մուտք եղած դրամական միջոցները մուտքագրում է ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ բանկային օրը, եթե այլ բան սահմանված չէ այլ պայմանագրերով, կանոններով և/կամ պայմաններով:

4.7 Հաշիվը տնօրինելու Հաճախորդի իրավունքը կարող է սահմանափակվել առանց Հաճախորդին տեղեկացնելու՝ Հայաստանի Հանրապետության դատարանների և այլ իրավասու մարմինների որոշմամբ, ինչպես նաև՝ Բանկի որոշման հիման վրա, եթե Հաճախորդը խախտում է Բանկի առջև ստանձնած վարկային կամ այլ պարտավորությունները:

4.8 Եթե Հաշվին փոխանցվել են դրամական միջոցներ, որոնք տարբերվում են Հաշվի արժույթից, ապա Բանկը Հաշվին մուտքագրում է դրան համարժեք գումար՝ հաշվարկված Բանկի կողմից անկանխիկ գործարքների համար տվյալ գործառնության իրականացման պահի դրությամբ գործող փոխարժեքով:



4.9 Բանկն ունի գրավի իրավունք Հաշվին առկա բոլոր միջոցների նկատմամբ՝ որպես Բանկի և Հաճախորդի միջև առկա և/կամ հետագայում առաջացող Հաճախորդի բոլոր պարտավորությունների կատարման ապահովում, եթե այլ բան սահմանված չէ այլ պայմանագրերով, կանոններով և/կամ պայմաններով: Հաշվին առկա դրամական միջոցները գրավադրված չափով համարվում են համապատասխան դեպոզիտային հաշվում պահվող դրամական միջոցներ, և Բանկի գրավի իրավունքը գործում է նշված դրամական միջոցների նկատմամբ: Դեպոզիտային հաշիվ է համարվում Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրում նշված հաշվեհամարը: Հաճախորդը չի կարող գրավ դնել Հաշվին առկա և ապագայում մուտքագրվող միջոցները՝ առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության:

Գրավի իրավունքի ուժով Բանկը կարող է Հաշվին առկա և ապագայում մուտքագրվող դրամական միջոցների վրա կիրառել սահմանափակում (արգելադրում) Հաճախորդի կողմից Բանկի հանդեպ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման կամ Հաճախորդի գույքի (այդ թվում՝ դրամական միջոցների) կամ դրանց մի զգալի մասի վրա օրենքով սահմանված կարգով կալանք կամ արգելանք դրվելու կամ այդպիսի արգելանքների կիրառման էական հավանականության առաջացման, ինչպես նաև այլ դեպքերում, երբ առկա են այլ հիմքեր, որոնք Բանկի կարծիքով կարող են վտանգել Բանկի պարտավորությունները Հաճախորդի կողմից կատարելու ունակությունը:

Բանկն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկա դրամական միջոցների վրա բռնագանձում տարածելու և իրացնելու դրանք, այդ թվում՝ դրամական միջոցները խախտված պարտավորության համապատասխան չափի դիմաց անակցեպտ գանձելու և Պայմանագրից բխող պարտավորությունների մարմանն ուղղելու եղանակով:

4.10 Հաճախորդի Հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, որոնց գումարը բավարար է հաշվին ներկայացված բոլոր պահանջները բավարարելու համար, այդ միջոցները դուրս են գրվում Հաճախորդի կարգադրությունները և դուրսգրման այլ փաստաթղթերը մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականություն), եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

4.11 Հաճախորդի Հաշվում դրամական միջոցների անբավարարության դեպքում դրամական միջոցները դուրս են գրվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաջորդականությամբ: Ընդ որում, եթե Հաճախորդի հաշվին արգելանք դրված չէ, առաջնահերթության իրավունքով Բանկը գանձում է իր նկատմամբ չմարված Հաճախորդի ժամկետանց պարտավորությունները:

4.12 Հաճախորդը սույնով անհետկանչելիորեն լիազորում և կարգադրում է Բանկին անակցեպտ կերպով (առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարության) գանձել և պատշաճ ստացողներին փոխանցել Հաճախորդի Հաշվին սխալմամբ (այդ թվում՝ օրենքի խախտմամբ) մուտքագրված, ինչպես նաև՝ սխալմամբ չեղքագրված կամ այլ կերպ Բանկի գործողությունների արդյունքում Հաճախորդի կողմից անհիմն ձեռքբերված կամ խնայված բոլոր գումարները:

4.13 Հաճախորդը սույնով անհետկանչելիորեն լիազորում և կարգադրում է Բանկին Հաճախորդի բոլոր Հաշիվներից գանձել (առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարության) Բանկին վճարման ենթակա բոլոր պարտավորությունների գումարները՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով Բանկից ստացված և մարման ժամկետը լրացած վարկերի մարման գումարները, ինչպես նաև՝ Բանկի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վերջինիս վճարման ենթակա գումարները:

4.14 Հաճախորդն իրավունք ունի կարգադրել Բանկին Հաշվից դրամական միջոցներ դուրս գրել երրորդ անձանց պահանջով: Բանկն ընդունում է այդ կարգադրությունները, պայմանով, որ դրանցում գրավոր նշվեն անհրաժեշտ տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռում համապատասխան պահանջը ներկայացնելիս՝ նույնականացնել նման պահանջի իրավունք ունեցող երրորդ անձին: Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց հետ Հաճախորդի կնքած գործարքներից բխող կարգադրությունները կատարելու համար:

4.15 Բանկն անակցեպտ կարգով կարող է Հաշվից դուրսգրել հարկերի և այլ պարտադիր վճարների գումարները, եթե Բանկի համար այդպիսի պարտականություն սահմանված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, դատարանի վճռով, (ներառյալ՝ կատարողական փաստաթղթերի հիման վրա դրամական միջոցների դուրսգրման հայտ (որոշում) ստանալու դեպքում):

4.16 Հաճախորդը չի կարող հետ կանչել Բանկի կողմից կատարված վճարման հանձնարարականը, եթե այլ բան նախատեսված չէ Բանկի և Հաճախորդի գրավոր համաձայնությամբ:

4.17 Եթե Բանկի և Հաճախորդի միջև համաձայնեցված է վճարման հանձնարարականի կատարման որոշակի օր, Հաճախորդը կարող է հետ կանչել վճարման հանձնարարականը մինչև հանձնարարականի կատարման օրվան նախորդող Բանկային օրվա ավարտը:



4.18 Վճարման հանձնարարականները Հաճախորդի կողմից հետ կանչելիս՝ Բանկը չի ապահովում միջոցների վերադարձը, եթե միջնորդ բանկերից և/կամ ստացողներից հնարավոր չի լինում հետ վերադարձնել միջոցները:

4.19 Հաշիվներով կատարվող գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը արձանագրվում է քաղվածքների ձևով, իսկ քաղվածքում արտացոլված տվյալները համարվում են Հաշվով կատարված գործարքների մասին պատշաճ ծանուցում և Հաճախորդի պահանջով՝ Սակագներով նախատեսված վճարի դիմաց, տրամադրվում է վերջինիս նման պահանջ ներկայացնելու հաջորդ բանկային օրը:

4.20 Օրենքով սահմանված կարգով Բանկը Ֆիզիկական անձ, այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր Հաճախորդին տրամադրում է քաղվածք առնվազն երեսնօրյա պարբերականությամբ, եթե հաշվետու ժամանակահատվածում Հաշիվը դեբետագրվել և/կամ կրեդիտագրվել է:

4.21 Կողմերն ընդունում են, որ քաղվածքները համարվում են հաստատված Հաճախորդի կողմից, եթե դրանք ստանալուց հետո 10-օրյա ժամկետում Հաճախորդը Բանկին գրավոր առարկություն չի ներկայացնում:

4.22 Բանկը պատասխանատվություն չի կրում քաղվածքներն ուղարկելիս բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների բացահայտման համար, եթե դա տեղի է ունեցել կապի կազմակերպությունների մեղքով, ինչպես նաև՝ քաղվածքների կորուստի կամ հափշտակության, կամ Բանկի հսկողությունից դուրս գտնվող այլ գործոնի ազդեցության հետևանքով:

4.23 Հաշվից միջոցներ դուրս գրելու Հաճախորդի իրավունքը կարող է սահմանափակվել, օրենքով և այլ իրավական ակտերով դրա համար լիազորված անձանց/մարմինների պահանջով, ինչպես նաև Հաճախորդի հետ կնքված գործարքներով նախատեսված դեպքերում և կարգով: Այդ դեպքերում Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի Հաշվից միջոցներ դուրս գրելու իրավունքը սահմանափակելու համար:

4.24 Բանկն իրավունք ունի դադարեցնել, կասեցնել և/կամ սահմանափակել այն Հաշիվների սպասարկումը, որոնցով գործառնություններ չեն իրականացվել 12 (տասներկու) օրացուցային ամիս անընդմեջ, ընդ որում, սույն կետի և 4.25-րդ կետի 1-ին ենթակետի իմաստով հաշվով գործառնություններ չեն համարվում Բանկի կողմից հաշվի սպասարկման վճարի կամ Բանկի առջև Հաճախորդի այլ պարտավորությունների դիմաց համապատասխան դրամական միջոցների գանձման (հաշվանցի), ինչպես նաև՝ դատարանի վճռի հիման վրա հաշվից միջոցների բռնագանձման դեպքերը: Այդ Հաշիվները կարող են դարձյալ ակտիվացվել Հաճախորդի կողմից ներկայացված դիմումի հիման վրա՝ Սակագներով նախատեսված վճարները վճարելու պայմանով:

4.25 Բանկն իրավունք ունի առանց դատարանի դիմելու միակողմանիորեն փակել Հաճախորդի Հաշիվները, եթե

4.25.1 Բանկում բացված Հաճախորդի բոլոր Հաշիվների մնացորդները զրոյական են և դրանցով գործարքներ չեն կատարվել վերջին մեկ օրացուցային տարվա ընթացքում: Ընդ որում, Հաշվով գործարքներ չեն համարվում Բանկի նախաձեռնությամբ կատարված գործարքները՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով միջնորդավճարների գանձումը, տոկոսագումարների վճարումը:

4.25.2 Հաճախորդը չարաշահում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունները և/կամ դրանցից օգտվում է դրանց նպատակային նշանակության բազմակի կամ Բանկի կարծիքով էական խախտումներով, ինչպես նաև ծառայություններն օգտագործում է ոչ իրավաչափ եկամուտներ ստանալու նպատակով կամ միտումով, կամ Բանկի համար լրացուցիչ ծախսեր կամ դժվարություններ ստեղծելով կամ ստեղծելու միտումով:

4.25.3 Հաճախորդը չի կատարում Բանկի օրինական պահանջները, այդ թվում՝ ժամանակին չի կատարում (վճարում) Բանկի նկատմամբ պարտավորությունները, չի տրամադրում, թերի է տրամադրում Բանկի կողմից պահանջվող տեղեկատվությունը և (կամ) փաստաթղթերը, ինչպես նաև տրամադրում է Բանկի կողմից սահմանված պահանջներին և (կամ) օրինակելի ձևից տարբերվող փաստաթղթեր:

4.25.4 Հաճախորդը խախտում է Բանկի և իր միջև կնքված ցանկացած պայմանագրով Բանկի հանդեպ ստանձնած պարտավորությունները:

Հաճախորդի Հաշվի/Հաշիվների փակման պահից սույն կետի ուժով Դիմում-պայմանագիրը լուծելու մասին Բանկի և Հաճախորդի միջև համաձայնագիրը համարվում է կնքված: Սույն կետով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայությամբ պայմանավորված Հաշվի փակման դեպքում Հաճախորդի կրած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

4.26 Հաշիվները ենթակա չեն փակման, եթե՝

4.26.1 Հաճախորդն ունի գործող ժամկետային ավանդի պայմանագիր, և այդ Հաշիվներով կատարվում են Հաճախորդի գործող ժամկետային ավանդային պայմանագրով ավանդի ներդրման, ավանդի տոկոսագումարների վճարման և ավանդային հաշվով այլ գործարքներ,

4.26.2 մնացորդ պարունակող Հաճախորդի Հաշվի վրա առկա է արգելանք՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, դատարանի և հարկային մարմինների որոշումներով, և/կամ



4.26.3 հաշիվը ծանրաբեռնված է գրավով և չկա հաշիվը փակելու վերաբերյալ գրավառուի համաձայնությունը:

4.27 Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ փակել Հաշիվը՝ Բանկին սահմանված ձևի դիմում ներկայացնելով: Բանկը փակում է Հաշիվը, պայմանով, որ առկա չեն Հաշվի նկատմամբ արգելանքներ կամ Հաշվի փակումը սահմանափակող այլ գործոններ: Հաշիվը փակելու դեպքում Բանկը՝ Հաճախորդի Հաշվին առկա գումարից նախապես մարում է Բանկի նկատմամբ Հաճախորդի այդ պահին ունեցած պարտավորությունները: Պարտավորությունների մարումից հետո Հաշվին առկա գումարը վերադարձվում է Հաճախորդին՝ հաշվի փակման դիմումում նշված եղանակով:

4.28 Հաշվի բացման հետ կապված Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրից բխող հարաբերությունները կարգավորվում են ավելի ուշ կնքված պայմանագրով:

4.29 Հաճախորդը Բանկին տալիս է իր թույլատվությունն ակտիվացնել ինքնասպասարկման սարքերից Հաճախորդի հաշիվներին մուտքեր կատարելու հնարավորությունը, գիտակցում է դրա հնարավոր հետանքները և կրում է դրա համար ամբողջական պատասխանատվություն:

5. Դրամարկղային ծառայությունների մատուցում

5.1 Բանկը Հաճախորդներին դրամարկղային ծառայությունները մատուցում է Սակագների համապատասխան:

5.2 Բանկի կողմից մատուցվող դրամարկղային ծառայություններից օգտվելու դեպքում Հաճախորդն իրավունք ունի անմիջապես տեղում ստուգել գործարքի արդյունքում ձևավորվող վճարային փաստաթուղթը և իրականացնել կանխիկ դրամական միջոցների հաշվարկ, և անճշտությունների հայտնաբերման դեպքում հայտնել Բանկին այդ մասին: Սույն կետով սահմանված իրավունքից չօգտվելու կամ, հետագայում գործարքը բողոքարկվելու դեպքում, Բանկի տեսաձայնագրման համակարգի միջոցով կատարված ծայնագրություններով անճշտության պատճառները չպարզվելու դեպքում, անճշտություններ բացասական հետևանքները կրում է հաճախորդը: Սույն կետի իմաստով անճշտություն է համարվում կանխիկով գործառնություն իրականացնելու արդյունքում ձևավորված ավելցուկը, պակասորդը, անվճարունակ և կեղծ թղթադրամների, մետաղադրամների հայտնաբերումը, վճարային փաստաթղթերում առկա սխալները:

5.3 Շրջանառության մեջ 10 դրամից փոքր դրամական միավորների բացակայությամբ պայմանավորված Բանկը կանխիկ վճարվող դրամական միջոցների մասով իրականացնում է թվաբանական կլորացում հետևյալ կարգով. 5 (հինգ) ՀՀ դրամից մեծ կամ հավասար գումարները կլորացվում են դեպի վերև՝ առաջին տասնորդական, իսկ 5 (հինգ) ՀՀ դրամից փոքր գումարները կլորացվում դեպի ներքև՝ առաջին տասնորդական:

6. Արտարժույթի փոխարկում

6.1 Բանկում արտարժույթի փոխարկումը կատարվում է կանխիկ և անկանխիկ եղանակներով՝ Բանկի Գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում: Բանկի հաճախորդները բանկային ծառայությունների հեռահար սպասարկման համակարգով կամ Բանկի կողմից առաջարկվող ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի միջոցով իրենց ՀՀ դրամով կամ արժույթային արժեքներով բանկային հաշիվներից կարող են իրականացնել անկանխիկ արտարժույթային փոխարկումներ 24/7 ռեժիմով:

6.2 Բանկում արտարժույթի փոխարկումն իրականացվում է գործարքի կատարման պահին Բանկում գործող փոխարժեքով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

6.3 Բանկն իր պաշտոնական կայքէջում հրապարակում է Բանկի կողմից փոխարկման համար ընդունելի արտարժույթի տեսակները, դրանց փոխարժեքները և ծավալները (եթե առկա է նման սահմանափակում):

6.4 Բանկային հաշիվներով փոխարկումների համար օգտագործվում են անկանխիկ արժույթային արժեքներով առք ու վաճառքի համար հաստատված գործող փոխարժեքները:

6.5 Սույն Պայմաններով սահմանված Բանկային օրվա ժամերից դուրս ներկայացված անկանխիկ եղանակով փոխարկման հայտերի մասով Հաճախորդների գործարքները Բանկի կողմից հաստատվում կամ մերժվում են մինչև հաջորդ, իսկ ժամը 00:00-ից մինչև 09:15-ը ներկայացված հայտերի դեպքում՝ տվյալ աշխատանքային օրը ժամը 12:00:



7. Կառուցապատողի հատուկ հաշիվներ

7.1 Կառուցապատողի Հատուկ հաշիվների վրա տարածվում են սույն Պայմանների 4-րդ գլխով սահմանված Հաշիվներին վերաբերվող բոլոր դրույթները այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն գլխի դրույթներին:

7.2 Կառուցապատողի հատուկ հաշիվները բացվում են Բանկի կողմից սահմանված փաստաթղթերը ներկայացվելու դեպքում՝ Բանկի սահմանած ձևով Դիմում-պայմանագրի, պայմանագրի կամ Բանկի կողմից սահմանված այլ տիպային փաստաթղթի հիման վրա: Սույն Պայմանները, Սակագները, ինչպես նաև՝ տվյալ տեսակի Հաշվի առանձնահատկությունները կարգավորող Բանկի կողմից ընդունված այլ փաստաթղթերը միասին կազմում են Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

7.3 Կառուցապատողի Հիմնական Հատուկ հաշիվը բացվում է ՀՀ դրամով: Կառուցապատողի համար կարող է բացվել նաև Կառուցապատողի Լրացուցիչ Հատուկ հաշիվ (Լրացուցիչ հատուկ հաշիվ բացվելու դեպքում՝ ՀՀ դրամով Հատուկ հաշիվը այսուհետ՝ նաև Հատուկ հիմնական հաշիվ) Բանկի կողմից սահմանված նաև այլ արժույթներով, որով տվյալ Գնորդի մասով գործառնություն է կատարվում, եթե Կառուցապատողի և Գնորդի միջև կնքված Գնման իրավունքի պայմանագրում առկա է համապատասխան համաձայնություն Կառուցապատողի Հիմնական Հատուկ հաշվին մուտքագրվող գումարները համապատասխան արտարժույթի փոխարկման և Կառուցապատողի Լրացուցիչ հատուկ հաշվին մուտքագրման վերաբերյալ: Հատուկ հաշվով իրականացվող գործառնությունների տեսակները սահմանվում են Բանկի կողմից ՀՀ օրենսդրության և Կառուցապատողի հետ կնքված պայմանագրին համաձայն: Յուրաքանչյուր Հատուկ հաշիվ սպասարկում է միայն մեկ արժույթ:

7.4 Կառուցապատողի Հատուկ հաշվի մնացորդի նկատմամբ տոկոսները հաշվարկվում և վճարվում են համաձայն Բանկում գործող Սակագների՝ մուտքագրվելով Կառուցապատողի համար Բանկում բացված համապատասխան արժույթով Հաշիվներին: Ընդ որում, եթե Կառուցապատողը Բանկում միևնույն արժույթով մի քանի հաշիվ ունի, Բանկը տոկոսների վճարման հաշիվը ընտրում է իր հայեցողությամբ, եթե Կառուցապատողը գրավոր տոկոսների վճարման համապատասխան արժույթով կոնկրետ հաշիվ չի նշում:

7.5 Բանկը Կառուցապատողի Հատուկ հաշվից միջոցները դուրս է գրում Կառուցապատողի Հատուկ հաշվին առկա դրամական միջոցների սահմաններում: Հատուկ հաշվից դրամական միջոցները կարող են դուրս գրվել հետևյալ դեպքերում՝

7.5.1 Կառուցապատողի կարգադրությամբ՝ Կառուցապատողի Հիմնական հաշվից Կառուցապատողի Լրացուցիչ Հատուկ հաշվին փոխանցման նպատակով, եթե առկա է սույն Պայմանների 7.3 կետով սահմանված գրավոր համաձայնությունը Կառուցապատողի և Գնորդի միջև,

7.5.2 Կառուցապատողի կարգադրությամբ Հաշվին փոխանցման նպատակով՝

7.5.2.1 Գնորդի կողմից մուտքագրված և Հատուկ կամ Լրացուցիչ հաշվում առկա գումարի չափով, եթե ձեռքբերվող գույքի մասով Կառուցապատողի և Գնորդի միջև կնքվել է սեփականության իրավունքի փոխանցման ակտ և կատարվել է Գնորդի սեփականության իրավունքի պետական գրանցում և գրանցվել է ձեռքբերվող գույքի նկատմամբ Բանկի գրավի իրավունքը, եթե Գնորդը սեփականության իրավունքի պետական գրանցման պահին ձեռքբերվող գույքի մասով վարկային պարտավորություններ ունի Բանկի նկատմամբ:

7.5.2.2 Գնորդի կողմից մուտքագրված գումարի մի մասի չափով, եթե Կառուցապատողի և Գնորդի միջև կնքված պայմանագրով նախատեսվել է Կառուցապատողի Հատուկ հաշվին մուտքագրվող գումարների գրավադրում հոգուտ Գնորդի կամ Գնորդի վարկատուի և Կառուցապատողի և Գնորդի միջև կնքված պայմանագրով կամ դրա փոփոխություններով սահմանվել է Գնորդի կողմից մուտքագրված գումարի այդ մասի նկատմամբ գրավի իրավունքի վաղաժամկետ դադարեցում: Ընդ որում, հոգուտ Գնորդի վարկատուի գրավադրման դեպքում Կառուցապատողը և Գնորդը, նախքան Գնորդի կողմից Հատուկ հաշվին մուտքագրված գումարի մասը գրավից ազատելու մասին համաձայնությունը կնքելը, պետք է ապահովեն այդ կապակցությամբ Գնորդի վարկատուի համաձայնությունը:

7.5.2.3 Գնորդի կողմից մուտքագրված գումարի նկատմամբ հաշվարկված տուժանքի չափով՝ նվազեցված Կառուցապատողի Հաշվին գրավից ազատման հիմքով արդեն իսկ փոխանցված գումարի չափով, եթե շինարարության ավարտի պետական գրանցումից հետո վեցամսյա ժամկետում անշարժ գույքի սեփականության իրավունքի փոխանցման ակտը չի կնքվել, Գնման իրավունքի պայմանագիրը վաղաժամկետ լուծվել է կամ անվավեր է ճանաչվել և այդ հանգամանքների համար պատասխանատու է Գնորդը: Սույն մասում նշված հանգամանքները համապատասխանաբար հաստատվում են.

ա) Սեփականության իրավունքի փոխանցման ակտը չկնքվելու դեպքում Կառուցապատողի կողմից ներկայացված պահանջով և այն Գնորդին ներկայացնելու պահից 5 օրվա ընթացքում Գնորդի կողմից իր պատասխանատվությունը բացառող հանգամանքները Բանկին և Կառուցապատողին



չներկայացնելու հանգամանքով: Ընդ որում, Գնորդի կողմից առարկություն ներկայացվելու դեպքում Կառուցապատողի և Գնորդի միջև վեճը լուծվում է դատական կարգով, իսկ տուժանքի փոխանցման հիմք է հանդիսանում օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, որը պարունակում է վճարման ենթակա տուժանքի հստակ չափը:

բ) Կառուցապատողի և Գնորդի միջև կնքված Գնման իրավունքի պայմանագիրը լուծելու մասին համաձայնագրով և այդ համաձայնագրի պետական գրանցման մասին Կադաստրի կոմիտեի կողմից ստացված տեղեկատվությամբ: Ընդ որում, այդ համաձայնագրում պետք է հստակ սահմանված լինի վճարման ենթակա տուժանքի չափը:

գ) Կառուցապատողի և Գնորդի միջև կնքված Գնման իրավունքի պայմանագիրը լուծելու կամ անվավեր ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, որը պարունակում է վճարման ենթակա տուժանքի հստակ չափը:

7.5.3 Առանց Կառուցապատողի կարգադրության Գնորդի պահանջով Գնորդին կանխիկ տրամադրման կամ Գնորդի/գնորդի վարկատուի բանկային հաշվին փոխանցման միջոցով, եթե շինարարության ավարտի պետական գրանցման ամսաթվից հետո վեցամսյա ժամկետում անշարժ գույքի սեփականության իրավունքի փոխանցման ակտը չի կնքվել կամ Գնման իրավունքի պայմանագիրը վաղաժամկետ լուծվել է կամ անվավեր է ճանաչվել: Ընդ որում, նշված հանգամանքների համար Գնորդի պատասխանատու լինելու և Կառուցապատողի օգտին Գնորդի նկատմամբ տուժանք նախատեսված լինելու դեպքում փոխանցման գումարը չի կարող ավել լինել մուտքագրված գումարի և դրա նկատմամբ կիրառված տուժանքի տարբերության չափից: Սույն մասում նշված հանգամանքները համապատասխանաբար հաստատվում են.

ա) Սեփականության իրավունքի փոխանցման ակտը չկնքվելու դեպքում Գնորդի ներկայացրած պահանջով և այն Կառուցապատողին ներկայացնելու պահից 5 օրվա ընթացքում Կառուցապատողի կողմից սեփականության իրավունքի փոխանցման ակտը Բանկին և Գնորդին չներկայացվելու հանգամանքով: Ընդ որում, Կառուցապատողը սույնով հայտատարում է, որ այս կարգի պահպանմամբ Գնորդին վճարում կատարելու դեպքում Բանկին ազատում է ցանկացած իր բոլոր հնարավոր և իրական պահանջներից: Սույն ենթակետով ստացված պահանջի շրջանակում Կառուցապատողի կողմից տուժանքի վճարման պահանջ ներկայացվելու դեպքում տուժանքի մասով գործընթացը շարունակվում է 7.5.2 կետում սահմանված կարգով:

բ) Կառուցապատողի և Գնորդի միջև կնքված Գնման իրավունքի պայմանագիրը լուծելու մասին համաձայնագրով և այդ համաձայնագրի պետական գրանցման մասին Կադաստրի կոմիտեի կողմից տեղեկատվությամբ:

գ) Կառուցապատողի և Գնորդի միջև կնքված Գնման իրավունքի պայմանագիրը լուծելու կամ անվավեր ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:

7.5.4 Առանց Կառուցապատողի կարգադրության՝ Կառուցապատողի շինարարության հասցեում հողամասի սեփականատիրոջ իրավունքները լրիվ կամ մասնակի ձեռք բերած այլ կառուցապատողի համար բանկում, գանձապետարանում կամ նոտարի դեպոզիտում գործող կառուցապատողի հատուկ հաշվին՝ տվյալ կառուցապատողի գույքային իրավունքները գրանցելու մասին ապացույց ներկայացնելու դեպքում ինչը հավաստվում է գույքային իրավունքի գրանցումը հիմնավորող փաստաթղթերով (սեփականության վկայական) և բացված հատուկ հաշվի վերաբերյալ տեղեկանքում (եթե հատուկ հաշիվը չի գտնվում Բանկում), որը առնվազն պարունակում է նշում հաշվի համարի, արժույթի, կառուցապատողին և հողամասը նույնականացնող տվյալների վերաբերյալ՝ տվյալ Կառուցապատողի ձեռք բերած հողամասի վրա կառուցվող շենքում գնման իրավունք ունեցող Գնորդների կուտակած կանխավճարների գրավադրված մնացորդի չափով:

7.6 Եթե Հատուկ հաշվին գնորդի կողմից մուտքագրված գումարների վերադարձը Գնորդին իրականացվում է ՀՀ դրամով՝ Կառուցապատողի Հիմնական հատուկ հաշվից, Կառուցապատողը պարտավորվում է ապահովել, որ իր և Գնորդի միջև կնքված Գնման իրավունքի պայմանագրում առկա լինի համաձայնություն առ այն, որ Լրացուցիչ Հատուկ հաշվում առկա արտարժույթը ՀՀ դրամի փոխարկելու դեպքում սկզբնական մուտքագրված գումարի չափից պակաս լինելու դեպքում Բանկին ազատում է այդ կապակցությամբ Գնորդի ցանկացած պահանջներից, իսկ նման պահանջների դեպքում պարտավորվում է Բանկի փոխարեն և նրա անունից լրիվ պատասխանատվություն կրել, իսկ Բանկի կողմից այդ պահանջները բավաճարելու դեպքում անվերապահորեն հատուցել Բանկի կրած բոլոր ծախսերը:

7.7 Կառուցապատողի և Գնորդի միջև կնքված Գնման իրավունքի պայմանագրում համապատասխան համաձայնության առկայության դեպքում Կառուցապատողի Հիմնական Հատուկ հաշվին մուտքագրվող գումարները կարող են Կառուցապատողի հանձնարարության համաձայն առավելագույնը մեկ բանկային օրվա ընթացքում Սակագների համաձայն փոխարկվել Կառուցապատողի Լրացուցիչ Հատուկ հաշվի արժույթի և մուտքագրվել Կառուցապատողի Լրացուցիչ Հատուկ հաշվին:



7.8 Կառուցապատողի հատուկ հաշվին անշարժ գույքի ձեռքբերման նպատակով դրամական միջոցների մուտքագրումը իրականացվում է Կառուցապատողի կողմից տվյալ անշարժ գույքի Գնման իրավունքի պայմանագրի նոտարական կարգով վավերացված պայմանագրի պատճենը և այդ պայմանագրի պետական գրանցման վկայականի պատճենը Բանկ ներկայացնելուց հետո:

7.9 Կառուցապատողի հատուկ հաշվին անշարժ գույքի ձեռքբերման նպատակով դրամական միջոցների առաջին մուտքագրումը իրականացվում է անձամբ Գնորդի կողմից Բանկի սահմանված ձևաչափով հայտարարագրի ներկայացման դեպքում:

7.10 Կառուցապատողի հատուկ հաշվին մուտքագրվող դրամական միջոցների մուտքագրման նպատակը դաշտը պետք է պարտադիր պարունակի Գնորդի անվանումը, Գնման իրավունքի պայմանագրի կողը, անշարժ գույքի նախագծային համարը ըստ Կառուցապատողի կողմից Բանկին ներկայացված ցանկի, անշարժ գույքի հասցեն, ինչպես նաև՝ վճարման առաջին կամ հերթական լինելու մասին նշում:

7.11 Սույն պայմանների 7.8, 7.9, և 7.10 կետերում առկա պայմանների չպահպանման դեպքում Բանկը չի իրականացնում դրամական միջոցների մուտքագրում Կառուցապատողի հատուկ հաշվին և նախաձեռնում է դրանց վերադարձը Գնորդին: Ընդ որում, մինչև այդ գումարների վերադարձը Գնորդին այդ գումարների Բանկում գտնվելու համար որևէ տոկոս կամ տուժանք չի վճարվում:

7.12 Կառուցապատողի Հիմնական հատուկ հաշվից Գնորդին գումարների վերադարձը իրականացվում է Գնորդի կողմից Բանկի սահմանված ձևաչափով պահանջ և հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու դեպքում:

7.13 Կառուցապատողի Հիմնական Հատուկ հաշվին դրամական միջոցներ կարող են մուտքագրվել միայն ՀՀ դրամով: Այլ արժույթով փոխանցված միջոցները փոխարկվում են Բանկի կողմից տվյալ գործառնության համար իրականացման պահի դրությամբ գործող փոխարժեքով և մուտքագրվում են Կառուցապատողի Հիմնական Հատուկ հաշվին:

7.14 Լրացուցիչ Հատուկ հաշվին մուտքերը կարող են իրականացվել բացառապես հիմնական Հատուկ հաշվից Սակագներով սահմանված փոխարժեքով փոխարկում իրականացնելու արդյունքում:

7.15 Բանկը դիտարկում է Կառուցապատողի Հատուկ հաշվին Գնորդների վճարած կանխավճարները որպես Գնորդի օգտին գրավադրված (գրավադրման կանխավարկած), քանի դեռ Կառուցապատողը Բանկին չի ներկայացրել ապացույցներ Հատուկ Հաշվում առկա դրամական միջոցների չգրավադրման կամ գրավի իրավունքի մասնակի կամ լրիվ դադարման մասին:

7.16 Հատուկ հաշվին մուտքագրվող բոլոր դրամական միջոցները Բանկի կողմից արգելադրվում են և հասանելի չեն Կառուցապատողին օգտագործման համար՝ բացառությամբ սույն պայմաններով և օրենքով սահմանված դեպքերի:

7.17 Բանկն ունի գրավի կամ հաջորդող գրավի (եթե Կառուցապատողի և Գնորդի միջև առկա է Հատուկ հաշվին մուտքագրվող դրամական միջոցները Գնորդի օգտին գրավադրման համաձայնություն) իրավունք Հատուկ հաշվին առկա բոլոր միջոցների նկատմամբ՝ որպես Բանկի և Կառուցապատողի միջև առկա և/կամ հետագայում առաջացող Կառուցապատողի բոլոր պարտավորությունների կատարման ապահովում, եթե այլ բան սահմանված չէ այլ պայմանագրերով, կանոններով, պայմաններով կամ օրենքով: Կառուցապատողը չի կարող Գնորդից բացի որևէ երրորդ անձի օգտին գրավ դնել Հաշվին առկա միջոցները՝ առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության:

7.18 Բանկը Սակագների համաձայն Հատուկ հաշվին գնորդի կողմից մուտքագրված գումարների վերաբերյալ Գնորդին տրամադրում է տեղեկատվություն իր կողմից մուտքագրված գումարների մուտքագրման օրերի, ելքագրումների և մնացորդի մասին՝ ըստ գույքի (գույքերի):

8. Ավանդներ

8.1 Հաճախորդը կարող է Բանկում ներդնել ավանդ՝ ավանդի գումարի նկատմամբ տոկոսներ ստանալու պայմանով: Ավանդի ներդրման պայմանները սահմանվում են Բանկի և Հաճախորդի միջև կնքվող ավանդային պայմանագրով կամ համապատասխան պայմանագրի կնքման համար հիմք հանդիսացող Բանկի կողմից սահմանված այլ տիպային փաստաթղթով (այսուհետ՝ Ավանդային պայմանագիր), որի անբաժանելի մասն են կազմում Պայմանները և տվյալ ավանդատեսակի հատուկ պայմանները:

Հաճախորդն ընդունում է, որ Համակարգը հնարավորություն է ընձեռում ավանդ ներդնելու, ավանդի գումարի ավելացում և(կամ) նվազեցում իրականացնելու նպատակով Բանկին դիմել նաև առցանց հարթակում, այդ թվում՝ Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով հեռահար եղանակով ստորագրել և Բանկ ներկայացնել Ավանդային պայմանագիր կնքելու առաջարկ-դիմումներ, կնքված պայմանագրերում փոփոխություն կատարելու առաջարկ-դիմումներ, ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր (այդ թվում՝ տեղեկություններ,



տեղեկանքներ, համաձայնություններ և այլն), ստանալ Բանկի դիրքորոշումը պայմանագիր կնքելու, պայմանագրում փոփոխություն կատարելու առաջարկ-դիմումներն ակցեպտավորելու կամ մերժելու վերաբերյալ:

Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Համակարգի միջոցով ավանդ ներդնելու նպատակով համապատասխան էջում ստորագրման ենթակա դաշտերում հավաստող նշում դնելով և/կամ համապատասխան հավաստման կոճակը սեղմելով, ամբողջությամբ համաձայնում է համապատասխան էջում, հղումում և/կամ փաստաթղթում զետեղված պայմանների, տեղեկությունների և այլ դրույթների հետ, ինչը Հաճախորդի համար առաջացնում է համապատասխան իրավունքներ, պարտականություններ և այլ իրավական հետևանքներ, և ունի նույն իրավական նշանակությունը, ինչ ձեռագիր ստորագրված փաստաթուղթը:

Համակարգի միջոցով ավանդ ներդնելու նպատակով Հաճախորդի կողմից ներկայացված Ավանդային պայմանագիր կնքելու առաջարկ-դիմումի, կնքված պայմանագրերում փոփոխություն կատարելու առաջարկ-դիմումների էլեկտրոնային տարբերակները, անհրաժեշտության դեպքում այլ փաստաթղթերն ուղարկվում են Հաճախորդի առաջարկ-դիմումում նշած էլեկտրոնային փոստի հասցեին, իսկ ավանդային հաշվի քաղվածքը հասանելի է Համակարգի համապատասխան էջում:

8.2 Ավանդի գումարը կարող է համալրվել ինչպես Հաճախորդի, այնպես էլ՝ Հաճախորդի անունով երրորդ անձանց կողմից ստացված դրամական միջոցներով: Հաճախորդի հետ Ավանդային պայմանագիր կնքելու դեպքում Բանկն իրավունք ունի հաճախորդի բանկային հաշվից ավանդի գումարի չափով դրամական միջոցները դուրս գրել և փոխանցել ավանդային հաշվին:

8.3 Ավանդի գումարի նկատմամբ հաշվարկվում են տոկոսներ՝ Սակագներով և տվյալ ավանդի պայմաններով նախատեսված կարգով և չափով: Տոկոսները հաշվարկվում և վճարվում են ՀՀ դրամով՝ անկախ ավանդի արժույթից, կամ Ավանդատուի ցանկությամբ՝ այն արտարժույթով, որով ներդրվել է ավանդը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

8.4 Ավանդն ընդունելով՝ Բանկը Հաճախորդի համար բացում է առանձին ավանդային հաշիվ և կատարում այդ հաշվի համալրումը Հաճախորդի բանկային հաշվից: Ավանդային հաշվով բանկային գործառնություններ չեն կատարվում, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի գրավոր համաձայնությամբ կամ Բանկի և Հաճախորդի միջև համապատասխան ծառայության մատուցումից բխող հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերով: Ավանդի նկատմամբ հաշվարկված տոկոսները փոխանցվում են Հաճախորդի բանկային Հաշվին, եթե Ավանդային պայմանագրով այլ բան համաձայնեցված չէ: Ավանդի ներդրումը հավաստվում է ավանդային հաշվի քաղվածքով (ներառյալ Համակարգի միջոցով Ավանդի պայմանագիր կնքելու դեպքում): Ավանդային հաշվին գումարների մուտքագրումները, ինչպես նաև՝ ավանդային հաշիվներից գումարների ելքագրումները հավաստող քաղվածքները Ավանդատուին տրամադրվում են միայն վերջինիս կողմից համապատասխան պահանջ ներկայացվելու դեպքում, բացառությամբ սույն Պայմանների 4.20 կետով սահմանված դեպքի: Սույն կետով սահմանված քաղվածքների տրամադրման կարգի և սույն Պայմանների մաս կազմող Ավանդային պայմանագրի անբաժանելի մաս կազմող այլ փաստաթղթերով սահմանված քաղվածքների տրամադրման կարգի միջև հակասություններ առաջանալու դեպքում գործում է սույն կետով սահմանված կարգը:

8.5 Ավանդի ժամկետը սահմանվում է Ավանդային պայմանագրով: Իրավաբանական անձ հաճախորդի՝ ավանդը հետ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրով, ինչի դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի պահանջը չկատարելու համար:

8.6 Ժամկետային ավանդի գումարը կամ դրա մի մասը մինչև սահմանված ժամկետի ավարտը Ավանդատուի պահանջով վերադարձնելիս՝ վերադարձվող մասի նկատմամբ Բանկը տոկոսները հաշվարկում և Ավանդատուին վճարում է Բանկի սակագներով սահմանված բանկային հաշվի օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան տոկոսադրույքով՝ կատարելով նախկինում վճարած տոկոսների վերահաշվարկ՝ վերադարձվող Ավանդի մասով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով և տվյալ ավանդատեսակի պայմաններով: Ավանդի գումարի մի մասը նվազեցնելուց հետո ավանդային պայմանագիրը գործում է Բանկի տնօրինության տակ մնացած ավանդի մասով, և դրա դիմաց տոկոսները շարունակվում են հաշվեգրվել ավանդային պայմանագրով նախատեսված չափով:

8.7 Այն դեպքում, երբ Բանկի հետ համաձայնեցված կարգով Հաճախորդը վաղաժամկետ հետ է պահանջում ավելացման իրավունքով ներդրված ավանդի մի մասը, նվազեցումը կատարվում է ավանդի գումարի վերջին ավելացումից և/կամ ավելացումներից (ներառյալ՝ Բանկի կողմից վճարված տոկոսներից)՝ ժամանակագրական հակառակ հաջորդականությամբ:

8.8 Ավանդի վերադարձման ժամկետը չերկարաձգվելու դեպքում ավանդի գումարը և չվճարված տոկոսները փոխանցվում են Հաճախորդի բանկային Հաշվին՝ առանց լրացուցիչ պայմանագրի կամ համաձայնագրի կնքման, և դրանց վրա հետագա տոկոսների հաշվեգրումը կատարվում է Բանկի սակագներով



սահմանված բանկային հաշվի օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան տոկոսադրույքով, եթե գրավոր ձևով այլ բան համաձայնեցված չէ:

8.9 Ավանդի ժամկետը կարող է երկարաձգվել.

8.9.1 Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում մինչև ավանդի ժամկետի ավարտի օրը ներառյալ, Բանկի կողմից սահմանված ձևի Ավանդի պայմանագրում փոփոխություններ կատարելու համաձայնագրի, դիմում-համաձայնագրի կամ Բանկի կողմից սահմանված տիպային այլ փաստաթղթի հիման վրա: Ընդ որում, սույն ենթակետով սահմանված մեկ փաստաթղթով երկարաձգումներ կկատարվեն բազմակի անգամ հաջորդաբար, մինչև Ավանդատուն ցանկություն չհայտնի չերկարաձգելու կամ երկարաձգված ավանդի գործողությունը դադարեցնելու մասին:

8.9.2 Էլեկտրոնային եղանակով.

8.9.2.1 Ֆիզիկական անձանց դեպքում՝ Ավանդատուի կողմից Ավանդային պայմանագրում կամ Բանկի կողմից սահմանված ձևի Հաճախորդի կողմից ստորագրվող այլ տիպային փաստաթղթում նշված էլեկտրոնային փոստի հասցեից Բանկի՝ նշված փաստաթղթերից որևէ մեկում նշված էլեկտրոնային փոստի հասցեին Բանկի պահանջներին համապատասխանող ավանդի ժամկետը երկարաձգելու պահանջ ներկայացվելու միջոցով: Ընդ որում, Բանկը հիմք է ընդունում Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված և Բանկում գրանցված վերջին էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված պահանջը: Էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացված պահանջը համապատասխանում է Բանկի պահանջներին, եթե ներառում է սույն պայմանագրի վավերապայմանները (պայմանագրի համար և կնքման տարի/ամիս/ամսաթիվ, Ավանդի գումար, արժույթ և այլն) և համապատասխանում է տվյալ ավանդատեսակի համար երկարաձգման օրվա դրությամբ Բանկի կողմից սահմանված պայմաններին:

8.9.2.2 Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ Ավանդի վերադարձման ժամկետից նվազագույնը 5 աշխատանքային օր առաջ Ավանդային պայմանագրում կամ Բանկի կողմից սահմանված ձևի Հաճախորդի կողմից ստորագրվող այլ տիպային փաստաթղթում նշված Բանկի էլեկտրոնային փոստի նշված փաստաթղթերից որևէ մեկում նշված Ավանդատուի էլեկտրոնային փոստի հասցեից Բանկի համար ընդունելի ձևի Ավանդի վերադարձման ժամկետի երկարաձգման վերաբերյալ գրություն ուղարկվելու եղանակով, եթե Ավանդատուն Բանկի կողմից նշված գրությունը ստանալը էլեկտրոնային եղանակով հաստատվելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում երկարաձգումը մերժելու վերաբերյալ Բանկի կողմից ծանուցում չի ստանում: Բանկը հիմք է ընդունում Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված և Բանկում գրանցված վերջին էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված պահանջը: Ընդ որում տվյալ դեպքում Ավանդի վերադարձման ժամկետը կհամարվի երկարաձգված երկարաձգման ամսաթվին Բանկում գործող պայմաններով, իսկ Ավանդի վերադարձման ժամկետի երկարաձգման ամսաթիվ կհանդիսանա Ավանդի վերադարձման ժամկետի օրը:

8.9.3 Բանկի կողմից միակողմանիորեն՝ Ավանդային պայմանագրով Բանկում ներդրված դրամական միջոցները և դրանից բխող պահանջի իրավունքը ի ապահովումն իր կամ երրորդ անձի՝ Բանկի նկատմամբ պարտավորությունների կատարման գրավադրված լինելու դեպքում՝ առավելագույնը համապատասխան պարտավորությունների լրիվ ծավալով կատարման ժամկետով՝ երկարաձգման օրվա դրությամբ Բանկում գործող պայմաններով:

8.10 Եթե ավանդի վերադարձի օրը և/կամ հաշվեգրված տոկոսների վճարման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վերադարձը կատարվում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ոչ աշխատանքային օրերի համար վճարելով տոկոսներ՝ Ավանդի պայմանագրով նախատեսված վերադարձի օրվան նախորդող օրվա համար հաշվարկված չափով:

8.11 Եթե Ավանդը ներդրվում է արտարժույթով, ապա Հաճախորդը Ավանդային պայմանագիրը ստորագրելով հավաստում է, որ գիտակցում է արտարժույթի փոխարժեքի փոփոխումից բխող հնարավոր անբարենպաստ հետևանքները, և նախընտրում է Ավանդը ներդնել արտարժույթով:

8.12 Ավանդի գումարի (դրա ավելացված մասի) վրա տոկոսները հավելագրվում են ավանդը (դրա ավելացված մասը) ավանդային հաշվին մուտք լինելուն հաջորդող օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը, իսկ 2020 թվականի մայիսի 1-ից ներդրվող Ավանդի գումարի (դրա ավելացված մասի) վրա տոկոսները հավելագրվում են Ավանդը (դրա ավելացված մասը) ավանդային հաշվին մուտք լինելու օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:



8.13 Գործառնական օրվա ավարտից հետո կատարվող ներդրումը և/կամ համալրումները համարվում են Բանկ մուտքագրված հաջորդ գործառնական օրով:

8.14 Բանկը, որպես հարկային գործակալ, Ավանդատուին հասանելիք տոկոսագումարը վճարելիս պահում և պետական բյուջե է փոխանցվում օրենսդրությամբ գանձման ենթակա հարկերը:

8.15 Ավանդները կարող են ներդրվել Ավանդի պայմանագրում նշված որոշակի երրորդ անձանց անունով (ավանդ՝ հոգուտ երրորդ անձանց)՝ այդ անձանց Բանկի կողմից սահմանված կարգով նախապես նույնականացնելու պայմանով: Բանկը կարող է հրաժարվել հոգուտ երրորդ անձանց Ավանդի պայմանագրեր կնքելուց, եթե հիմքեր կան կասկածելու գործարքի օրինականության վերաբերյալ, կամ հնարավոր չէ պատշաճ կարգով նույնականացնել երրորդ անձանց: Հոգուտ երրորդ անձի ընդունված ֆիզիկական անձանց ավանդների մասով Բանկը պարտավորվում է ավանդի գումարը և տոկոսները վերադարձնել/վճարել Ավանդային պայմանագրում նշված երրորդ անձին, վերջինիս կողմից Ավանդատուի իրավունքների վրա հիմնված առաջին իսկ գրավոր պահանջը ներկայացվելու կամ գրավոր եղանակով Բանկին Ավանդատուի իրավունքներից օգտվելու մտադրության մասին տեղեկացվելու դեպքում: Հոգուտ երրորդ անձի ներդրված ավանդով մինչև 14 տարեկան երրորդ անձը Բանկին իր իրավունքներից օգտվելու վերաբերյալ պահանջ կարող է ներկայացնել, իսկ պահանջը ներկայացնելուց հետո ավանդը կարող է տնօրինել բացառապես օրինական ներկայացուցչի միջոցով:

8.16 Եթե երրորդ անձը մինչև ավանդի ժամկետի ավարտի օրը (վերադարձի օրը ոչ աշխատանքային օրվա հետ համընկնելու դեպքում՝ այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը)՝ ներառյալ Բանկին գրավոր պահանջ չի ներկայացրել և ավանդի ժամկետը չի երկարաձգվում, ապա ավանդի գումարը և չվճարված տոկոսները վերադարձվում են/վճարվում են Ավանդատուի բանկային Հաշվին:

8.17 Եթե երրորդ անձը մինչև ավանդի վերադարձման ամսաթիվը (վերադարձի օրը ոչ աշխատանքային օրվա հետ համընկնելու դեպքում՝ այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը)՝ գրավոր եղանակով Բանկին տեղեկացրել է Ավանդատուի իրավունքներից օգտվելու մտադրության մասին, սակայն գրավոր պահանջ չի ներկայացրել, և ավանդի ժամկետը չի երկարաձգվել, ապա ավանդի գումարը և չվճարված տոկոսները վերադարձվում են/վճարվում են երրորդ անձի բանկային հաշվին, իսկ Բանկում բանկային հաշվի բացակայության դեպքում՝ փոխանցվում են այլ հաշվի, երրորդ անձի համապատասխան գրավոր դիմումն ստանալուց հետո 7 (յոթ) օրվա ընթացքում կամ տնօրինվում են վերջինիս կողմից սահմանված այլ եղանակով:

8.18 Ավանդատուին (Ավանդատուի իրավունքներ ձեռք բերած երրորդ անձին) իր ցանկությամբ կարող է ուղարկվել Ավանդի ժամկետի ավարտի վերաբերյալ SMS հաղորդագրություններ: Այդ ծառայությունը ներկայացվում է համաձայն սահմանված սակագների և Բանկը պատասխանատվություն չի կրում SMS-ների չառաքման կամ ուշացումով առաքման համար հեռախոսահամարի անհասանելի լինելու կամ կապի օպերատորի տեխնիկական կամ այլ խնդիրների համար:

8.19 Ավանդատուին բանկային գրքույկ չի տրամադրվում:

8.20 Ավելացման իրավունքով ավանդատեսակի դեպքում Ավանդը կարող է համալրվել նաև երրորդ անձանց կողմից: Ավանդատուն Ավանդային պայմանագիր կնքելով կամ ավանդի ժամկետը երկարաձգելով լիազորում է երրորդ անձանց՝ իր ավանդը համալրելու դեպքում որպես ավանդ ներդրվող գումարը մուտքագրել Ավանդատուի բանկային հաշվին և մուտքագրված գումարը փոխանցել Ավանդատուի ավանդային հաշվին: Ավանդատուն նաև թույլատրում է Բանկին՝ երրորդ անձանց կողմից իր Ավանդը համալրելու նպատակով Ավանդատուի բանկային հաշվին գումարներ մուտքագրվելու դեպքում, առանց Ավանդատուի լրացուցիչ կարգադրության գանձել համապատասխան գումարները Ավանդատուի բանկային հաշվից և փոխանցել Ավանդատուի ավանդային հաշվին:

8.21 Ավելացման իրավունքով ավանդատեսակը կարող է համալրվել Ավանդատուի կողմից Հաշվի բացման դիմում-պայմանագրում, Ավանդային պայմանագրում կամ Բանկի կողմից սահմանված ձևի Հաճախորդի կողմից ստորագրվող այլ տիպային փաստաթղթում նշված Ավանդատուի էլեկտրոնային փոստի հասցեից Բանկի՝ միևնույն փաստաթղթում նշված էլեկտրոնային փոստի հասցեին իր՝ Բանկում սպասարկվող բանկային հաշվին առկա որոշակի գումար ավանդային հաշվին փոխանցելու վերաբերյալ գրություն ստանալու միջոցով, որի դեպքում Բանկը փոխանցման ենթակա գումարի չափով դրամական միջոցները առանց Ավանդատուի լրացուցիչ հանձնարարականի գանձում է բանկային հաշվից և փոխանցում է ավանդային հաշվին: Ընդ որում, Բանկը հիմք է ընդունում Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված և Բանկում գրանցված վերջին էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված պահանջը: Էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացված պահանջը առնվազն պետք է պարունակի փոխանցվող գումարի չափը և ավանդային պայմանագրի համարը կամ ավանդային հաշվեհամարը:

8.22 Մինչև 14 տարեկան անձը ավանդը կարող է առանց օրինական ներկայացուցչի տնօրինել միայն այն դեպքում, երբ օրինական ներկայացուցիչը նախապես գրավոր համաձայնություն է տվել 14 տարին չլրացած անձի կողմից վերջինիս օգտին ներդրված ավանդը անարգել, առանց լրացուցիչ համաձայնությունների տնօրինելու վերաբերյալ:



9. Զեկային գրքույկով գործառնություններ

9.1 Առանձին տեսակի Հաշիվներից Բանկում գործող կանոնների համաձայն կանխիկ միջոցներ դուրսգրելու համար Բանկը կարող է առաջարկել անվանական լիմիտավորված դրամարկղային չեկեր (այսուհետ՝ Չեկ): Չեկերը (չեկային գրքույկները) համարվում են Բանկի սեփականությունը և Հաճախորդին տրամադրվում են օգտագործման իրավունքով:

9.2 Բանկի կողմից կարող է սահմանվել յուրաքանչյուր Չեկով դուրս գրվող գումարի առավելագույն սահմանաչափ:

9.3 Չեկերը տրամադրվում են Բանկի կողմից սահմանված ձևի դիմումի հիման վրա, որը ստորագրելով Հաճախորդը հաստատում է, որ ստացել է չեկային գրքույկը, ծանոթացել և ընդունում է Պայմանները, ինչպես նաև տեղյակ է և ընդունում է, որ չեկային գրքույկը Բանկի կողմից ստանալու պահից Պայմանները, չեկերով հաշվարկներ կատարելու համար Բանկի կողմից սահմանված կանոնները (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ չեկերի լրացման և օգտագործման կանոնները, չեկի սպասարկման կանոնները), Չեկերի սպասարկման հատուկ պայմանները (Բանկի կողմից այդպիսիք հրապարակվելու դեպքում) և Սակագները միասին կազմում են Բանկի և Հաճախորդի միջև կնքված չեկերով գործառնություններ կատարելու վերաբերյալ պայմանագիր:

9.4 Հաճախորդը, չեկային գրքույկ ստանալու դեպքում, պարտավորվում է.

9.4.1 Չեկային գրքույկը չտրամադրել այլ հաճախորդների,

9.4.2 Չստորագրել/չկնքել չլրացված Չեկեր,

9.4.3 Չեկային գրքույկը լրացնել Չեկերի լրացման և օգտագործման կանոններին համապատասխան,

9.4.4 Բանկային հաշվի պայմանագրի լուծման (գործողության դադարեցման) դեպքում չեկային գրքույկը՝ չօգտագործված չեկերի հետ միասին վերադարձնել Բանկին:

9.5 Չեկի (չեկային գրքույկի) կորստի կամ հափշտակման դեպքում Հաճախորդը պարտավոր է Բանկին անհապաղ ծանուցել գործառնական օրվա ընթացքում: Ծանուցումը համարվում է պատշաճ Բանկի կողմից ծանուցագիրը ստանալու պահից: Կորցրած և հափշտակված Չեկը Բանկի կողմից վճարելու հետևանքով առաջացած վնասները կրում է Հաճախորդը, եթե չի ապացուցվում, որ Չեկը վճարվել է Բանկի աշխատակցի դիտավորության կամ անզգուշության հետևանքով:

9.6 Բանկն իրավասու է մերժել վճարմանը ներկայացված Չեկի ընդունումը և(կամ) վճարումը, եթե՝

9.6.1 Չեկը չի համապատասխանում Չեկի լրացման և օգտագործման կանոններին,

9.6.2 Չեկ ներկայացնողը դրա օրինական տերը (չեկով լիազորված անձ) չէ,

9.6.3 Չեկը հետ է կանչված Հաճախորդի կողմից,

9.6.4 Չեկը դուրս է գրված կեղծ ձևաթղթի վրա կամ ստորագրությունը կեղծ է,

9.6.5 Հաճախորդի Չեկերի վճարման համար նախատեսված դրամական միջոցները անբավարար են Չեկում նշված գումարը վճարելու և տվյալ ծառայության համար Սակագներով սահմանված միջնորդավճարը գանձելու համար,

9.6.6 Հաշիվը արգելադրված է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

9.6.7 հայտնի է, որ չեկը գողացված է կամ կորցրած,

9.6.8 Բանկի համար կասկածելի այլ դեպքերում:

9.7 Հաճախորդը բանկային հաշվի/հաշիվների փակման դեպքում պարտավորվում է

9.7.1 Չեկային գրքույկը չտրամադրել այլ հաճախորդների,

9.7.2 Չստորագրել/չկնքել չլրացված Չեկեր,

9.7.3 Չեկային գրքույկը լրացնել Չեկերի լրացման և օգտագործման կանոններին համապատասխան,

9.7.4 Բանկային հաշվի պայմանագրի լուծման (գործողության դադարեցման) դեպքում չեկային գրքույկը՝ չօգտագործված չեկերի հետ միասին վերադարձնել Բանկին:

9.8 Բանկը, Հաճախորդին սույն բաժնով սահմանված կարգով չեկային գրքույկ տրամադրելու դեպքում, Հաճախորդի հաշիվներից կանխիկ գումարների տրամադրումը Չեկերով իրականացնում է համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի:

9.9 Չեկի (չեկային գրքույկի) կորստի կամ հափշտակման դեպքում Հաճախորդը Բանկին տեղեկացնում է այդ մասին գործառնական օրվա ընթացքում, գրավոր՝ թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Տեղեկացումը համարվում է կայացած միայն Բանկի կողմից ծանուցագիրը ստանալու պահից, հակառակ դեպքում կորցրած և հափշտակված Չեկը Բանկի կողմից վճարելու հետևանքով առաջացած վնասները կրում է Հաճախորդը, եթե չի ապացուցվում, որ Չեկը վճարվել է Բանկի աշխատակցի դիտավորությամբ կամ անզգուշության հետևանքով:

9.10 Հաճախորդը Հաշվի/հաշիվների փակման դեպքում պարտավորվում է վերադարձնել Բանկի չեկային գրքույկը, եթե առկա են չօգտագործված չեկերի ձևաթղթեր: Չեկային գրքույկը վերադարձվում է գրավոր դիմումի հիման վրա, որի մեջ նշվում են բոլոր չօգտագործված չեկերի ձևաթղթերի համարները:



10. Հեռակառավարման համակարգերի միջոցով բանկային ծառայությունների մատուցում

10.1 Ardshininvestbank I-banking համակարգը տրամադրվում է Բանկում բանկային հաշիվ ունեցող հաճախորդներին, բացառությամբ սահմանափակ/միայն դիտման իրավասություններով համակարգի, որը կարող է տրամադրվել նաև Բանկում բանկային հաշիվ չունեցող հաճախորդներին՝ Բանկի սահմանած ձևի Հաճախորդի դիմում-առաջարկը Բանկի կողմից ակցեպտավորելու միջոցով պայմանագիր կնքվելու դեպքում: Նշված պայմանագրում փոփոխություններ կարող են կատարվել Բանկի կողմից սահմանված ձևի Հաճախորդի դիմում-առաջարկը Բանկի կողմից ակցեպտավորմամբ համաձայնագիր կնքվելու միջոցով կամ Բանկի կողմից միակողմանիորեն:

Անհատ ձեռնարկատեր և իրավաբանական անձ Հաճախորդների մասով ARDSHININVESTBANK I-BANKING համակարգում որպես օգտագործող գրանցված անձինք համապատասխան ծրագրային լուծման առկայության դեպքում կարող են հնարավորություն ունենալ օգտվելու նաև I-BANKING համակարգի մաս կազմող մոբայլ բանկային հավելվածից՝ օգտագործելով I-banking ինտերնետ բանկ համակարգի համար նախատեսված օգտանունն ու գաղտնաբառը:

I-banking մոբայլ բանկային ծառայությունից օգտագործող Հաճախորդը կարող է գրանցել, ինչպես մոտենալով Բանկ և Բանկում ստորագրելով համապատասխան դիմում-առաջարկը, այնպես էլ ինքնուրույն՝ համապատասխան դիմում-առաջարկն Ardshininvestbank I-banking համակարգի միջոցով առցանց ներկայացնելով (հետևելով Բանկի պաշտոնական ինտերնետային կայքէջում տեղադրված առցանց գրանցման ուղեցույցներում նկարագրված քայլերին) կամ հեռահար եղանակով: Հաճախորդի առցանց գրանցման դեպքում հաճախորդին տրամադրվում են սահմանափակ/միայն դիտման իրավասություններ, իսկ Բանկի կողմից սահմանված դեպքերում հաճախորդին կարող են տրամադրվել Համակարգով հասանելի ծառայություններից օգտվելու իրավասություններ:

Առցանց գրանցման դեպքում Ardshininvestbank I-banking համակարգի միջոցով դիմում-առաջարկ ներկայացնելիս համապատասխան էջում ստորագրության դաշտերում հավաստող նշումի մուտքագրմամբ և/կամ համապատասխան հավաստման կոճակը սեղմելով՝ Հաճախորդն ընդունում է, որ ծանոթացել, համաձայնել, ընդունել և ստորագրել է համապատասխան դիմում-առաջարկները, կանոնները, պայմանները, այլ փաստաթղթերն ու տեքստերը, դրանք ճշգրիտ են և արժանահավատ, բխում են Հաճախորդի կամքից և ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ունեն լիարժեք իրավական ուժ, այնպես, ինչպես ձեռագիր ստորագրված փաստաթուղթը:

10.2 Ardshininvestbank I-banking համակարգի տրամադրման՝ Բանկի կողմից մատուցվող ծառայությունից հեռահար եղանակով օգտվելու ցանկության դեպքում Հաճախորդը սույնով ընդունում է, որ իր կողմից Բանկի պաշտոնական ինտերնետային կայքից ներբեռնված, լրացված, ստորագրված և սքանավորված Հաճախորդի դիմում-առաջարկը, այլ փաստաթղթերը էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով դիմում-առաջարկում նշված էլեկտրոնային փոստի հասցեից Բանկին ներկայացնելով/ուղարկելով, ծանոթացել, համաձայնել, ընդունել և ստորագրել է դիմում-առաջարկը, սույն Պայմանները, Համակարգի սպասարկման պայմանները, այլ փաստաթղթերն ու տեքստերը, դրանք ճշգրիտ են և արժանահավատ, բխում են Հաճախորդի կամքից և ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ունեն լիարժեք իրավական ուժ:

Հաճախորդն ընդունում է, որ Բանկի կողմից հեռահար եղանակով Ardshininvestbank I-banking համակարգի տրամադրման վերաբերյալ տեղեկատվություն կարող է ստանալ Բանկի Հեռախոսային կենտրոնի միջոցով՝ զանգահարելով +374 60 655 000 հեռախոսահամարին:

10.3 Հաճախորդներին հասանելի համակարգի կոնկրետ գործիքները և դրանցից օգտվելու սակագները և պայմանները սահմանվում են Բանկի կողմից և կարող են ժամանակ առ ժամանակ Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել: Հաճախորդն ընդունում է, որ Համակարգը հնարավորություն է ընձեռում առանց Բանկ այցելելու և լրացուցիչ համաձայնության՝ առցանց հարթակում օգտվել Համակարգի միջոցով Բանկի կողմից Հաճախորդին հասանելի դարձված Բանկային ծառայություններից:

10.4 Համակարգերի միջոցով Հաճախորդների սպասարկումը իրականացվում է Հաճախորդի (Օգտագործողի) մոտ համապատասխան հեռակառավարման գործիքից օգտվելու համար անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական ապահովվածության առկայության դեպքում, ընդ որում Բանկը Հաճախորդին Համակարգի միջոցով ծառայություններ մատուցում է բացառապես Բանկի համար ընդունելի ծրագրային և տեխնիկական ապահովվածության միջոցների կիրառմամբ:

10.5 Պայմանավորված Համակարգի միջոցով մատուցվող ծառայության առանձնահատկություններով, Բանկը Հաճախորդին կարող է տրամադրել համապատասխան հեռակառավարման գործիքներ և դրանցից օգտվելու համար անհրաժեշտ ծրագրային ապահովում: Նման սարքավորումները Բանկի սեփականությունն են և Հաճախորդին են տրամադրվում օգտագործման իրավունքով: Բանկն իրավունք ունի պահանջել ցանկացած ժամանակ հետ վերադարձնել կամ փոխարինել այդ սարքավորումները, ինչպես նաև խստացնել/մեղմացնել դրանց



օգտագործման կարգը, կամ դադարեցնել դրանց սպասարկումը: Հաճախորդի կողմից Բանկի տրամադրած ծրագրային ապահովումը կրկնօրինակելու, արտատպելու, վերափոխելու դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդից պահանջել դրա հետ կապված իր կրած վնասների հատուցում:

10.6 Հաճախորդը երաշխավորում է իրեն տրամադրված ծրագրային ապահովման միջոցների, Համակարգից օգտվելու գաղտնաբառերի և կոդերի պահպանությունը և դրանց օգտագործումը միայն իր (իր ներկայացուցիչների) կողմից և լրիվ ծավալով պատասխանատվություն է կրում դրանց պահպանման և կորստի կամ երրորդ անձանց դրանք հայտնի դառնալու հետևանքով իր, Բանկի և (կամ) երրորդ անձանց համար առաջացած անբարենպաստ հետևանքների՝ մասնավորապես պատճառված վնասների, գործարար համբավի վնասման, իրավունքների կորստի (սահմանափակման) կամ պարտավորությունների առաջացման (ավելացման) համար:

10.7 Հաճախորդն ընդունում է և համաձայն է, որ «Ardshininvestbank I-banking» մուտք լինելիս SMS կոդի փոխարեն կարող է օգտագործել այլ՝ «Token App» կամ ծրագրային ապահովման այլ միջոց (Google authenticator), որը գեներացնում է մեկանգամյա նույնականացման ունիկալ կոդ, և որի միջոցով Հաճախորդի կողմից կատարվում է Համակարգի մուտք և/կամ գործառնությունների իրականացման երկքայլանի հաստատում: Հաճախորդն ինքն է ընտրում ծրագրային ապահովման համապատասխան միջոցը և կրում է իր ընտրության հետ կապված բոլոր ռիսկերը, կորուստները և վնասները:

10.8 Հաճախորդը նաև ընդունում է և համաձայն է, որ «Ardshininvestbank I-banking»-ի միջոցով Համակարգի հասանելի լինելու դեպքում SMS կոդի փոխարեն համակարգ մուտք լինելիս և գործարքները հաստատելիս կիրառվում է բջջային հեռախոսով PIN code-ի, touch ID-ի, Face ID-ի միջոցով հաստատումը, բացառությամբ Համակարգ առաջին անգամ մուտք գործելու, երբ կիրառվում է մեկանգամյա SMS կոդի միջոցով նույնականացում:

10.9 Հաճախորդն ընդունում և համաձայն է, որ իր կողմից ընտրված և ակտիվացված «Token App»-ի կամ ծրագրային ապահովման այլ միջոցի (Google authenticator) -ի ապաակտիվացման/վերականգնման համար պետք է դիմել Բանկի Հեռախոսային կենտրոն՝ զանգահարելով +374 60 655 000 հեռախոսահամարին:

10.10 Ardshininvestbank I-banking համակարգի Իրավաբան անձ կամ անհատ ձեռնարկատեր Հաճախորդների օգտագործողները կարող են իրենց գաղտնաբառի փոփոխության գործընթացը իրականացնել Բանկի կոմունիկացիոն կենտրոն կամ իրենց սպասարկող մասնաճյուղ կամ Հաճախորդին սպասարկող անհատական մենեջերին զանգահարելու եղանակով կամ Մոբայլ Բանկ ծառայության միջոցով ինքնուրույնաբար՝ մուտքագրելով հաշվեհամար կամ քարտի համար և անձնական տվյալներ: Կոմունիկացիոն կենտրոնի կամ մասնաճյուղի աշխատակիցը/անհատական սպասարկում իրականացնող աշխատակիցը հաճախորդին պատշաճ նույնականացնելու դեպքում ապահովում է իրավաբան անձ կամ անհատ ձեռնարկատեր Հաճախորդին sms հաղորդագրության միջոցով նոր գաղտնաբառի տրամադրումը: Նույնականացման է ենթարկվում նաև զանգահարող անձը և կարող է փոփոխել միայն իր՝ որպես օգտագործողի գաղտնաբառը: Եթե Հաճախորդի և(կամ) օգտագործողի պատշաճ նույնականացումը հնարավոր չէ ապահովել, ապա գաղտնաբառի փոփոխության գործընթացը մերժվում է: Ardshininvestbank I-banking համակարգի Իրավաբան անձ կամ անհատ ձեռնարկատեր Հաճախորդների տնօրենները կարող են իրենց օգտագործողների գաղտնաբառի փոփոխության կամ օգտագործողների կասեցման, նոր օգտագործողների գրանցման հայտերը Բանկ ներկայացնել նաև I-banking համակարգի հաղորդակցման գործիքների միջոցով: Հաճախորդը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Բանկին Համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ գաղտնաբառերի, ինչպես նաև անվտանգության սերտիֆիկատների և ծրագրային ապահովման այլ միջոցների կորստի, երրորդ անձանց առջև բացահայտման կամ դրա սպառնալիքի առաջացման դեպքում:

10.11 Բանկն իրավունք ունի միակողմանիորեն կասեցնել Հաճախորդի կողմից Համակարգից օգտվելու հնարավորությունը, եթե

10.11.1 առկա են կասկածներ Համակարգի ապօրինի օգտագործման վերաբերյալ: Ընդ որում Համակարգի ապօրինի օգտագործման փաստը Բանկը գնահատում է իր բացառիկ հայեցողությամբ:

10.11.2 Համակարգից օգտվելու դիմում-առաջարկի ներկայացումից հետո 2 ամսվա ընթացքում Հաճախորդը չի իրականացնում վերջնական գրանցում և մուտք համակարգ:

10.12 Հաճախորդը պարտավոր է իր սեփական միջոցներով ապահովել համապատասխան հեռակառավարման գործիքներից օգտվելու համար անհրաժեշտ համակարգչային և հեռահաղորդակցության սարքավորումների, ինտերնետային կապի, հեռախոսակապի և այլ միջոցների առկայությունն ու սարքին վիճակը՝ վճարելով դրանց ձեռքբերման, ինչպես նաև Համակարգն օգտագործելու հետ կապված տվյալների փոխանցման վճարներն ու այլ ծախսերը:

10.13 Բանկը պատասխանատվություն չի կրում Համակարգն օգտագործելու հետ կապված Հաճախորդի կորուստների և վնասների համար, որոնք առաջացել են ներառյալ, բայց չսահմանափակելով թվարկված



դեպքերում՝ Համակարգի օգտագործում անվտանգության պայմանները չպահպանելով, Համակարգ մուտք գործելու և Համակարգում աշխատելու համար Հաճախորդի կողմից կիրառվող/շահագործվող սարքերը (բջջային հեռախոս, համակարգիչ և այլն) երրորդ անձին փոխանցելիս կամ հասանելի դառնալիս:

10.14 Բանկը կարող է սահմանել Համակարգի օգտագործման առանձին ժամեր, կասեցնել Համակարգի մատչելիությունը, ինչպես նաև սահմանել Համակարգ մուտք գործելու և գործառնություններ իրականացնելու անվտանգությունը բարձրացնող լրացուցիչ պահանջներ և ընթացակարգեր:

10.15 Համակարգով գործառնությունների կատարման կարգը

10.15.1 Բանկը Հաճախորդի դիմում-առաջարկը ակցեպտավորելու դեպքում դիմում-առաջարկին համապատասխան գրանցում է Հաճախորդի օգտագործողներ, որոնց միջոցով Հաճախորդը Համակարգում կարող է իրականացնել իր դիմում առաջարկում նշված, ինչպես նաև Համակարգով հասանելի ֆինանսական և այլ գործառնություններ՝ Բանկի կողմից սահմանված պայմաններով և կարգով:

10.15.2 Հաճախորդը կարող է տեղեկանալ Համակարգով Բանկի կողմից մատուցվող ծառայությունների ցանկին Բանկի պաշտոնական ինտերնետային կայքէջից՝

www.Ardshininvestbank.am-ից: Հաճախորդն իր դիմում-առաջարկում ներկայացված յուրաքանչյուր Օգտագործողի համար սահմանում է վերջինիս Համակարգում նույնականացվելու եղանակը՝ ընդ որում, անկախ ընտրված տարբերակից և գործարքների հաստատման եղանակից, Հաճախորդի (Օգտագործողի կողմից) Համակարգում՝ Համակարգի տվյալ գործիքի համար հասանելի տարբերակով գործարքի հաստատումը հանդիսանում է Բանկի համար Հաճախորդի կողմից պատշաճ վավերացված հանձնարարականի ներկայացում, առաջացնելով դրանից բխող իրավունքները և պարտավորությունները: Հաճախորդն ընդունում է, որ Համակարգի միջոցով տվյալ գործիքի համար հասանելի տարբերակով կարող է կապ հաստատել Բանկի հետ՝ ներկայացնելով դիմումներ, գրություններ, հարցումներ, հանձնարարականներ: Հաճախորդը տեղեկացված է, որ Բանկն ինքնուրույն է որոշում ներկայացված դիմումներին, գրություններին, հարցումներին, հանձնարարականներին ընթացք տալու կամ մերժելու, Հաճախորդից լրացուցիչ տեղեկատվություն և (կամ) հիմնավորումներ պահանջելու վերաբերյալ հարցերը, ընթացք տալու դեպքում կատարման ժամկետները, ինչի շրջանակներում տեղեկատվության փոխանակումը տեղի է ունենում Համակարգի միջոցով: Համակարգի միջոցով տեղեկատվության փոխանակումը հավասարազոր է Բանկի տարածքում առձեռն փոխանակելուն: Իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր Հաճախորդը հաստատում և հավաստում է, որ ունի անհրաժեշտ բոլոր իրավասություններն ու թույլտվությունները Համակարգի միջոցով Բանկին դիմումներ, գրություններ, հարցումներ, հանձնարարականներ ներկայացնելու համար: Ընդ որում, Հաճախորդը գիտակցում և ընդունում է այն հանգամանքը, որ դիմում-առաջարկն առցանց ներկայացնելիս, ինչպես նաև Համակարգի միջոցով դրանով հասանելի որևէ գործարք կատարելիս, գրություն, դիմում, հարցում, հանձնարարական ներկայացնելիս համապատասխան էջում ստորագրման ենթակա դաշտերում հավաստող նշում դնելը և/կամ համապատասխան հավաստման կոճակը սեղմելը նշանակում է համապատասխան էջում, հղումում և/կամ փաստաթղթում նշված պայմանների, տեղեկությունների և այլ դրույթների հետ ամբողջական համաձայնություն, որը Հաճախորդի համար առաջացնում է համապատասխան իրավունքներ, պարտավորություններ և այլ իրավական հետևանքներ, և ունի նույն իրավական նշանակությունը, ինչ ձեռագիր ստորագրված փաստաթուղթը:

10.15.3 Բանկը, Համակարգի միջոցով ստանալով Հաճախորդի հանձնարարականը, ստուգում է այն և, լիարժեք լինելու դեպքում՝ կատարում:

10.15.4 Հաճախորդն իր կողմից Համակարգի միջոցով տրված հանձնարարության կարգավիճակի մասին տեղեկանում է Համակարգում «կարգավիճակ» դաշտում տվյալ գործարքի համար արտացոլվող տեղեկությունից՝ ընդ որում, Հաճախորդի (Օգտագործողի) կողմից Համակարգով իրականացված գործարքը համարվում կատարված միայն Բանկի կողմից գործարքի հաստատման վերաբերյալ տեղեկատվությունը գործարքի կարգավիճակ դաշտում արտացոլվելուց հետո:

10.15.5 Բանկը իր Համակարգի միջոցով իրականացվող յուրաքանչյուր գործարքի գծով սահմանում է կատարման ժամկետ և կատարում է Հաճախորդի կողմից տրված հանձնարարականները այդ ժամկետներում: Համակարգի միջոցով տեղեկատվություն փոխանակելը հավասարազոր է Բանկի տարածքում առձեռն փոխանակելուն:

10.15.6 Բանկը կարող է սահմանել հեռակառավարման միջոցներով գործարքների իրականացման գումարային, քանակական և այլ սահմանափակումներ: Բանկն իրավունք ունի կասեցնել կամ մերժել գործարքը՝ մինչև Բանկին բավարարող լրացուցիչ հավաստիացումներ ստանալը:

10.15.7 Համակարգի միջոցով կատարման չեն ընդունվում Հաճախորդի կողմից Բանկ ուղարկված այն հանձնարարականները, որոնցում առկա են Հաճախորդին տրամադրված համապատասխան ծրագրային



ապահովման միջոցների օգտագործման կարգի կամ Համակարգի պայմանագրի պայմանների խախտումներ: Այդ դեպքում Հաճախորդը կրում է իր համար առաջացող անբարենպաստ հետևանքների ռիսկը:

10.15.8 Բանկը կարող է մերժել Համակարգի միջոցով կատարված գործարքների հաստատումը, եթե դրանց հաստատման պահին ակնհայտ է դառնում, որ ֆինանսական և/կամ բանկային ծառայությունների շուկայում տեղի են ունեցել էական փոփոխություններ:

10.15.9 Հաճախորդի կողմից Համակարգը տրամադրելու և սպասարկելու դիմում-առաջարկում կամ Բանկի կողմից ներկայացված Համակարգին միանալու օֆերտայում նշված սահմանաչափերը ստանդարտ սահմանաչափեր են: Համակարգի սպասարկման պայմաններով այլ սահմանաչափեր սահմանված լինելու դեպքում՝ կկիրառվեն այդ պայմաններով սահմանված սահմանաչափերը, որոնք կարող են Բանկի կողմից ժամանակ առ ժամանակ միակողմանիորեն փոփոխվել: Հաճախորդի կողմից (Համակարգը տրամադրելու և սպասարկելու դիմում-առաջարկում կամ Բանկի կողմից ներկայացված Համակարգին միանալու օֆերտայում նշված սահմանաչափերը, ինչպես նաև Համակարգի սպասարկման պայմաններում նշված սահմանաչափերը կարող են փոփոխվել նաև Բանկի համար ընդունելի ձևով Հաճախորդի Համակարգի սպասարկման պայմանների փոփոխության դիմում-առաջարկի հիման վրա՝ այն Բանկի կողմից ակցեպտավորվելու դեպքում:

10.15.10 Համակարգի միջոցով Հաճախորդի ծառայություններ մատուցելու դեպքում Բանկն իրավունք ունի.

10.15.11 իրականացնել Համակարգում օգտագործվող ծրագրային ապահովման փոխարինումը նորով՝ ապահովելով Հաճախորդի աշխատանքը ծրագրային նոր տարբերակով,

10.15.12 պլանային տեխնիկական աշխատանքներ իրականացնելու ժամանակ, ինչպես նաև Բանկում տեղի ունեցած տեխնիկական վթարների կամ այլ նմանատիպ հանգամանքների դեպքում, որոնք խոչընդոտում են Համակարգի միջոցով Հաճախորդի սպասարկմանը՝ անորոշ ժամկետով, առանց հատուցման, Հաճախորդին նախապես, իսկ անհնարինության դեպքում՝ անհապաղ տեղեկացնելով, միակողմանիորեն դադարեցնել Համակարգով Հաճախորդի սպասարկումը:

10.15.13 արգելել Հաճախորդի կողմից Համակարգի օգտագործումը, եթե Հաճախորդի կողմից խախտվել են Բանկի առջև ստանձնած պարտավորությունները կամ հիմքեր կան ենթադրելու, որ Համակարգն օգտագործվում է կամ կարող է օգտագործվել անօրինական ձևով կամ այլ կերպ խախտվում են Համակարգի օգտագործման անվտանգության պահանջները: Ընդ որում փոխանցվող էլեկտրոնային փաստաթղթերի ընդունման և (կամ) կատարման դադարեցման համար Բանկի կողմից նման հատկանիշների և կասկածների առաջացման հիմնավորումներ հաճախորդին չեն տրվում:

10.15.14 Որոշ հանձնարարությունների կապակցությամբ պահանջել լրացուցիչ հաստատում կամ բացատրություն: Հաստատումը պահանջվում է Համակարգով՝ վճարային փաստաթուղթը ստանալու օրը: Նման դեպքերում հանձնարարությունն ի կատար է ընդունվում պահանջվող հաստատումը ստանալուց հետո,

10.15.15 Մերժել թերի ներկայացված հանձնարարության կատարումը,

10.16 ձևակերպել Հաճախորդի հաճախորդի կողմից ներկայացված հանձնարարության թղթային տարբերակը և հաստատել այն համաձայն հաշվարկային գործառնությունների կատարման կարգի: Համակարգերի միջոցով Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու դեպքում Հաճախորդը պարտավոր է.

10.16.1 պահպանել Համակարգերից օգտվելու համար Բանկի սահմանած պայմանները,

10.16.2 Երրորդ անձանց չտրամադրել Համակարգի ծրագրային միջոցները, Համակարգ մուտք գործելու և Համակարգում աշխատելու համար Հաճախորդի կողմից կիրառվող/շահագործվող սարքերը (բջջային հեռախոս, համակարգիչ և այլն), գաղտնաբառերը և կոդերը դրանք օգտագործել միայն Համակարգի տրամադրման պայմանագրին համապատասխան, իսկ երրորդ անձանց տրամադրելու կամ դիտավորությամբ կամ անզգուշությամբ հասանելու դարձնելու դեպքում, լրիվ ծավալով կրել Բանկին և (կամ) երրորդ անձանց պատճառված վնասների կամ հնարավոր վնասների հատուցման պատասխանատվությունը և (կամ) դրանք երրորդ անձանց հասանելու դարձնելու հետևանքով իր համար առաջացող անբարենպաստ հետևանքների ռիսկը,

10.16.3 Համակարգի միջոցով հանձնարարականներ տալու դեպքում Հաճախորդը պարտավոր է ստուգել իր տված հանձնարարականի և Բանկի կողմից դրա հիման վրա տրված փաստաթղթերի համապատասխանությունը և անհամապատասխանության դեպքում անհապաղ տեղեկացնել Հաշիվը սպասարկող աշխատակցին՝ պատճառները պարզելու նպատակով:

10.17 Հաճախորդը պատասխանատվություն է կրում Համակարգի միջոցով իր կողմից ներկայացված տվյալների ճշտության և հավաստիության համար:



10.18 Բանկը պատասխանատվություն չի կրում այն հետևանքների համար, որոնք առաջացել են Հաճախորդի կողմից Համակարգի շահագործման ընթացքում անվտանգության պահանջների չկատարման արդյունքում:

10.19 Համակարգի միջոցով Հաճախորդի սպասարկումը կարող է դադարեցվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ:

10.20 Բանկի նախաձեռնությամբ Համակարգի միջոցով Հաճախորդին սպասարկելու վերաբերյալ կնքված պայմանագրի լուծման դեպքում Բանկը նախօրոք գրավոր տեղեկացնում է Հաճախորդին այդ մասին, ընդ որում Համակարգի, կամ որևէ հեռակառավարման գործիքի միջոցով Հաճախորդի սպասարկումը դադարեցվում է տեղեկացման մեջ նշված ամսաթվից սկսած:

10.21 Հաճախորդի նախաձեռնությամբ Համակարգի միջոցով Հաճախորդին սպասարկելու վերաբերյալ կնքված պայմանագրի լուծվում է Բանկի սահմանած ձևի դիմում-առաջարկ ներկայացվելու և Բանկի կողմից սահմանված կարգով առաջարկը ակցեպտավորվելու միջոցով: Անկախ Համակարգի սպասարկման պայմանագրի լուծման ամսաթվից՝ Հաճախորդը պարտավոր է վճարել ամբողջ ամսվա վճարը, անկախ տվյալ ամսվա օգտագործած օրերի քանակից:

10.22 Համակարգի միջոցով Հաճախորդին սպասարկելու վերաբերյալ Պայմանագրի լուծումը չի հանգեցնում Բանկի և Հաճախորդի միջև կնքված այլ պայմանագրերի դադարեցմանը:

10.23 Պայմանագրի լուծումը չի հանգեցնում Բանկի և Հաճախորդի միջև մինչև Համակարգի կասեցումը ծագած պարտավորությունների դադարեցման, եթե կողմերի գրավոր համաձայնությամբ այլ բան չի սահմանվում:

10.24 Բանկի «Բանկ-հաճախորդ» համակարգի գործող հաճախորդների սպասարկումը շարունակվում է իրականացվել Համակարգի «ինտերնետ բանկ» գործիքի միջոցով և տվյալ հաճախորդների նկատմամբ լիարժեք գործում են սույն գլխի դրույթները:

10.25 Համակարգերի միջոցով Հաճախորդի ներկայացրած դիմումների/հայտերի ուսումնասիրման արդյունքների, ինչպես նաև Հաճախորդի այլ գործառնությունների մասին Բանկը կարող է տեղեկացնել էլեկտրոնային եղանակով, ներառյալ՝ Համակարգը սպասարկող ինտերնետային էջերի կամ բջջային հավելվածների համապատասխան մասում տեղեկություններ տեղադրելով, էլեկտրոնային փոստով, բջջային հեռախոսահամարին ուղարկված կարճ հաղորդագրությունների (SMS), Համակարգի բջջային հավելվածների կողմից ուղարկվող հաղորդագրությունների (Push Notifications) միջոցով և այլ եղանակներով: Համակարգի միջոցով կատարված գործառնությունների մասին տվյալները օրենքով սահմանված կարգով և ժամկետով պահպանվում են Բանկի սերվերներում և համարվում են ապացույց՝ վիճելի հարցերի կարգավորման համար:

10.26 Անհատական մենեջեր ունեցող, այդ թվում՝ Private, Premium, VIP կարգավիճակ ունեցող Հաճախորդները, հնարավորություն ունեն բանավոր կամ գրավոր եղանակով (այդ թվում՝ էլեկտրոնային հաղորդակցության ցանկացած ուղիով) դիմելու Բանկ (տվյալ Հաճախորդին սպասարկող անհատական մենեջերին) Բանկի կողմից սահմանված՝ տվյալ եղանակով հասանելի գործարքներից մեկը կամ մի քանիսը իրականացնելու համար: Հաճախորդի կողմից ներկայացված դիմումի հիման վրա ձևավորված հանձնարարականը Հաճախորդը ստանում է **Համակարգի բջջային հավելվածով ուղարկվող հաղորդագրությունների (Push Notifications) միջոցով**: Հաճախորդը կարող է գործարքի կատարման հանձնարարականը հաստատել կամ չեղարկել: Գործարքի կատարման հանձնարարականի՝ Հաճախորդի կողմից Համակարգի բջջային հավելվածով հաստատման դեպքում Հաճախորդն ընդունում և հավաստում է, որ հանձնարարականը ճշգրիտ է, բխում է Հաճախորդի կամքից, Հաճախորդի համար առաջացնում է համապատասխան իրավունքներ, պարտականություններ և այլ իրավական հետևանքներ, և ունի նույն իրավական նշանակությունը և ուժը, ինչ Բանկի տարածքում կամ Համակարգի բջջային հավելվածով կատարված գործարքը:

11. Անհատական պահատեղում(դեպոզիտար պահատույի) արժեքների պահատվություն, պահատեղի վարձակալություն

11.1 Անհատական պահատեղը վարձակալությամբ տրվում է Բանկի սահմանած ձևով Դիմում-պայմանագրի, պայմանագրի կամ Բանկի կողմից սահմանված այլ տիպային փաստաթղթի կնքման հիման վրա: Սույն Պայմանները, Սակագները, ինչպես նաև տվյալ տեսակի ծառայությունը կարգավորող Բանկի կողմից ընդունված այլ փաստաթղթերը միասին կազմում են Բանկի և Հաճախորդի միջև կնքված անհատական պահատեղի վարձակալության պայմանագրի (այսուհետ՝ Անհատական պահատեղի վարձակալության պայմանագիր) անբաժանելի մասը:

11.2 Բանկը Սակագներով սահմանված վճարների դիմաց Հաճախորդին Բանկում տրամադրում է Անհատական պահատեղ և դրանց բանալիները՝ արժեքների տեղադրման և պահպանման համար: Հաճախորդը պարտավոր է Անհատական պահատեղը պահել պատշաճ վիճակում: Անհատական պահատեղը համարվում է հանձնված Հաճախորդին պայմանագրի կնքման և անհատական պահատեղի բանալիները դրամապահոցից ստանալու պահից, որի վերաբերյալ նշվում է կատարվում հաճախման քարտում՝ հավաստվելով Կողմերի



ստորագրությամբ: Հաճախորդի կողմից բանալիների ստացումը և հանձնումը կատարվում է հետհաշվեկշռային մուտքի-ելքի օրդերի հիման վրա:

11.3 Հաճախորդին անհատական պահատեղի բանալիները տրամադրվում են Սակագներով նախատեսված համապատասխան վճարները կատարելուց հետո:

11.4 Անհատական պահատեղի բանալու կորստի, կամ պահատեղի և/կամ բանալիների վնասվելու դեպքում Հաճախորդը անհապաղ պետք է գրավոր տեղեկացնի Բանկին:

11.5 Հաճախորդը պարավորվում է կրել Հաճախորդին հանձնված բանալիների կորստի, ինչպես նաև իր կողմից պահատեղի օգտագործման ընթացքում առաջացած բանալիների և/կամ պահատեղի վնասվածքի վերանորոգման ծախսերը:

11.6 Հաճախորդին չի թույլատրվում անհատական բանալու կրկնօրինակ պատրաստել:

11.7 Հաճախորդին չի թույլատրվում լուսանկարել կամ տեսագրել պահատեղի կամ պահասենյակը:

11.8 Հաճախորդը կամ նրա կողմից պատշաճ լիազորված անձը պահատեղից կարող է օգտվել Բանկի կողմից սահմանված գործառնական օրերին և ժամերին: Ընդ որում Հաճախորդի կողմից երրորդ անձին անհատական պահատեղից օգտվելու լիազորություններ տալու դեպքում Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Հաճախորդի անունից երրորդ անձի գործողությունների համար:

11.9 Հաճախորդի հետ փոխկապակցված անձինք չեն կարող օգտվել Անհատական պահատեղից, եթե այլ բան չի բխում օրենքից կամ առկա չէ փոխկապակցված անձին տրված պատշաճ լիազորագիր:

11.10 Հաճախորդն իր յուրաքանչյուր այցելություն ժամանակ պահասենյակում կարող է գտնվել առավելագույնը 20(քսան) րոպե:

11.11 Հաճախորդը 1(մեկ) օրվա ընթացքում կարող է պահասենյակ այցելել ոչ ավել, քան 2 (երկու) անգամ:

11.12 Հաճախորդը (Հաճախորդի ներկայացուցիչը) պարտավոր է յուրաքանչյուր անգամ պահասենյակ իր մուտքը հաստատել՝ ստորագրելով Բանկի կողմից սահմանված համապատասխան փաստաթղթում, որտեղ նշվում է նաև մուտքի ժամը և օրը: Հաճախորդը պարտավոր է անհատական պահատեղի պահասենյակ մտնել միայն Բանկի պատասխանատու աշխատակցի ուղեկցմամբ՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ, իսկ Հաճախորդի ներկայացուցչի դեպքում՝ Հաճախորդից անունից հանդես գալու հիմքը, եթե համապատասխան հիմքը բանկում դեռևս առկա չէ:

11.13 Հաճախորդը անհատական պահատեղում պարտավորվում է չպահել որևէ տեսակի հեղուկ, մածուցիկ նյութեր, դյուրավառ, պայթյունավտանգ կամ իր բնույթով վտանգավոր այլ գույք, շուտ փչացող ապրանքներ, սննդամթերք, կենդանիներ և պատասխանատվություն է կրում այդպիսի գույքի պահատվության հետևանքով Բանկին և երրորդ անձանց պատճառված վնասների համար: Հաճախորդը գիտակցում է, որ Բանկը չի կրում արժեքների ստուգման պարտականություն, և հրաժարվում է հետագայում այդ հանգամանքը վիճարկելու իրավունքից:

11.14 Հաճախորդը պարտավոր է անհատական պահատեղն օգտագործել սույն Պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան, պահատեղում չտեղադրել այնպիսի արժեքներ, որոնք որևէ կերպ կապված են հանցավոր գործունեության հետ և պարտավորվում է Բանկին զերծ պահել արժեքների հետ կապված ցանկացած պահանջներից և հայցերից: Հաճախորդը գիտակցում է, որ Բանկը չի կրում արժեքների ստուգման պարտականություն, և հրաժարվում է հետագայում այդ հանգամանքը վիճարկելու իրավունքից:

11.15 Բանկը ապահովում է անհատական պահատեղի հուսալի պահպանությունն ու անձեռնմխելիությունը և ձեռնարկում է անհատական պահատեղի պահպանվածության ապահովման համար բոլոր անհրաժեշտ միջոցները:

11.16 Անհատական պահատեղի պարունակությունը՝ Արժեքների վերաբերյալ տեղեկությունները և հաճախորդի՝ Պահատեղի տվյալները հանդիսանում են բանկային գաղտնիք:

11.17 Բանկը Հաճախորդին տրամադրում է անհատական պահատեղից ինքնուրույն օգտվելու համար անհրաժեշտ միջոցներ և ստեղծում համապատասխան պայմաններ: Հաճախորդը անհատական պահատեղում արժեքների յուրաքանչյուր պահատվության գործառույթ իրականացնում է այդ նպատակի համար տեղակայված առանձնացված տարածքում կամ խցիկում:

11.18 Հաճախորդը առանց որևէ մեկի՝ ներառյալ Բանկի, հսկողության արժեքներն անձամբ տեղադրում է պահատեղում և հանում այնտեղից:

11.19 Բանկը պատասխանատվություն չի կրում պահատեղի պարունակության կամ պահատեղում տեղադրված արժեքների կամ դրանց կորստի համար, կամ արժեքները պահատեղում տեղադրելու կամ պահատեղից դուրս բերելու կամ պահատեղի տեղափոխության ընթացքում արժեքների կորստի կամ վնասման համար, եթե այդպիսի կորուստը կամ վնասը չի առաջացել Բանկի դիտավորության պատճառով:

11.20 Բանկը պատասխանատվություն չի կրում պահատեղում առկա արժեքների կորստի, պակասորդի կամ վնասվածքի համար, եթե նշված արժեքների կորուստը, պակասորդը կամ վնասվածքը տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի՝ այսինքն տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով,



կամ արժեքների այն հատկությունների հետևանքով, որոնց մասին Բանկը չգիտեր և չէր կարող իմանալ արժեքներն ի պահ ընդունելիս, կամ եթե դա կատարվել է Հաճախորդի դիտավորության կամ անզգուշության հետևանքով:

11.21 Բանկն իրավունք ունի ստորև նշված հանգամանքներից որևէ մեկի ի հայտ գալու դեպքում առանց հաճախորդի համաձայնության և ներկայության բացել հաճախորդի պահատուփը.

11.21.1 ՀՀ օրենսդրության համաձայն դատարանի վճռի որոշմամբ ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության կամ պետական իրավասու այլ մարմնի որոշման հիման վրա,

11.21.2 Եթե Անհատական պահատեղի վարձակալության պայմանագրով սահմանված և/կամ Պայմաններով սահմանված կարգով Բանկի կողմից ինքնաշխատ երկարաձգված անհատական պահատեղի վարձակալության ժամկետը լրանալուց հետո հաճախորդը չի ազատել պահատեղը և սահմանված կարգով բանալին չի վերադարձրել Բանկ,

11.21.3 Հաճախորդի կողմից սակագների համաձայն պահատվության ծառայության համար նախատեսված միջնորդավճարների վճարման պարտավորությունները Պայմաններով և Սակագներով նախատեսված ժամկետից ավելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում,

11.21.4 Եթե ի հայտ են եկել անհաղթահարելի ուժի (ֆորս մաժոր) հետևանքով առաջացած բնական աղետներ՝ հրդեհ, ջրհեղեղ, վթար, պահատվության հանձնած առարկայի բռնկում, կտրուկ հոտի առաջացում կամ այլ դեպքեր, երբ անթույլատրելի է դառնում անհատական պահատեղում պահատվության հանձնած առարկայի հետագա պահպանումը,

11.21.5 Բանկը միակողմանիորեն լուծում է Անհատական պահատեղի վարձակալության պայմանագիրը:

11.22 Հաճախորդը Բանկի կողմից տրված բանալիները Անհատական պահատեղի վարձակալության պայմանագրով սահմանված Անհատական պահատեղի վարձակալության ժամկետի ավարտին վերադարձնում է Բանկին, հակառակ դեպքում՝ պարտավոր է միջոցներ ձեռնարկել վարձակալության ժամկետը երկարաձգելու և պայմանագրից բխող մյուս բոլոր պայմանները ապահովելու ուղղությամբ:

11.23 Անհատական պահատեղի վարձակալության Պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտից հետո անհատական պահատեղը հաճախորդի կողմից չազատելու, Բանկ չներկայանալու և պայմանագրի ժամկետը երկարաձգելու համաձայնագիր չներկայացնելու դեպքում Անհատական պահատեղի վարձակալության ժամկետը կարող է Պայմաններով սահմանված դեպքերում և կարգով Բանկի կողմից միակողմանիորեն ինքնաշխատ երկարաձգվել:

11.24 Վարձակալության ժամկետի ավարտից հետո Պայմաններով և Սակագներով նախատեսված ժամկետի ընթացքում պահատեղը չազատելու կամ պայմանագիրը չերկարաձգելու(վելու) դեպքում, Բանկը իրավունք է ստանում անհատական պահատեղը բացելու, արժեքների առկայության դեպքում դրանց նկատմամբ կիրառելու Պայմաններով և Սակագներով նախատեսված միջոցառումներ, գանձելու տույժեր:

11.25 Բանկն իրավունք ունի Հաճախորդին ծանուցելով միակողմանիորեն լուծելու Անհատական պահատեղի վարձակալության պայմանագիրը և/կամ հրաժարվել պայմանագրի կատարումից Պայմանների 11.21.1 և(կամ) 11.21.4 կետերում նախատեսված հիմքերի առկայության դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Հաճախորդը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում Անհատական պահատեղի վարձակալության պայմանագրով սահմանված պարտավորությունները: Ընդ որում սույն կետով սահմանված կարգով պայմանագրի միակողմանի լուծումը և(կամ) հրաժարումը չի հանգեցնում համապատասխան պայմանագրից բխող վճարումները(հատուցումները) կատարելու Հաճախորդի պարտավորության դադարեցման:

11.26 Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ նախապես Բանկին ծանուցելով լուծել Անհատական պահատեղի վարձակալության պայմանագիրը՝ Բանկի նկատմամբ համապատասխան պայմանագրից բխող դրամական պարտավորությունները ամբողջությամբ կատարելու պայմանով:

11.27 Բանկի մասնաճյուղի (Հաճախորդների սպասարկման վարչության, այսուհետ նաև՝ ՀՍՎ), որտեղ գտնվում է Հաճախորդի պահատեղը, հասցեափոխության կամ փակվելու դեպքում, Հաճախորդին նախօրոք ծանուցելուց հետո Հաճախորդի չներկայանալու դեպքում, Բանկը իրավունք ունի ծանուցումը ուղարկելուց հետո՝ ծանուցման մեջ նշված պայմաններով 10(տասը) աշխատանքային օր անց առանց հաճախորդի ներկայության՝ ապահովելով պահատուփի անձեռնմխելիությունը իրականացնել պահատեղի տեղափոխություն Բանկի այլ մասնաճյուղ (ՀՍՎ):

11.28 Անհատական պահատեղում արժեքների պահատվության վաղաժամկետ դադարման դեպքում Սակագներով նախատեսված Հաճախորդից գանձված վճարները հետ չեն վերադարձվում:

11.29 Անհատական պահատեղում արժեքների պահատվության ընթացքում առաջացած լրացուցիչ ծախսերը, որոնք կողմերը չէին կարող նախատեսել Պայմանագիրը կնքելիս, հատուցվում են Բանկին Հաճախորդի կողմից:

11.30 Լրացուցիչ ծախսերը են համարվում այդ թվում, բայց ոչ միայն, Հաճախորդի կողմից անհատական պահատեղի բանալու կորստի, ինչպես նաև բանալիների կամ պահատեղի, այդ թվում պահատուփի, վնասվելու հետևանքով անհատական պահատեղի վերանորոգման և/կամ բանալիների փոխարինման ծախսերը:



11.31 Հաճախորդը պարտավորվում է կատարել սույն Պայմանագրերով և Սակագներով սահմանված բոլոր վճարումները, այդ թվում, բայց ոչ միայն՝ Սակագներով սահմանված վճարները, լրացուցիչ ծախսերը, և հատուցել պահատուկում պահվող կամ ի պահ հանձնված գույքի հատկություններով և/կամ Պահատեղի օգտագործման պայմանների խախտմամբ Բանկին պատճառված վնասները, և իրավունք է տալիս Բանկին առանց լրացուցիչ հանձնարարականի, անակցեպտ կարգով համապատասխան գումարները գանձել Բանկում Հաճախորդի ունեցած բանկային հաշիվներից՝ անհրաժեշտության դեպքում կատարելով արժույթների փոխարկում՝ Բանկի կողմից սահմանված փոխարժեքով: Այն դեպքում, երբ հաճախորդի հաշիվներին առկա չեն բավարար միջոցներ սահմանված գանձումները կատարելու համար, իրավունք ունի ամեն դեպքում գանձել չբավարարող չափով գումար՝ Հաճախորդի անունով ձևավորելով դեբիտորական պարտավորություն:

11.32 Հաճախորդը համաձայնվում է, որ Պայմանագրերով և Սակագներով նախատեսված դեպքերում պահատեղի սահմանված ժամկետում չազատելու դեպքում, անհատական պահատեղում առկա արժեքները համարվում են Բանկին ի պահ հանձնված, իսկ Հաճախորդի և Բանկի միջև հարաբերությունների նկատմամբ կիրառվում են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված պահատվության մասին կանոնները՝ առանց լրացուցիչ պայմանագրի կնքման:

11.33 Սույն Պայմանագրերի 11.32 կետում նախատեսված դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ հաճախորդի հետ կնքված պայմանագրին համապատասխան Բանկն իրավունք է ձեռք բերում առանց համաձայնության և ներկայության պահատուկի բացելու իրավունք, Բանկը իրավունք է ձեռք բերում պահատեղում պահվող արժեքները տեղափոխել Բանկի դրամապահոց:

11.34 Պահատեղի պարունակությունը Բանկի դրամապահոցում պահելու ընթացքում, ինչպես նաև 11.32 կետում նախատեսված դեպքում, Հաճախորդի կամ նրա ներկայացուցչի՝ Բանկ ներկայանալու դեպքում, այն հանձնվում է Հաճախորդին (ներկայացուցչին) արժեքների պահպանման համար Բանկի Սակագներով սահմանված գումարը լրիվ վճարվելու պայմանով:

11.35 Հաճախորդը պարտավորվում է հատուցել ի պահ հանձնված գույքի հատկություններով պայմանավորված Բանկին պատճառված վնասները:

11.36 Արժեքների պահատվության դեպքում Բանկի և Հաճախորդի իրավունքներն ու պարտականությունները որոշվում են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 43-րդ (Պահատվության) գլխի դրույթներով: Ընդ որում Կողմերն ընդունում են, որ պահատվության պայմանագրի գրավոր ձևը համարվում է պահպանված:

11.37 Հաճախորդի հետ համաձայնեցնելով Հաճախորդին կարող է ժամանակավոր օգտագործման համար տրամադրվել Հաճախորդի հետ կնքված պայմանագրում նշված պահատեղից տարբեր այլ պահատեղ, ինչի ընթացքում Հաճախորդի հետ կնքված անհատական պահատեղի վարձակալության պայմանագրի պայմանները շարունակում են գործել:

12. Արժեթղթերի պահառուական ծառայություններ

12.1 Բանկն Արժեթղթերի պահառուական ծառայություններ է մատուցում «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ընդունված պահառության գործունեությունը կարգավորող կանոնակարգերով, կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով Հաճախորդին պատկանող Արժեթղթերի պահպանությամբ և Արժեթղթերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների հաշվառմամբ և փոխանցմամբ (այսուհետ՝ Պահառուական ծառայություն):

12.2 Բանկը Պահառուական ծառայություններ մատուցելիս հանդես է գալիս որպես ենթապահառու՝ միջնորդավորելով հայաստանյան և/կամ օտարերկրյա պահառուների կողմից մատուցվող ծառայությունները: Բանկը պատասխանատվություն չի կրում հայաստանյան և/կամ օտարերկրյա պահառուների գործողությունների և/կամ անգործության, ներառյալ նրանց կողմից ընդունվող որոշումների և կիրառվող կանոնների համար, ինչպես նաև նրանց սնանկության, գործառնական ռիսկերի, խարդախության, լիզենցիայի անվավեր/ուժը կորցրած ճանաչվելու, նրանց նկատմամբ կիրառվող պատժամիջոցների համար, ինչը կարող է Հաճախորդի համար հանգեցնել բացասական հետևանքների/կորուստների:

12.3 Պահառուական ծառայության տրամադրման նպատակով Բանկը Հաճախորդի համար Դիմում-պայմանագրի հիման վրա բացում է Դեպո հաշիվ(ներ), որի(որոնց) ներքո (ենթահաշիվներին) ըստ առանձին թողարկողների և/կամ պահպանման վայրերի հաշվառվում են Արժեթղթեր: Դեպո հաշվի բացման, վարման և փակման ծառայությունը Բանկն իրականացնում է՝ համաձայն Բանկի Սակագների: Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխելու Սակագներն այդ մասին Հաճախորդին տեղեկացնելով դրանց ուժի մեջ մտնելուց առնվազն 10 օր առաջ:

12.4 Հաճախորդը, ստորագրելով Դիմում-պայմանագիրը, տեղեկացված է, որ Բանկի ինտերնետային կայքում հրապարակված Սակագները տարածվում են ֆիզիկական անձ Հաճախորդների վրա, որոնք հանդիսանում են ՀՀ քաղաքացի և որոնց կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, իրավաբանական անձ Հաճախորդների վրա,



որոնց 50 տոկոս և ավել բաժնետերերը կամ փայտերերը չեն հանդիսանում այլ երկրի քաղաքացի, կամ որոնց վերջնական շահառուների 50 տոկոսից ավելին չեն հանդիսանում այլ երկրի քաղաքացի: Բոլոր այլ Հաճախորդների համար սահմանվում են անհատական Սակագներ:

12.5 Հաճախորդը հավաստիացնում է իր գիտակցումն առ այն, որ իր կողմից ստորագրված Դիմում-պայմանագիրը, Պայմանները, Սակագները և Պայմաններով սահմանված Դիմում-պայմանագրի շրջանակներում Հաճախորդի կողմից ստորագրվող և Բանկի կողմից ընդունվող Բանկի սահմանած ձևի ցանկացած տիպային փաստաթուղթ միասին կազմում են Հաճախորդի և Բանկի միջև կնքված պայմանագիր (այսուհետ սույն գլխում՝ Պայմանագիր): Հաճախորդը հավաստիացնում է, որ մինչև Պայմանագիր կնքելը Բանկն իրեն հնարավորություն է ընձեռել ծանոթանալու պահառության գործունեությունը կարգավորող իրավական ակտերին:

12.6 Բանկը վարում է Դեպո հաշիվների այնպիսի հաշվառում, որը թույլ է տալիս ցանկացած պահի առանձնացնել Հաճախորդի միջոցները այլ հաճախորդի և Բանկի սեփական միջոցներից:

12.7 Բանկը պարտավորվում է վարել գրանցում Հաճախորդի Դեպո հաշվի հետ կապված յուրաքանչյուր գործարքի ժամկետի ու էական պայմանների վերաբերյալ:

12.8 Հաճախորդի Դեպո հաշվում պահառության հանձնված Արժեթղթերի վերաբերյալ Բանկի կողմից կատարված գրառումները հավաստում են Արժեթղթերի նկատմամբ Հաճախորդի սեփականության իրավունքը: Պահառության հանձնված Արժեթղթերի սեփականության իրավունքը համարվում է փոխանցված՝ Հաճախորդի Դեպո հաշվում համապատասխան գրառում կատարելու պահից:

12.9 Բանկը կարող է օգտագործել Հաճախորդի Դեպո հաշվին առկա միջոցները՝ երաշխավորելով Հաճախորդի՝ Արժեթղթերից բխող իրավունքները, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

12.10 Արժեթղթերով հավաստված և Արժեթղթերից բխող սեփականության և այլ գույքային իրավունքները փոխանցվում են հետևյալ երեք եղանակներից որևէ մեկով.

12.10.1 Պայմանագրի և Պայմանների պահանջներին համապատասխան Հաճախորդի կողմից տրված հանձնարարականի հիման վրա,

12.10.2 Բանկի կողմից Հաճախորդին Ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում առևտրային արգելադրման և Կարգավորվող շուկայում գործարքների իրականացման եղանակով,

12.10.3 Արժեթղթերի սեփականության իրավունքի փոխանցմամբ, որն արդյունք չէ քաղաքացիաիրավական գործարքի, որի հիմք է հանդիսանում դատարանի վճիռը կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան որոշումը:

12.11 Հաճախորդի կողմից ներկայացվող Հանձնարարականի ձևերն են.

12.11.1 Արժեթղթերի փոխանցման/ստացման հանձնարարական,

12.11.2 Գրավառուի կողմից ներկայացվող գրավի իրավունքի գրանցման/դադարեցման հանձնարարական,

12.11.3 Գրավի իրավունքի գրանցման դադարեցման վերաբերյալ գրավատուի կողմից ներկայացվող հանձնարարական կից գրավառուի համաձայնությամբ,

12.11.4 Արժեթղթերի ստացման/ապաստեցման հանձնարարական:

12.12 Հաճախորդը Հանձնարարականը կարող է ներկայացնել էլեկտրոնային կամ թղթային եղանակով:

12.12.1 Թղթային եղանակով Հանձնարարականը ներկայացվում է ստորագրված տարբերակով 2 օրինակից Բանկի՝ Հաճախորդների սպասարկման սրահներում:

12.12.2 Էլեկտրոնային եղանակով Հանձնարարականը ներկայացվում է.

- Հաճախորդի՝ Պայմանագրում նշված էլ.հասցեից Բանկի՝ Պայմանագրում նշված էլ.հասցեին այն ուղարկելով ստորագրված և սկանավորված,
- Հաճախորդի՝ Պայմանագրում նշված էլ.հասցեից Բանկի՝ Պայմանագրում նշված էլ.հասցեին այն ուղարկելով ազատ ֆորմատի հաղորդագրությամբ՝ պահպանելով Հանձնարարականի սահմանված ձևանմուշում առկա և/կամ գործարքի կնքման համար անհրաժեշտ ամբողջ տեղեկատվության առկայությունը (բացառությամբ 12.11.2 և 12.11.3 կետերի),
- Բանկի բջջային/վեբ հավելվածի միջոցով:

12.13 Հանձնարարականը կատարվում է Հաճախորդի Դեպո և/կամ դրամական հաշիվներին առկա՝ հանձնարարականի կատարման համար բավարար միջոցների դեպքում:

12.14 Դեպո և/կամ դրամական հաշվում միջոցների անբավարարության դեպքում Բանկը այդ մասին տեղեկացնում է Հաճախորդին Պայմանագրում նշված կապի եղանակներից մեկով:

12.15 Հաճախորդը կարող է ներկայացնել Հանձնարարականի չեղարկման հայտ: Բանկը բավարարում է չեղարկման հայտը, եթե Հանձնարարականը կամ դրանով նախատեսված գործառնություններից ոչ մեկը դեռ չեն



կատարվել Բանկի կողմից: Հակառակ դեպքում Բանկը տեղեկացնում է Հաճախորդին Հանձնարարականի չեղարկման հայտի մերժման մասին՝ Պայմանագրով սահմանված կապի միջոցով:

12.16 Արժեթղթերի մարման և/կամ շահաբաժնի (արժեկտրոնի) վճարման ժամանակ Արժեթղթի թողարկողի կողմից միջոցների ստացման դեպքում Բանկը միջոցները հաշվեգրում է Հաճախորդի հաշվին ոչ ուշ, քան Բանկի կողմից գումարի ստացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:

12.17 Հաճախորդը փոխհատուցում է Արժեթղթերի պահառուական ծառայությունների մատուցման շրջանականներում երրորդ անձանց կողմից Բանկին ներկայացված ծախսերը:

12.18 Հաճախորդի Դեպո հաշվով յուրաքանչյուր գործարք իրականացնելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան գործարքի օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը, Բանկը Հաճախորդի՝ Պայմանագրում նշված իրավասու հասցեին ուղարկում է Դեպո հաշվով շարժի վերաբերյալ հաշվետվություն: Հաշվետվությունը համարվում է պատշաճ ստացված Պայմաններով սահմանված կարգով:

12.19 Մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, Բանկը Հաճախորդի՝ Պայմանագրում նշված իրավասու հասցեին ուղարկում է Հաճախորդի Դեպո հաշվով միջոցների տեղաշարժի և կիրառվող Սակագների վերաբերյալ ամսական հաշվետվություն: Հաշվետվությունը համարվում է պատշաճ ստացված Պայմաններով սահմանված կարգով:

12.20 Հաճախորդի հանձնարարականը հիմք է հանդիսանում մինչև Բանկի կողմից հանձնարարականի կատարման պահը Հաճախորդի հաշվին հանձնարարականի կատարման համար Սակագներով սահմանված միջնորդավճարի չափով գումարի սառեցման: Բանկը իրավունք ունի մերժել հանձնարարականի կատարումը Հաճախորդի միջոցների անբավարարության պարագայում:

12.21 Բանկը անակցեպտ կերպով Հաճախորդի՝ Պայմանագրում նշված ՀՀ դրամով հաշիվներից գանձում է Սակագներով սահմանված վճարները: Պայմանագրում նշված ՀՀ դրամով հաշվում միջոցների անբավարարության դեպքում Բանկը իրավունք ունի վճարները անակցեպտ գանձել Հաճախորդի՝ Բանկում վարվող այլ արժույթների հաշիվներից: Ընդ որում վճարները Հաճախորդի այլ արժույթով հաշիվներից գանձման պարագայում կիրառվում է գանձման պահի Բանկի անկանխիկ առքի փոխարժեքը: Այն դեպքում, երբ Հաճախորդի հաշիվներին առկա չեն բավարար միջոցներ սահմանված գանձումները կատարելու համար, Բանկն իրավունք ունի գանձել չբավարարող չափով գումար՝ Հաճախորդի անունով ձևավորելով դեբիտորական պարտավորություն:

12.22 Հաճախորդը կարող է իր նախաձեռնությամբ պահանջել այլ հաշվետվություններ միջոցների շարժի, կիրառված սակագների վերաբերյալ, ինչպես նաև քաղվածք իր Դեպո հաշվից: Բանկը իրավունք ունի Հաճախորդի նախաձեռնությամբ այլ տեղեկատվության տրամադրման համար սահմանել սակագին:

12.23 Հաճախորդի Դեպո հաշիվը փակվում է Պայմանագրի լուծման դեպքում: Ընդ որում Դեպո հաշիվը կարող է փակվել միայն այն դեպքում, երբ այն զրոյական է և Հաճախորդը չունի չմարված պարտավորություն Բանկի նկատմամբ:

12.24 Պայմանագիրը կարող է լուծվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ մյուս կողմին առնվազն 20 օր առաջ տեղեկացնելու դեպքում:

12.25 Եթե ծանուցման պահին Դեպո հաշվի մնացորդը զրոյական չէ, ապա Հաճախորդը պետք է Բանկին ներկայանցի Դեպո հաշվում հաշվառվող միջոցների փոխանցման հանձնարարական: Հաճախորդի կողմից Պայմանագրի լուծման արդյունքում միջոցների տեղափոխման հանձնարարական չներկայացնելու դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդի միջոցները տեղափոխել տարանցիկ հաշվի՝ մինչև Հաճախորդի առաջին պահանջը:

12.26 Բանկը պարտավորվում է պահպանել Պայմանագիրը և դրա հիման վրա տրված Հանձնարարականները, ինչպես նաև այլ փաստաթղթեր նվազագույնը 70 (յոթանասուն) տարի, եթե օրենսդրությամբ պահպանման առավել երկար ժամկետ սահմանված չէ:

12.27 Բանկի պահառության գործունեության դադարեցման կամ լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու դեպքում Բանկը պարտավորվում է տեղեկացնել Հաճախորդին 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ Հաճախորդի կողմից նրան պատկանող արժեթղթերի փոխանցման հանձնարարական ներկայացնելու անհրաժեշտության մասին: Ստացված հանձնարարականները կատարվում են սույն Պայմաններում նկարագրված կարգով:

12.28 Բանկի կողմից մատուցվող պահառության գործունեության տեսակները չեն սահմանափակվում Պայմաններով: Պայմաններում չսահմանված՝ պահառության գործունեության տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը և դրանց կանոնակարգումը Բանկը հրապարակում է իր ինտերնետային կայքում:

12.29 Պայմանագրի պահանջների չպահպանման համար կողմերի պատասխանատվությունը սահմանված է Պայմաններով (կետ 15):

12.30 Բանկի և Հաճախորդի միջև առաջացող վեճերի լուծման կարգը սահմանված է Պայմաններով (կետ 16):



13. Ներդրումային ծառայություններ

13.1 Բանկը ներդրումային ծառայություններ է մատուցում ներդրումային ծառայությունների մատուցումը կարգավորող հետևյալ իրավական ակտերով՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված ներդրումային ծառայությունները կարգավորող կանոնակարգերով (մասնավորապես՝ ՀՀ ԿԲ Կանոնակարգ 4/07-ով), կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով Բանկի կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին Արժեթղթերի գործարքների իրականացմամբ ՀՀ կարգավորվող շուկայում, օտարերկրյա կարգավորվող շուկաներում, առաջնային և երկրորդային շուկաներում:

13.2 Հաճախորդը հավաստիացնում է իր գիտակցումը առ այն, որ իր կողմից ստորագրված Դիմում-պայմանագիրը, Պայմանները, Սակագները և Պայմաններով սահմանված Դիմում-պայմանագրի շրջանակներում Հաճախորդի կողմից ստորագրվող և Բանկի կողմից ընդունվող Բանկի սահմանած ձևի ցանկացած տիպային փաստաթուղթ միասին կազմում են Հաճախորդի և Բանկի միջև կնքված պայմանագիր (այսուհետ սույն գլխում՝ Պայմանագիր): Հաճախորդը հավաստիացնում է նաև, որ մինչև Պայմանագիր կնքելը Բանկն իրեն հնարավորություն է ընձեռել ծանոթանալու ներդրումային ծառայությունների մատուցումը կարգավորող իրավական ակտերին: Պայմանագիրը գործում է անորոշ ժամկետով՝ մինչև Պայմաններով սահմանված կարգով դրա դադարեցումը:

13.3 Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխելու Սակագները և/կամ Պայմանագրի այլ պայմանները այդ մասին Հաճախորդին տեղեկացնելով դրանց ուժի մեջ մտնելուց առնվազն 20 օր առաջ:

13.4 Հաճախորդը ստորագրելով Դիմում-պայմանագիրը հավաստում է, որ տեղեկացված է, որ ներդրումային ծառայություններից օգտվելիս Հաճախորդի մոտ կարող են առաջանալ հետևյալ ռիսկերը, որոնց կապակցությամբ Բանկը պատասխանատվություն չի կրում.

13.4.1 Արտարժույթային ռիսկ. արտարժույթի փոխարժեքի անբարենպաստ փոփոխությունից հնարավոր կորուստների առաջացում,

13.4.2 Շուկայական ռիսկ. Արժեթղթերի շուկայական գների անբարենպաստ փոփոխություններից հնարավոր կորուստների առաջացում,

13.4.3 Վարկային ռիսկ. Արժեթղթերի թողարկողի կողմից պարտավորությունների ժամանակին չկատարում կամ մասամբ կատարում,

13.4.4 Տոկոսադրույքի ռիսկ. Արժեթղթերի տոկոսադրույքի փոփոխությունից հնարավոր կորուստների առաջացում,

13.4.5 Գործառնական ռիսկ, տեխնիկական միջոցների խափանման հետևանքով հնարավոր կորուստների առաջացում,

13.4.6 Ենթակառուցվածքային ռիսկ (կոնտրագենտի ռիսկ). հնարավոր կորուստների առաջացում.

13.4.6.1 Կոնտրագենտների (ներառյալ, բայց չսահմանափակվելով, պահառուների, հաշվարկային կենտրոնների, ռեեստրավարների և Արժեթղթերի հետ կապված ծառայություններ մատուցող այլ անձանց (Երրորդ անձինք)) որոշումների, ներքին քաղաքականության, գործողությունների կամ անգործության արդյունքում,

13.4.6.2 Երրորդ անձանց սնանկության, գործառնական ռիսկերի, խարդախության, լիզենցիայի անվավեր/ուժը կորցրած ճանաչվելու, Երրորդ անձանց նկատմամբ կիրառվող պատժամիջոցների արդյունքում, ինչը խոչընդոտում է Երրորդ անձանց կատարել իրենց պարտավորությունները:

13.5 Պայմանագիր կնքելուց և դրա հիման վրա Հաճախորդին ծառայություն տրամադրելուց առաջ Բանկը դասակարգում է Հաճախորդին՝ որպես պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ:

13.6 Պրոֆեսիոնալ հաճախորդ են համարվում.

13.6.1 ներդրումային ընկերությունները, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերը, բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ներդրումային, կենսաթոշակային ֆոնդերը եւ ներդրումային ֆոնդի կառավարիչները, ինչպես նաեւ օտարերկրյա պետությունում գրանցված այն իրավաբանական անձինք, որոնք, տվյալ պետության օրենսդրության համաձայն, իրավունք ունեն իրականացնելու սույն ենթակետով սահմանված որեւէ անձի գործունեություն,

13.6.2 Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետության համայնքները, Կենտրոնական բանկը, օտարերկրյա պետությունները, օտարերկրյա պետությունների տեղական ինքնակառավարման մարմինները, օտարերկրյա պետությունների կենտրոնական բանկերը,

13.6.3 միջազգային ֆինանսական կազմակերպությունները, այդ թվում՝ Արժույթի միջազգային հիմնադրամը, Եվրոպական կենտրոնական բանկը, Եվրոպական ներդրումային բանկը,



13.6.4 իրավաբանական անձինք, որոնք բավարարում են հետևյալ չափանիշներից առնվազն երկուսին.

13.6.4.1 Պայմանագրի կնքմանը նախորդող տարվա վերջի դրությամբ անձի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 500 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,

13.6.4.2 Պայմանագրի կնքմանը նախորդող տարվա գործունեությունից ստացված անձի իրացման շրջանառությունը (համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի) գերազանցում է մեկ միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամը,

13.6.4.3 Պայմանագրի կնքման պահին նախորդող ամսվա վերջի դրությամբ (հայտնի չլինելու դեպքում վերջին ամսվան նախորդող ամսվա դրությամբ) անձի ընդհանուր կապիտալը կազմում է 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:

13.7 Հաճախորդի նախաձեռնությամբ Բանկի կողմից պրոֆեսիոնալ Հաճախորդ կարող են դասակարգվել 13.6 կետում չնշված անձինք, որոնք բավարարում են հետևյալ չափանիշներից առնվազն երկուսին.

13.7.1 Հաճախորդը դիմումի ներկայացմանը նախորդող 4 եռամսյակների ընթացքում արժեթղթերի շուկայում իրականացրել է 10 և ավելի գործարք միջին եռամսյակային կտրվածքով, ընդ որում՝ մեկ գործարքի ծավալը միջին հաշվով կազմում է առնվազն մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ,

13.7.2 Հաճախորդի Արժեթղթերի փաթեթի մեծությունը դիմումի ներկայացման պահին գերազանցում է 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,

13.7.3 Հաճախորդը ֆինանսական շուկայում ունի առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որը պահանջում է Հաճախորդին մատուցվող այն ծառայությունների հետ կապված գիտելիքներ, որոնց հետ կապված վերջինս նախաձեռնություն է իրականացնում պրոֆեսիոնալ դասակարգվելու համար:

13.8 Բանկը իրավունք ունի Հաճախորդից պահանջելու 13.6–13.7 կետերում նշված չափանիշներին Հաճախորդի համապատասխանությունը հիմնավորող տեղեկատվություն/փաստաթղթեր: Տեղեկատվությունը Հաճախորդի կողմից չներկայացնելու կամ թերի ներկայացնելու դեպքում Բանկը չի դիտարկում Հաճախորդի նախաձեռնությունը:

13.9 Բանկի և պրոֆեսիոնալ հաճախորդի փոխհարաբերություններում չեն գործելու Հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ: Մասնավորապես, Բանկը չի տրամադրելու տեղեկատվություն Արժեթղթերով գործառնությունների ռիսկերի վերաբերյալ, հաշվետվությունների և դրանց ներկայացման պարբերականության վերաբերյալ:

13.10 Հաճախորդը, որը դասակարգվում է որպես պրոֆեսիոնալ հաճախորդ 13.6.4 կամ 13.7 ենթակետով սահմանված պահանջներին համապատասխանելու հիմքով, կարող է Բանկին տալ համաձայնություն որակավորված ներդրող համարվելու վերաբերյալ՝ ստորագրելով համապատասխան դիմում, որը Բանկը ներկայացնում է ՀՀ ԿԲ՝ դիմումը ստորագրելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:

13.11 Հաճախորդի նախաձեռնությամբ Հաճախորդը դասակարգվում է որպես պրոֆեսիոնալ միայն Բանկի սահմանած՝ Հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ գնահատման դրական արձանագրության հիման վրա:

13.12 Իրավաբանական անձ Հաճախորդների դեպքում գիտելիքի և փորձի վերաբերյալ գնահատումն իրականացվում է այն ղեկավարի, աշխատակցի կամ անձի նկատմամբ, որն իրավասու է Հաճախորդի անունից գործարքներ կնքել:

13.13 Եթե պրոֆեսիոնալ դասակարգված Հաճախորդը կարծում է, որ ի վիճակի չէ գնահատել և կառավարել ներդրումային ծառայություններից կամ ներդրումներից բխող ռիսկերը, ապա պարտավոր է դիմել Բանկին՝ իրեն որպես ոչ պրոֆեսիոնալ Հաճախորդի վերաբերվելու համար:

13.14 Պրոֆեսիոնալ դասակարգված Հաճախորդը պարտավոր է Բանկին տեղեկացնել այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել Հաճախորդի պրոֆեսիոնալ դասակարգման վրա: Եթե Հաճախորդի կողմից տրամադրված կամ այլ կերպ Բանկին հասանելի դարձած տեղեկատվության հիման վրա, Բանկի գնահատականով, Հաճախորդն այլևս չի բավարարում այն պայմաններին, որոնց հիման վրա դասակարգվել է պրոֆեսիոնալ Հաճախորդ, կամ եթե Բանկը պարզում է, որ հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունները եղել են անարժանահավատ, Բանկը անհապաղ դադարեցնում է Հաճախորդի պրոֆեսիոնալ դասակարգումը, որի մասին 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Հաճախորդին՝ Պայմանագրով սահմանված կապի միջոցներով:

13.15 Եթե Հաճախորդը հրաժարվում է ստորագրել պրոֆեսիոնալ դասակարգվելու համաձայնությունը, ապա դասակարգվում է որպես ոչ պրոֆեսիոնալ:

13.16 Ոչ պրոֆեսիոնալ դասակարգված Հաճախորդները Բանկի կողմից դիտարկվում են ոչ պրոֆեսիոնալ Ներդրումային ծառայության բոլոր տեսակների և Արժեթղթերով բոլոր գործարքների մասով, բացառությամբ այն



դեպքերի, երբ Հաճախորդը դիմել է Բանկին՝ դասակարգվելու ոչ պրոֆեսիոնալ Ներդրումային ծառայության կամ Արժեթղթերի կոնկրետ տեսակի շրջանակներում:

13.17 Պայմաններով սահմանված չափանիշներին չհամապատասխանող, ինչպես նաև պրոֆեսիոնալ դասակարգվելուց հրաժարվող Հաճախորդը դասակարգվում է որպես ոչ պրոֆեսիոնալ:

13.18 Պայմանագիր կնքած յուրաքանչյուր Հաճախորդի համար Բանկը բացում է Բրոքերային հաշիվ:

13.19 Բրոքերային հաշվի բացման, վարման և փակման ծառայությունը Բանկն իրականացնում է՝ համաձայն Բանկի կողմից ընդունված Սակագների:

13.20 Յուրաքանչյուր Հաճախորդի համար Բանկում բացվում է առանձնացված Բրոքերային հաշիվ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

13.21 Բանկը վարում է Բրոքերային հաշիվների այնպիսի Հաշվառում, որը թույլ է տալիս ցանկացած պահի առանձնացնել Հաճախորդի միջոցները այլ հաճախորդի և Բանկի սեփական միջոցներից:

13.22 Բրոքերային հաշվից միջոցների փոխանցումը կատարվում է միայն Հաճախորդի կողմից տրված հանձնարարականների և/կամ Պատվերների հիման վրա, բացառությամբ օրենքով և Պայմանագրով սահմանված դեպքերի:

13.23 Բրոքերային հաշվին միջոցների մուտքագրումը/հետկանչումը կատարվում է միայն Բանկում սպասարկվող Հաճախորդի բանկային հաշիվներին/հաշիվներից:

13.24 Բանկը չի կարող ի շահ իրեն կամ որևէ այլ Հաճախորդի տնօրինել և/կամ օգտագործել Հաճախորդի Բրոքերային հաշվին առկա միջոցները, բացառությամբ Պայմանագրով նախատեսված դեպքերի:

13.25 Բրոքերային հաշվին դրամական միջոցների մուտքագրումը կատարվում է երկու եղանակով (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով)՝

13.25.1 Հաճախորդի բանկային հաշվից համալրման միջոցով,

13.25.2 Բրոքերային գործառնությունների արդյունքում առաջացած միջոցների հաշվին:

13.26 Դրամական միջոցների ելքագրումը Բրոքերային հաշվից կատարվում է հետևյալ եղանակներով և դեպքերում (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով)՝

13.26.1 Հաճախորդի դրամական միջոցների հետկանչման հանձնարարականի միջոցով՝ համաձայն Բանկում գործող սահմանված ձևի,

13.26.2 Բրոքերային գործառնությունների արդյունքում օգտագործված միջոցների հաշվին,

13.26.3 Բրոքերային ծառայությունների դիմաց միջնորդավճարների, գործառնական ծախսերի, ինչպես նաև համապատասխան հարկերի գանձման դեպքում,

13.26.4 Դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռների, օրենքով և Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրերով սահմանված դեպքերում:

13.27 Պայմանագրով և Պայմաններով սահմանված գործարք կնքելու համար Հաճախորդը Բանկին է ներկայացնում Պատվեր, որը պետք է պարունակի Գործարքի էական պայմանները: Պատվերում կարող է նշվել Պայմաններով սահմանված Պատվերի տեսակներից մեկը, ինչպես նաև Պատվերի կատարման ենթակա լինելու ժամկետները: Պատվերի տեսակը նշված չլինելու դեպքում այն համարվում է Շուկայական պատվեր:

13.28 Պատվերի տեսակներն են.

13.28.1 Շուկայական պատվեր,

13.28.2 Գնման/վաճառքի ստոպ պատվեր,

13.28.3 Գնման/վաճառքի լիմիտային պատվեր,

13.28.4 Գնման/վաճառքի ստոպ լիմիտային պատվեր:

13.29 Հաճախորդը Պատվերը կարող է ներկայացնել էլեկտրոնային կամ թղթային եղանակով.

13.29.1 Թղթային եղանակով Պատվերը ներկայացվում է ստորագրված տարբերակով 2 օրինակից Բանկի՝ Հաճախորդների սպասարկման սրահներում,

13.29.2 Էլեկտրոնային եղանակով Պատվերը ներկայացվում է.

- Հաճախորդի՝ Պայմանագրում նշված էլ.հասցեից Բանկի՝ Պայմանագրում նշված էլ.հասցեին այն ուղարկելով ստորագրված և սկանավորված,

- Հաճախորդի՝ Պայմանագրում նշված էլ.հասցեից Բանկի՝ Պայմանագրում նշված էլ.հասցեին այն ուղարկելով ազատ ֆորմատի հաղորդագրությամբ՝ պահպանելով Պատվերի սահմանված ձևանմուշում առկա և/կամ գործարքի կնքման համար անհրաժեշտ ամբողջ տեղեկատվության առկայությունը,

- Բանկի բջջային/վեբ հավելվածի միջոցով:

13.30 Եթե Բանկի կողմից կա Պատվերում նշված գործարքի պայմաններին բավարարող առաջարկ, ապա Բանկը կարող է Պատվերը բավարարել Բանկի սեփական միջոցների հաշվին՝ առաջնորդվելով 13.31 կետով սահմանված կարգով:



13.31 Բանկը կարող է սեփական միջոցների հաշվին կատարել արժեթղթերի առուվաճառքի գործարք՝ Հաճախորդի կամ Գործընկերոջ հետ կնքելով արժեթղթերի առուվաճառքի պայմանագիր:

13.31.1 Արժեթղթերի առուվաճառքի պայմանագիրը կնքվում է՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և կողմերի իրավահարաբերությունները կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերով և սույն Պայմանագրով, որոնք հանդիսանում են Բանկի և Հաճախորդի, Բանկի և Գործընկերոջ միջև կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

13.31.2 Արժեթղթերի առուվաճառքի պայմանագրով սահմանված պարտավորությունը ժամանակին չկատարելու համար Բանկն իրավունք ունի կիրառել տույժ պայմանագրի ընդհանուր գնի 0.1%-ի չափով ուշացման յուրաքանչյուր օրվա համար: Հաշվարկված տույժի գումարը ենթակա է վճարման ՀՀ դրամով՝ հիմք ընդունելով վճարման նախորդ օրվա՝ ՀՀ ԿԲ կողմից սահմանված միջին փոխարժեքը:

13.31.3 Հաճախորդի/Գործընկերոջ կողմից Արժեթղթերի /առուվաճառքի պայմանագրով սահմանված պարտավորությունը կատարելուց հրաժարվելու դեպքում Բանկն իրավունք ունի կիրառել տուգանք պայմանագրի ընդհանուր գնման գնի 5%-ի չափով: Հաշվարկված տուգանքի գումարը ենթակա է վճարման ՀՀ դրամով առավելագույնը դրա հիմքի առաջացման օրվան հաջորդող օրվանից հաշված 3-րդ աշխատանքային օրը՝ հիմք ընդունելով վճարման նախորդ օրվա՝ ՀՀ ԿԲ կողմից սահմանված միջին փոխարժեքը:

13.31.4 Արժեթղթերի առուվաճառքի պայմանագրով որոշված բոլոր տուժանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ սահմանած՝ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը, ինչպես նաև տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը:

13.31.5 Արժեթղթերի առուվաճառքի պայմանագրում սահմանվում են հաշվարկային ռիսկ կրող կողմը/կողմերը: Եթե կողմերից որևէ մեկը հաշվարկների ռիսկ չի կրում, ապա տվյալ կողմը կարող է միակողմանիորեն հետաձգել իր կողմից կատարվելիք վճարման (փոխանցման) գործառնության օրը մինչև մյուս (հաշվարկների ռիսկը կրող) կողմի ժամկետանց վճարման (փոխանցման) ենթակա ամբողջ ծավալով գումարի (պարտատոմսերի) ստացման օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

13.31.6 Բանկն իրավունք ունի առուվաճառքի պայմանագրով սահմանված գործարքը իրականացնելու շրջանակներում Հաճախորդի համապատասխան հաշվին կիրառել սահմանափակում Հաճախորդի՝ պայմանագրով սահմանված պարտավորության մասով:

13.32 Հաճախորդը էլեկտրոնային Պատվերը էլ. հասցեով ներկայացնելիս ներկայացնում է միայն Պայմանագրում նշված Բանկի իրավասու հասցեին, իր իրավասու հասցեից: Այլ էլ.հասցեից ստացված էլեկտրոնային Պատվերը համարվում է առոչինչ:

13.33 Պայմանագրում նշված հասցեների փոփոխության դեպքում Բանկը և Հաճախորդը փոփոխությունները կատարելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պաշտոնապես թղթային եղանակով (ստորագրված և/կամ կնքված) ծանուցում են միմյանց հասցեների փոփոխության մասին, իսկ հետագայում իրավասու հասցե է դառնում վերջին պաշտոնական տեղեկացմամբ ներկայացված էլեկտրոնային հասցեն:

13.34 Այն դեպքերում, երբ Բանկից անկախ տեխնիկական և այլ հանգամանքներից ելնելով Պատվերը չի հասնում Բանկին, նրան հասնում է ուշացումով, ուղարկվել է համապատասխան լիազորություն չունեցող երրորդ անձանց կողմից կամ վերջիններիս հայտնի դարձած այլ միջոցներով, այդ թվում՝ ցանցային չարտոնված մուտքերի, գաղտնաբառերի չարտոնված օգտագործման և այլ միջոցներով ու եղանակներով, Բանկը պատասխանատվություն չի կրում նշված իրադարձությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար:

13.35 Հաճախորդը կարող է հեռախոսազանգի միջոցով հաղորդել իր հանձնարարականները և/կամ տեղեկանալ իր կողմից ներկայացված Պատվերը ստանալու փաստի վերաբերյալ:

13.36 Հեռախոսով Պատվերը փոխանցված է համարվում Բանկի աշխատակցի կողմից Պատվերի բոլոր վավերապայմանների համապատասխան ծրագրային համակարգ գրանցելուց և Հաճախորդի կողմից այն վավերացնելուց հետո:

13.37 Թղթային եղանակով պատվերը ներկայացնելու դեպքում Հաճախորդը պատվերը (2 օրինակից)՝ ստորագրված և/կամ կնքված ներկայացնում է թղթային կրիչի վրա, որոնց վրա կատարվում է նշում Բանկի կողմից դրանց ստացման օրվա, ժամի և րոպեի վերաբերյալ: Բանկի կողմից ստորագրված մեկ օրինակը վերադարձվում է Հաճախորդին:

13.38 Եթե Պատվերի կատարումը Հաճախորդի համար կարող է դժվարություններ և/կամ բացասական հետևանքներ առաջացնել, ինչի մասին Բանկը կարող է ունենալ տեղեկություններ, ապա Բանկի աշխատակիցը Հաճախորդին հեռախոսով կամ էլեկտրոնային փոստի միջոցով զգուշացնում է պատվերի կատարման դժվարությունների և/կամ բացասական հետևանքների մասին:



13.39 Եթե Պատվերում առկա են այնպիսի Արժեթղթեր, որոնց առևտուրը կասեցված կամ արգելված է, ապա Բանկը էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացնում է Հաճախորդին այդ մասին և տրամադրում է վստահելի աղբյուր Պատվերում նշված արժեթղթերի կասեցման և արգելման որոշման հետ ծանոթանալու համար:

13.40 Հաճախորդների կողմից ստացված Պատվերները Բանկը դասավորում է ըստ դրանց ստացման ժամի և Գործարքի կնքման վայրի՝ էլեկտրոնային եղանակով:

13.41 Հաճախորդների միանման պայմաններով Պատվերները Բանկը կարող է համախմբել իրար հետ:

13.42 Հաճախորդը մինչև Պատվերի կատարման պահը կարող է հետ կանչել իր Պատվերը՝ ներկայացնելով Պատվերի կասեցման հայտ էլեկտրոնային եղանակով՝ իր իրավասու հասցեից Բանկի իրավասու հասցեին կամ հեռախոսով: Պատվերի կասեցման հայտն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու անհնարինության դեպքում Հաճախորդը այն կարող է ներկայացնել թղթային եղանակով՝ երկու օրինակից:

13.43 Եթե Պատվերի կասեցման հայտը տրվել է Պատվերով նախատեսված Գործարքի կնքումից հետո, ապա Բանկը Պատվերի կասեցման հայտի ստացման նույն եղանակով հայտնում է Հաճախորդին կասեցման անհնարինության մասին:

13.44 Պատվերի կասեցման հայտը ստանալու դեպքում Բանկը Պատվերը հեռացնում է դասավորված հայտերի ցուցակից և կասեցնում է Պատվերով նախատեսված Գործարքների կնքումը:

13.45 Հետագա անհամաձայնություններից խուսափելու համար Բանկի և Հաճախորդի միջև բոլոր հեռախոսային խոսակցությունները ձայնագրվում են:

13.46 Հաճախորդի Պատվերը հիմք է հանդիսանում մինչև Բանկի կողմից Պատվերի կատարման պահը Հաճախորդի հաշվին Պատվերի կատարման համար Սակագներով սահմանված միջնորդավճարի չափով գումարի ստացման: Բանկը իրավունք ունի մերժել Պատվերի կատարումը Հաճախորդի միջոցների անբավարարության պարագայում:

13.47 Յուրաքանչյուր գործարք իրականացնելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան գործարքի կնքման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը, Բանկը Հաճախորդի իրավասու հասցեին ուղարկում է Գործարքի կնքման վերաբերյալ հաշվետվություն: Հաշվետվությունը համարվում է ընդունված, եթե Հաճախորդը այն ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում չի առարկում հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության վերաբերյալ:

13.48 Մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, Բանկը Հաճախորդի իրավասու հասցեին ուղարկում է Հաճախորդի միջոցների տեղաշարժի և կատարված գործարքների վերաբերյալ ամսական հաշվետվություն: Հաշվետվությունը համարվում է պատշաճ ստացված Պայմաններով սահմանված կարգով:

13.49 Հաճախորդը կարող է իր նախաձեռնությամբ պահանջել այլ Հաշվետվություններ Գործարքների, դրա հիմքում ընկած միջոցների շարժի և կիրառված սակագների վերաբերյալ: Բանկը իրավունք ունի Հաճախորդի նախաձեռնությամբ այլ Հաշվետվությունների համար սահմանել սակագին:

13.50 Պայմաններով սահմանված ծառայությունների համար Բանկը Հաճախորդից գանձում է Բանկի Սակագներով սահմանված վճարներ: Պայմանագրում նշված ՀՀ դրամով (Բրոքերային) հաշվում միջոցների անբավարարության դեպքում Բանկը իրավունք ունի վճարները անակցեպտ գանձել Հաճախորդի՝ Բանկում վարվող այլ արժույթների հաշիվներից: Ընդ որում վճարները Հաճախորդի այլ արժույթով հաշիվներից գանձման պարագայում կիրառվում է գանձման պահի Բանկի անկանխիկ առքի փոխարժեքը: Այն դեպքում, երբ Հաճախորդի հաշիվներին առկա չեն բավարար միջոցներ սահմանված գանձումները կատարելու համար, Բանկն իրավունք ունի գանձել չբավարարող չափով գումար՝ Հաճախորդի անունով ձևավորելով դեբիտորական պարտավորություն:

13.51 Հաճախորդը, ստորագրելով Դիմում-պայմանագիրը, տեղեկացված է, որ Բանկի ինտերնետային կայքում հրապարակված Սակագները տարածվում են ֆիզիկական անձ Հաճախորդների վրա, որոնք հանդիսանում են ՀՀ քաղաքացի և որոնց կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, իրավաբանական անձ Հաճախորդների վրա, որոնց 50 տոկոս և ավել բաժնետերերը կամ փայտատերերը չեն հանդիսանում այլ երկրի քաղաքացի, կամ որոնց վերջնական շահառուների 50 տոկոսից ավելին չեն հանդիսանում այլ երկրի քաղաքացի: Բոլոր այլ Հաճախորդների համար սահմանվում են անհատական Սակագներ:

13.52 Հաշվի առնելով գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի տեսակը, ծավալները, շուկաները և այլ պայմաններ Բանկը կարող է սահմանել լրացուցիչ սակագներ՝ դրա մասին տեղեկացնելով Հաճախորդին:

13.53 Հաճախորդը պարտավոր է հատուցել նաև Բանկի կողմից Հաճախորդի Պատվերների կատարման հետ կապված գործառնական ծախսերը, որոնք կարող են առաջանալ Բանկի կողմից երրորդ անձանց ներգրավմամբ Գործարքներ կնքելու և վերջնահաշվարկ ապահովելու անհրաժեշտությունից, մասնավորապես Առևտրային համակարգերի և Բանկի գործակալների կողմից Բանկից գանձվող վճարներ (բացառությամբ գործակալների հետ կնքված պայմանագրերով սահմանված սակագներով գանձվող մշտական և սովորական միջնորդավճարների) և այլն, որոնք տարբեր են՝ կախված առևտրային համակարգից, գործարքի տեսակից և այլ հանգամանքներից: Նշված ծախսերը չեն ներառվում Սակագներում: Հաճախորդին ներկայացվող հաշվետվություններում արտացոլվում են և՛



նշված ծախսերը, և՛ դրանց հատուցման համար Բանկի կողմից իրականացված գանձումներն ու պահումները: Հաճախորդի կողմից համապատասխան պահանջ ներկայացնելու դեպքում Բանկը, հնարավորության դեպքում, մատնանշում է այն աղբյուրները, որոնցից կարելի է տեղեկություններ ստանալ սույն կետում նշված միջնորդավճարների վերաբերյալ:

13.54 Բանկը Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերի կատարման համար առաջնորդվում է հետևյալ քաղաքականությամբ.

13.54.1 Բանկը ձեռնարկում է բոլոր քայլերը, որպեսզի կատարի Հաճախորդի Պատվերը Հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով՝ հաշվի առնելով գինը, ծախսերը, կատարման ժամկետը, Պատվերի ընդհանուր ծավալը և այլ գործոններ:

13.54.2 Հաճախորդների կողմից ներկայացված այլ հավասար պայմաններ ունեցող Պատվերները Բանկի կողմից կատարվում են ըստ դրանց ստացման հաջորդականության: Միևնույն ժամանակ միանման պայմաններով Պատվերները Բանկի աշխատակիցը կարող է համախմբել և ընթացք տալ միաժամանակ:

13.54.3 Եթե շուկայի ուսումնասիրության արդյունքում Բանկի աշխատակիցը կարողանում է Հաճախորդի Պատվերը բավարարել ավելի լավ գնով, քան նշված է Հաճախորդի Պատվերում, որն ավելի մեծ շահույթ կարող է ապահովել Հաճախորդի համար, և այդ գնով կատարված գործարքը ոչ մի բացասական հետևանք չի առաջացնի Հաճախորդի համար, ապա Բանկի աշխատակիցը կարող է իրականացնել գործարք՝ շեղվելով Պատվերում նշված պայմաններից:

13.55 Հաճախորդը կարող է ներկայացնել Պատվերի չեղարկման հայտ: Բանկը բավարարում է չեղարկման հայտը, եթե Պատվերը կամ դրանով նախատեսված գործառնություններից ոչ մեկը դեռ չեն կատարվել Բանկի կողմից: Հակառակ դեպքում Բանկը տեղեկացնում է Հաճախորդին Պատվերի չեղարկման հայտի մերժման մասին՝ Պայմանագրով սահմանված կապի միջոցով:

13.56 Եթե Բանկը օրենքի համաձայն պարտավոր է իրականացնել Հաճախորդի հարկային գործակալի գործառնությունները, ապա գանձում և փոխանցում է Հաճախորդի կողմից վճարման ենթակա համապատասխան հարկերը:

13.57 Սույն ընթացակարգով սահմանված վճարները, ծախսերի հատուցումները, տոկոսները, տույժերն ու տուգանքները և Հաճախորդի՝ Բանկի նկատմամբ ցանկացած այլ տեսակի պարտավորությունների գումարները Բանկի իրավունք ունի անակցեպտ կարգով գանձել Հաճախորդի կողմից իրեն տրամադրված միջոցներից և/կամ Հաճախորդի բանկային հաշիվներից, իսկ Հաճախորդը պարտավոր է ապահովել համապատասխան միջոցների առկայությունը նշված հաշիվներին: Բանկը Պատվերի կատարումից/հաղորդումից անմիջապես հետո գանձում է համապատասխան միջոցները Բրոքերային հաշվից, ընդ որում Բրոքերային հաշվում տվյալ արժույթով միջոցների անբավարարության դեպքում համապատասխան միջոցները գանձվում են այլ արժույթով արտահայտված Բրոքերային հաշիվներից՝ Բանկում գործող փոխարժեքով:

13.58 Յուրաքանչյուր կողմ կարող է Պայմանագիրը միակողմանիորեն լուծել, իսկ դրանով սահմանված Ներդրումային ծառայությունների մատուցումը՝ դադարեցնել մյուս կողմին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելու դեպքում:

13.59 Հաճախորդի նախաձեռնությամբ Պայմանագրում փոփոխություններ և/կամ լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Բանկի հետ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

13.60 Բրոքերային հաշիվը փակվում է Պայմանագրի լուծման/դրանով սահմանված՝ Ներդրումային ծառայությունների մատուցման դադարեցման դեպքում:

13.61 Բրոքերային հաշիվը չի կարող փակվել, եթե այն գրոյական չէ և/կամ Հաճախորդը ունի չմարված պարտավորություններ Բանկի նկատմամբ: Եթե Բրոքերային հաշիվը գրոյական չէ, ապա Հաճախորդը պետք է Բանկին ներկայացնի Բրոքերային հաշվից միջոցների տեղափոխման հանձնարարական:

13.62 Պայմանագրի լուծումից 2 աշխատանքային օր առաջ Բանկը, չստանալով միջոցների տեղափոխման հանձնարարական, Պայմանագրում սահմանված կապի միջոցներով Հաճախորդին ուղարկում է ծանուցում՝ միջոցների տեղափոխման հանձնարարական տալու վերաբերյալ:

13.63 13.62 կետով սահմանված հանձնարարականը Հաճախորդի կողմից չներկայացնելու դեպքում Բանկն իրավունք ունի հաճախորդի միջոցները տեղափոխել տարանցիկ հաշվի՝ մինչև Հաճախորդի առաջին պահանջը, ընդ որում Հաճախորդի հաշվին արտարժույթով դրամական մնացորդի առկայության դեպքում այն փոխարկվում է գործարքի կատարման օրվա դրությամբ Բանկի կողմից սահմանված անկանխիկ առքի փոխարժեքով և փոխանցվում տարանցիկ հաշվին:

13.64 Բանկը պատասխանատու է Բանկում Ներդրումային ծառայությունների շրջանակում շահերի բախման դեպքերի բացահայտման և դրանց կառավարման համար՝ առաջնորդվելով շահերի բախման կանխարգելման



ուղղված բավարար միջոցների նախատեսման, շահերի բախման հնարավոր դեպքերի ժամանակին բացահայտման և այլ սկզբունքներով, որոնք ամրագրված են Բանկի ներքին իրավական համապատասխան ակտերում: Հաճախորդի պահանջի հիման վրա Բանկը Հաճախորդին տրամադրում է շահերի բախման քաղաքականության ամբողջ նկարագիրը:

13.65 Բանկը գործադրում է լավագույն ջանք՝ Հաճախորդի շահերի և միջոցների պաշտպանության համար՝ երաշխավորելով Հաճախորդի միջոցների առանձնացված հաշվառումը, ինչպես նաև Ներդրումային ծառայության մատուցման շրջանակում կոնտրագենտների հետ գործարար հարաբերությունների հաստատումից առաջ իրականացնելով կոնտրագենտի պատշաճ ուսումնասիրություն:

Արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայություն

13.66 Արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայությունների մատուցումը իրականացվում է Փաթեթի կառավարչի (սույն փաստաթղթում՝ Բանկի) և Կառավարման հիմնադրի (սույն գլխում՝ Հաճախորդ) միջև կնքված գրավոր Պայմանագրի հիման վրա:

13.67 Մինչև Պայմանագրի կնքումը Բանկը՝

13.67.1 Հաճախորդին ընձեռում է հնարավորություն ծանոթանալու Արժեթղթերի փաթեթի կառավարման գործունեությունը կարգավորող իրավական ակտերին,

13.67.2 Հաճախորդին տեղեկացնում է Արժեթղթերի ձեռքբերման, հաշվառման, օտարման և դրանցով ամրագրված իրավունքների իրականացման առանձնահատկությունների և դրանց հետ կապված ռիսկերի մասին, ներդրողների պաշտպանության կիրառելի մեխանիզմների մասին (առկայության դեպքում), ինչպես նաև Հաճախորդին կարող է տրամադրել ակնկալվող գործարքների հետ կապված ռիսկերի վերաբերյալ տեղեկություններ՝ հաշվի առնելով Հաճախորդի՝ ներդրումների բնագավառում ունեցած փորձը և գիտելիքները, ինչպես նաև կառավարման առարկա հանդիսացող արժեթղթերի գինը և ծավալը:

13.68 Պայմանագրով Հաճախորդի կողմից Բանկին հանձնված միջոցների Հավատարմագրային կառավարման արդյունքում ստացվող արժեթղթերը և/կամ դրամական միջոցները, առանց Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու, Բանկի կողմից ստանալու պահից դառնում են Արժեթղթերի փաթեթի կառավարման առարկա, եթե այլ բան սահմանված չէ Արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման Կանոններով և/կամ Պայմանագրով:

13.69 Պայմանագրի գործունեության ողջ ժամանակահատվածում Բանկն իրավունք ունի Արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայության մատուցման շրջանակներում Հաճախորդից ընդունել միջոցներ: Իսկ Հաճախորդն, իր հերթին, իրավունք ունի, իր հայեցողությամբ, Պայմանագրի գործունեության ողջ ժամանակահատվածում իրականացնել իր միջոցների դուրսբերում՝ Բանկին ներկայացնելով դիմում թղթային եղանակով կամ էլեկտրոնային՝ Բանկում գրանցված իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից: Բանկը Հաճախորդի կողմից ներկայացված դիմումին ընթացք է տալիս 5 աշխատանքային օրվա ընթացքում:

13.70 Փաթեթի կառավարումից միջոցների դուրս բերումը կատարվում է Հաճախորդի կողմից ներկայացված բանկային ռեկվիզիտների հիման վրա (Հաճախորդի կողմից այլ բանկերի ռեկվիզիտների ներկայացման դեպքում միջոցների տեղափոխման համար կարող է գանձվել միջնորդավճար համաձայն Բանկի կողմից սահմանված Սակագների):

13.71 Բանկն իր Հաճախորդներին առաջարկում է այնպիսի մեթոդ, որը վերջիններիս հնարավորություն է տալիս գնահատել և որևէ իմաստալից հենանիշի հետ համեմատել Արժեթղթերի փաթեթի կառավարման արդյունավետությունը (արժեթղթերի փաթեթի եկամտաբերությունը): Իմաստալից հենանիշի կառուցման և ներկայացման սկզբունքները համաձայնեցվում են Հաճախորդի հետ Ներդրումային հայտարարագրում, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս: Իմաստալից հենանիշը պետք է բավարարի հետևյալ պայմաններին միաժամանակ.

13.71.1 Պետք է արտահայտի այլընտրանքային ներդրումների եկամտաբերությունը, որը հնարավորություն կտա Հաճախորդին համեմատել կառավարման արդյունավետությունը այլընտրանքային ներդրումների արդյունավետության հետ: Մասնավորապես, իմաստալից հենանիշը պետք է արտահայտի ֆինանսական շուկայում առկա համադրելի այլ գործիքների եկամտաբերությունը, որոնց ժամկետայնությունը, ռիսկը, ներդրման երկիրը և այլ էական բնութագրիչները համապատասխանում են, հնարավորինս մոտ կամ համեմատելի են Հաճախորդի կողմից նշված սահմանափակումներին,

13.71.2 Չպետք է հիմնվի Բանկի՝ անցյալում ձեռք բերված եկամտաբերության կամ վերջինիս ազդեցության տակ գտնվող ցուցանիշների վրա

13.72 Իմաստալից հենանիշ սահմանելիս հաշվի են առնվում Հաճախորդի միջոցների կառավարման ու ներդրման ուղղությունները, այն արժեթղթերի տեսակները, որոնք կարող են ընդգրկվել փաթեթում և այն



գործարքները (ներառյալ սահմանափակումները), որոնք կարող են իրականացվել փաթեթի կառավարման շրջանակներում: Որպես իմաստալից հենանիշ կարող են հանդես գալ՝

13.72.1 ՀՀ ԿԲ կողմից հայտարարված վերաֆինանսավորման տոկոսադրույքը,

13.72.2 ՀՀ բանկային համակարգում գործող բանկային ավանդների միջին եկամտաբերության ցուցանիշները՝ ըստ արժույթի և/կամ ժամկետայնության,

13.72.3 Պետական պարտքի տոկոսադրույքները կամ դրանց հիման վրա հաշվարկված միջինացված ցուցանիշները,

13.72.4 Երկիրը, տարածաշրջանը կամ ճյուղը բնութագրող բորսայական ինդեքսները և մակրոտնտեսական ցուցանիշները,

13.72.5 Վերոնշյալ ցուցանիշների հիման վրա որոշակի կշիռներով կառուցված համախմբված ցուցանիշ:

13.73 Ներդրումային հայտարարագիրը պետք է պարունակի՝

13.73.1 Արժեթղթերի փաթեթի կառավարման ուղղությունները և նպատակը, որոնք բխում են Հաճախորդի ներդրումային ռիսկեր կրելու ցանկության և կարողության աստիճանից,

13.73.2 Ներդրումային փաթեթի կազմի և կառուցվածքի սահմանափակումները (տարբեր տեսակի ակտիվների տեսակարար կշիռների թույլատրելի միջակայքերը):

13.74 Հաճախորդը Պայմանագրով սահմանված Արժեթղթերը և/կամ դրամական միջոցները հանձնում է Բանկի հավատարմագրային կառավարմանը, իսկ Բանկը պարտավորվում է այդ Ակտիվների կառավարումն իրականացնել ի շահ Հաճախորդի կամ վերջինիս կողմից նշված շահառուի:

13.75 Ակտիվները հավատարմագրային կառավարման հանձնելը չի հանգեցնում Բանկին դրա նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման:

13.76 Բանկին հանձնված Արժեթղթերը և/կամ դրամական միջոցներն առանձնացվում են Բանկի և այլ Հաճախորդների Արժեթղթերից և/կամ դրամական միջոցներից և պահվում են առանձին հաշիվներում:

13.77 Բանկը Հաճախորդին և/կամ շահառուին ներկայացնում է Արժեթղթերի կառավարման մասին հաշվետվություն ոչ ուշ, քան հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվան հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվությունը համարվում է ընդունված, եթե Հաճախորդը և/կամ շահառուն այն ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում չեն առարկում հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության վերաբերյալ:

13.78 Հաճախորդը Արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայության մատուցման պայմանագրի ներքո պարտավոր է՝

13.78.1 Բանկի պահանջով վերջինիս տրամադրել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր այն փաստաթղթերը կամ այլ տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են Բանկին իր պարտականությունների պատշաճ կատարման համար,

13.78.2 Բանկին վճարել Բանկի Սակագներով սահմանված վարձատրությունը և/կամ պարգևավճարը,

13.78.3 Պայմանագիրը միակողմանի լուծելու պարագայում գրավոր ծանուցել Բանկին առնվազն 10 աշխատանքային օր առաջ:

13.79 Պայմանագիրը լուծելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Բանկը Հաճախորդին կամ նրա ներկայացուցչին է փոխանցում Հաճախորդին պատկանող Արժեթղթերն ու դրամական միջոցները, բացառությամբ այն ակտիվների, որոնք Բանկի՝ երրորդ անձանց հետ կնքված պայմանագրերի ուժով ենթակա են վերադարձման ավելի ուշ ժամկետի ընթացքում. ընդ որում, նշված ակտիվները վերադարձվում են Հաճախորդին Բանկի կողմից դրանք երրորդ անձանցից ստանալուն զուգընթաց, դրանցից յուրաքանչյուրի ստացումից 2 աշխատանքային օրվա ընթացքում:

13.80 13.78.2 կետով սահմանված վճարները և այլ ծախսերը գանձվում են Հաճախորդի՝ Բանկին հավատարմագրային կառավարմանը հանձնված ակտիվներից:

13.81 Ակտիվների կազմում ընդգրկված Արժեթղթերի շուկայական գնի փոփոխությունը և/կամ պարտքային Արժեթղթերի դեպքում թողարկողի կողմից Արժեթղթերի մարման իր պարտավորությունը չկատարելը համարվում է անհաղթահարելի ուժի ազդեցություն և Բանկն այս պարագայում պատասխանատվություն չի կրում Ակտիվների արժեքի նվազեցման և/կամ պարտավորությունները չկատարելու համար:

13.82 Արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայության մատուցման շրջանակներում Բանկի և Հաճախորդի շահերի բախումը կանխելու և հնարավոր բացասական արդյունքները նվազեցնելու նպատակով Բանկն իր մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում պարտավորվում է պահպանել իր շահերի նկատմամբ Հաճախորդի շահերի գերակայության, հավասարության և արդարության սկզբունքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր Հաճախորդի հետ կնքված Պայմանագրով և Ներդրումային հայտարարագրով սահմանված պայմանները:

13.83 Արժեթղթերում ներդրումները երաշխավորված չեն ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:



13.84 Պայմանագրի պահանջների չպահպանման համար կողմերի պատասխանատվությունը սահմանված է Պայմաններով (կետ 15):

13.85 Բանկի և Հաճախորդի միջև առաջացող վեճերի լուծման կարգը սահմանված է Պայմաններով (կետ 16):

14. Բանկային գաղտնիք: Միջոցների ծագման օրինականություն

14.1 Բանկը երաշխավորում է Հաճախորդին սպասարկելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած և ՀՀ օրենսդրության համաձայն բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների գաղտնիությունը:

14.2 Այն դեպքերում, երբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև այլ անձանց և Բանկի միջև կնքված պայմանագրերի (այլ անձանց կողմից Բանկին ծառայությունների մատուցման, կորպորատիվ միաձուլումների, միացումների, այլ անձանց ակտիվների ձեռքբերման և/կամ օտարման, և այլ գործարքների) ուժով Բանկը ստիպված է տրամադրել բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, Բանկը պարտավոր է դա տրամադրել միայն անհրաժեշտ նվազագույն ծավալով, այդ նպատակով լիազորված անձանց:

14.3 Հաճախորդը սույնով համաձայնություն է տալիս Բանկին՝ Օտարերկրյա պետական լիազոր մարմիններին (այսուհետ՝ Լիազոր մարմին) և/կամ վերջինիս կողմից նշված անձանց, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով նաև Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններին տրամադրել Հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, այդ թվում բանկային հաշիվների բացման և/կամ փակման վերաբերյալ տեղեկությունները, ցանկացած այլ տեղեկատվություն և փաստաթուղթ:

Հաճախորդը սույնով տրամադրում է իր անվերապահ համաձայնությունը, որ Բանկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ հարկային մարմիններին տրամադրի տեղեկատվություն հաճախորդի, վերահսկող անձանց, դրանց բանկային հաշիվների վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիայով (2010 թվականի արձանագրությամբ փոփոխված) ու «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրով, ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հրապարակած Միասնական հաշվետվողական ստանդարտի և դրա մեկնաբանության շրջանակներում:

14.4 Հաճախորդը պարտավոր է օտարերկրյա երկրների օրենսդրությամբ ստանձնած հարկային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու, պարտավորությունների պատշաճ կատարումը ապահովելու, այդ պարտավորությունների ցանկացած փոփոխությունը բացահայտելու նպատակով, Բանկի առաջին իսկ պահանջով վերջինիս տրամադրել ցանկացած տեղեկատվություն, հաշվետվություն և/կամ փաստաթուղթ՝ Բանկի սահմանած ձևով, և ցանկացած այլ եղանակով համագործակցել Բանկի հետ:

14.5 Բանկն իրավունք ունի Պայմաններով սահմանված հարկային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Հաճախորդի Հաշիվների նկատմամբ կիրառել սահմանափակում (արգելադրում) և (կամ) արգելափակել հաշվով գործառնությունների կատարումը, այդ կապակցությամբ մերժելով հաշվում առկա միջոցները տնօրինելու և հաշվով գործառնություններ կատարելու՝ հաճախորդի և երրորդ անձանց կողմից ներկայացված բոլոր հանձնարարականները, Լիազոր մարմնի և(կամ) վերջինիս կողմից նշված անձի օրինական պահանջի առկայության դեպքում համապատասխան դրամական միջոցները՝ անակցեպատ կարգով՝ առանց հաճախորդի լրացուցիչ հանձնարարությունների, զանձելով Հաճախորդի Հաշիվներից, փոխանցել Լիազոր մարմնին և(կամ) վերջինիս կողմից նշված անձին, իսկ Պայմաններով ստանձնած պարտավորությունները հաճախորդի կողմից չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու դեպքում նաև միակողմանի լուծել Հաճախորդի հետ կնքված պայմանագիրը (պայմանագրերը):

14.6 Հաճախորդի կողմից սույն Պայմաններով ստանձնած պարտավորություններ չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կարող է հիմք հանդիսանալ վերջինիս կողմից օրենքի ուժով, այդ թվում՝ օտարերկրյա երկրների օրենսդրությամբ, ստանձնած հարկային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու պարտավորություն ստանձնած այլ մարմինների և անձանց կողմից՝ բանկային համակարգի միջոցով կատարվող գործարքների դեպքում, Հաճախորդի դրամական միջոցներից պահումներ կատարելու համար:

14.7 Հաճախորդը երաշխավորում և հավաստիացնում է, որ Հաշվին մուտքագրվող միջոցները կապված չեն փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման կամ այլ հակաիրավական արարքի հետ: Հաճախորդը նաև հավաստիացնում է, որ Հաշիվը չի օգտագործվի որևէ հակաիրավական նպատակով:

14.8 Միջազգային իրավունքի նորմերի, միջազգային կառույցների և/կամ օտարերկրյա պետությունների կողմից սահմանված պատժամիջոցների հիման վրա և/կամ ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Բանկի



իրավասու մարմնի որոշմամբ՝ Բանկը կարող է մերժել Հաճախորդի հետ գործարքի կատարումը, գործարար հարաբերությունների հաստատումը և/կամ կասեցնել, դադարեցնել գործարքի կատարումը և/կամ Հաճախորդի հետ գործարար հարաբերությունները և/կամ միակողմանիորեն փակել Հաճախորդի հաշիվները կամ մինչև Բանկի պահանջով Հաճախորդի կողմից վերջինիս նույնականացման, գործարքը հիմնավորող կամ այլ փաստաթղթերի ներկայացումը/համալրումը կամ պահանջների կատարումը, ժամանակավորապես սահմանափակել այդ հաշիվներով գործառնությունները (օրինակ՝ արտարժույթային հաշիվներով միջազգային փոխանցումների կատարման և/կամ ստացման արգելք, միջազգային վճարային քարտերի տրամադրման/սպասարկման արգելք):

14.9 Հաճախորդը տեղեկացված է և համաձայն է, որ Բանկը պատասխանատվություն չի կրում այն դեպքերում, երբ Հաճախորդի կողմից կամ Հաճախորդին օգտին ներկայացված վճարման հանձնարարականների հիման վրա փոխանցվող միջոցները միջազգային իրավունքի նորմերի, միջազգային կառույցների և/կամ օտարերկրյա պետությունների կողմից սահմանված պատժամիջոցների հիման վրա բլոկավորվում (սառեցվում են) են այդ թվում՝ միջոցների փոխանցման գործընթացում ներգրավված միջնորդ բանկերում: Նկարագրված դեպքերում միջոցները Բանկի կողմից Հաճախորդին չեն վճարվում, չեն փոխհատուցվում և(կամ) չեն վերադարձվում և նման հանգամանքների բացասական հետևանքների ռիսկը կրում է Հաճախորդը:

15. Բանկի և Հաճախորդի պատասխանատվություն

15.1 Բանկը և Հաճախորդը պատասխանատվություն են կրում Պայմանագրի խախտման համար ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված կարգով: Կողմերը պատասխանատվություն չեն կրում Ընդհանուր/սույն Պայմաններով սահմանված իրենց իրավունքներն իրականացնելու հետևանքով մյուս կողմի կրած կորուստների համար:

15.2 Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդին սպասարկելու ընթացքում Հաճախորդի կորուստների և վնասների համար, եթե դա արդյունք է կապի կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, համակարգի օպերատորների և այլ երրորդ անձանց կողմից տրամադրվող ծառայությունների ընդհատման, դադարեցման, պետական մարմինների ակտերի, միջազգային իրավունքի նորմերի, միջազգային կառույցների և/կամ օտարերկրյա պետությունների կողմից սահմանված պատժամիջոցների հիման վրա կիրառված միջոցների բլոկավորումների (սառեցումների), անհաղթահարելի ուժի ազդեցության, հաճախորդի գործողությունների (անգործության), ինչպես նաև հաճախորդի կողմից իր իրավունքների չարաշահման և իրավասությունների սահմանազանցման: Բանկը նաև պատասխանատվություն չի կրում հաշվով կատարված գործառնությունների համար՝ Հաճախորդի մահվան (լուծարման), անգործունակության, անվճարունակության կամ սնանկության, ինչպես նաև նման այլ դեպքերում, եթե չի ստացել նշված փաստերի վերաբերյալ գրավոր հավաստում և այդ հանգամանքը ազդել է Բանկի վարքագծի վրա: Ընդ որում, Բանկը, հիմք ընդունելով օրենսդրության պահանջները, համապատասխան փաստերը հիմնավորող փաստաթղթերի բավարար լինելը որոշում է իր բացառիկ հայեցողությամբ:

15.3 Կողմերը համաձայնում են, որ առանց սահմանափակելու սույն Պայմաններով նախատեսված Բանկի այլ իրավունքները սույն Պայմանների շրջանակներում Հաճախորդին սպասարկելիս Բանկը պատասխանատվություն է կրում Հաճախորդներին պատճառած վնասների համար միայն այն դեպքերում, եթե վնասն արդյունք է Բանկի աշխատակիցների դիտավորության կամ կոպիտ անզգուշության:

15.4 Հաճախորդը պատասխանատվություն է կրում Բանկին պատճառված բոլոր վնասների համար (ներառյալ՝ բաց թողնված օգուտը) և սույնով անհետկանչելիորեն հանձնարարում է Բանկին անակցեպատ կարգով այդ գումարները դուրսգրել իր Հաշիվներից և ուղղել այդ պարտավորությունների գումարների մարմանը:

15.5 Կողմերն ազատվում են պարտավորությունների խախտման համար սահմանված պատասխանատվությունից, եթե խախտումը հետևանք է անհաղթահարելի ուժի՝ այսինքն՝ տվյալ պահին անկանխատեսելի և անկանխելի հանգամանքների ազդեցության:

16. Կիրառվող իրավունք, վեճերի լուծում

16.1 Սույն Պայմանների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

16.2 Պայմանագրի գործողության ընթացքում Բանկի և Հաճախորդի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, դատական կամ արբիտրաժային կարգով: Ընդ որում՝ կողմերը պարտավորվում են ուշադրությամբ ուսումնասիրել միմյանց պահանջները և համաձայնեցնել փոխշահավետ լուծումներ: Կողմերը գալիս են արբիտրաժային համաձայնության այն մասին, որ սույն պայմանագրի շուրջ ծագած բոլոր վեճերի լուծումը, կողմերից յուրաքանչյուրի պահանջով կարող է հանձնվել Հայաստանի Բանկերի Միության «Ֆինանսական



Արբիտրաժ» հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) քննությանը՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին, Հիմնարկի Կանոնակարգին և Կանոնադրությանը (մատչելի են www.uba.am կայքում) համապատասխան:

Հաճախորդը սույնով հավաստում է, որ ծանոթացել է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, արբիտրաժային կանոնակարգերին, դրանցով սահմանված իր իրավունքներին և պարտավորություններին, Բանկի կողմից նրանց բացատրվել են սույն կետով նախատեսված վեճերի լուծման տարբերակի ընտրության հետևանքները, որոնց կապակցությամբ Հաճախորդն առարկություններ չունի: Հաճախորդը հրաժարվում է հետագայում սույն կետով նախատեսված փաստերը վիճարկելու իր իրավունքից:

Կողմերը սահմանում են, որ սույն կետով նախատեսված Արբիտրաժային դատարանի ընտրության դեպքում արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է Արբիտրաժային դատարանի արբիտրաժային կանոնակարգին համապատասխան:

Կողմերը պայմանավորվում են, որ Արբիտրաժային դատարանի ընտրության դեպքում վեճի քննությունը կիրականացվի միայն գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման:

Արբիտրաժային դատարանի ընտրության դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի նորմերին համապատասխան: Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, Արբիտրաժային դատարանի վայրն է՝ ՀՀ, ք. Երևան:

Հաճախորդն արբիտրաժային վարույթի շրջանակներում իրավունք ունի, այդ թվում՝

Դիմել, որ արբիտրաժային տրիբունալը իր հաշվին ապահովի Հաճախորդին թարգմանչական ծառայություններով, եթե ինքը չի տիրապետում դատավարության լեզվին,

Փոխել հայցի առարկան և/կամ հիմքը, նվազեցնել կամ ավելացնելու հայցային պահանջների չափը մինչև արբիտրաժային տրիբունալի կողմից գործի քննությունն ավարտված հայտարարելը,

Բացարկ հայտնել արբիտրին, եթե առկա են հանգամանքներ, որոնք հիմնավոր կասկած են հարուցում նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ, մասնավորապես, եթե հիմքեր կան ենթադրելու, որ նա ուղղակիորեն կամ անուղղակիորեն շահագրգռված է վարույթի ելքով,

Բացարկներ հայտնել նաև վարույթին մասնակցող փորձագետներին և թարգմանիչներին: Այս դեպքում բացարկի հարցը որոշում է արբիտրաժային տրիբունալը,

Բացարկի մեծամասն մասին որոշումը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում դիմել իրավասու դատարան՝ բացարկի վերաբերյալ որոշում ընդունելու խնդրանքով,

Հայցադիմումը ստանալու օրվանից հինգ օրվա ընթացքում Արբիտրաժային դատարանին ուղարկել հայցադիմումի պատասխան՝ շարադրելով Բանկի կողմից գործը Արբիտրաժային դատարանին հանձնելու վերաբերյալ և/կամ ներկայացված պահանջների վերաբերյալ իր դիրքորոշումը,

Հայցադիմումի պատասխանի փոխարեն Արբիտրաժային դատարանին ներկայացնել հակընդդեմ հայցադիմում, Ծանոթանալ գործի քննության արձանագրության բովանդակությանը,

Միջնորդել որ արձանագրության մեջ կատարվեն փոփոխություններ և/կամ լրացումներ,

Ստանալ գործի քննության արձանագրության պատճենը,

Վարել գործերն անմիջականորեն (անձամբ) կամ պատշաճ լիազորված ներկայացուցիչների միջոցով,

Միջնորդել արբիտրաժային տրիբունալին վերացնելու իր կողմից կիրառված հայցի ապահովման միջոցները,

Միջնորդել արբիտրաժային վարույթին երրորդ անձի ներգրավման համար,

Տեղեկացնելով Բանկին՝ արբիտրաժային վճիռը ստանալուց հետո տասնհինգ օրվա ընթացքում դիմել արբիտրաժային տրիբունալին վճռի որևէ կոնկրետ կետ կամ մաս պարզաբանելու համար: Եթե արբիտրաժային տրիբունալը հիմնավոր է համարում այդպիսի դիմումը, ապա դրա ստացումից հետո երեսուն օրվա ընթացքում տալիս է անհրաժեշտ պարզաբանումներ: Այդ պարզաբանումը դառնում է վճռի բաղկացուցիչ մասը,

Բանկին տեղյակ պահելով՝ արբիտրաժային վճիռը ստանալուց հետո տասնհինգ օրվա ընթացքում դիմել արբիտրաժային տրիբունալին կայացնելու լրացուցիչ վճիռ այն պահանջների վերաբերյալ, որոնք պատշաճ կերպով ներկայացվել են արբիտրաժային վարույթում, սակայն վճռում չեն արտացոլվել: Եթե արբիտրաժային տրիբունալը հիմնավոր համարի այդ դիմումը, ապա պարտավոր է այն ստանալուց հետո վաթսուօրյա ժամկետում կայացնել լրացուցիչ վճիռ:

Հաճախորդն արբիտրաժային վարույթի շրջանակներում պարտավոր է, այդ թվում՝

Հասցեի փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես հաղորդել Արբիտրաժային դատարանին,

Հայցադիմումին կից ներկայացնել սահմանված կարգով հաշվարկված արբիտրաժային վճարների կատարումը հավաստող փաստաթղթերը,

Հայցադիմումի պատասխանում հանգամանորեն շարադրել, թե փաստական և իրավական հանգամանքներից որոնք է ընդունում և որոնց դեմ է առարկում և ինչ հիմքերով է դրանց դեմ առարկում:



Արբիտրաժային համաձայնության վավերության կամ կիրառելի լինելու վերաբերյալ առարկություններ ներկայացնելու դեպքում շարադրել դրանք Արբիտրաժային դատարանին ուղղված պատասխանի մեջ՝ միաժամանակ նշելով հիմնավորումները,

Հայցադիմումի պատասխանին կից ներկայացնել այն բոլոր ապացույցները, որոնցով հիմնավորում են իր առարկությունների հիմքում ընկած հանգամանքները,

Եթե Բանկի կողմից ներկայացվում է հակընդդեմ հայցադիմում, ապա հակընդդեմ հայցադիմումը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում արբիտրաժային տրիբունալին ներկայացնել հակընդդեմ հայցադիմումի պատասխան, որը պետք է ներառի առարկություններ հակընդդեմ հայցապահանջների դեմ՝ հայցային պահանջների դեմ առարկություններ բերելու համար նախատեսված կարգով: Հակընդդեմ հայցադիմումի պատասխանին կից պետք է ներկայացվեն բոլոր այն ապացույցները, որոնցով հիմնավորվում են առարկությունների հիմքում ընկած հանգամանքները,

Ապացուցել իր պահանջների կամ առարկությունների հիմքում ընկած հանգամանքները,

Ներկայացնել գրավոր ապացույցների բնօրինակները կամ դրանց պատշաճ վավերացված պատճենները,

Արբիտրաժային տրիբունալի վճիռները կատարել կամավոր վճռում նշված ժամկետում: Եթե վճռում նշված չէ դրա կատարման ժամկետը, ապա այն ենթակա է կատարման անհապաղ:

Արբիտրաժային դատարանի ընտրության դեպքում Հաճախորդը գիտակցում է, որ Արբիտրաժային դատարանի վճիռը լինելու է վերջնական, ենթակա չի լինելու բողոքարկման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Հաճախորդը պարտավորվում է հետագայում չչափարկել և չվիճարկել այդ փաստի վերաբերյալ իր տեղեկացվածության հանգամանքը:

Կողմերը պայմանավորվում են, որ պայմանագրերի/դիմում-պայմանագրերի կապակցությամբ ծագած վեճերի հետ կապված ցանկացած թղթակցություն, դատական կամ արբիտրաժային ծանուցում, այդ թվում՝ դատավարական կամ արբիտրաժային փաստաթուղթ, ուղարկվում են պայմանագրերում/դիմում-պայմանագրերում նշված հասցեներով և համարվում են հասցեատիրոջ կողմից ստացված (հանձնված), թեկուզև հասցեատերն այդ հասցեում այլևս չի գտնվում կամ չի բնակվում, եթե սույն Պայմաններով և (կամ) պայմանագրերով/դիմում-պայմանագրերով սահմանված կարգին համապատասխան միմյանց գրավոր չեն հայտնել իրենց փոստային հասցեները (գտնվելու վայրերը) փոխելու մասին:

16.3 Եթե վեճը ենթակա դատական քննության, Բանկը և Հաճախորդը տալիս են իրենց համաձայնությունը գործով արագացված դատաքննություն, ինչպես նաև պարզեցված վարույթ կիրառելու համար:

16.4 Ֆիզիկական անձ Հաճախորդներն իրավունք ունեն Պայմաններից բխող պահանջները հանձնել Հայաստանի Հանրապետության Ֆինանսական Համակարգի Հաշտարարի (այսուհետ՝ Հաշտարար) քննությանը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և պայմաններով¹:

17. Այլ պայմաններ

17.1 Սույն Պայմաններից բխող իրավունքները Բանկը կարող է փոխանցել կամ զիջել այլ անձանց՝ առանց Հաճախորդի նախնական համաձայնության:

17.2 Հաճախորդն իրավունք չունի սույն Պայմաններից բխող իրավունքներն ու պարտականությունները զիջել կամ այլ կերպ փոխանցել այլ անձանց՝ առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության:

17.3 Սույն Պայմաններով սահմանված իրավունքները չիրականացնելը չի կարող մեկնաբանվել որպես այդ իրավունքներից հրաժարում:

17.4 Փոստային հասցեի (գտնվելու վայրի) փոփոխության դեպքում Հաճախորդը պարտավոր է 2 աշխատանքային օրվա ընթացքում նոր փոստային հասցեի մասին իրազեկել Բանկին: Փոփոխությունների մասին Բանկին չիրազեկելու իրավական հետևանքների ռիսկը կրում է Հաճախորդը:

17.5 Բանկը կարող է հրապարակել սույն Պայմանների օտարալեզու թարգմանություններ: Թարգմանությունների և հայերեն լեզվով օրինակների միջև հակասությունների դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:

¹ Կարևոր նշում. Հայտնում ենք Ձեզ, որ Բանկը հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, եթե Ձեր կողմից Բանկի նկատմամբ ներկայացված գույքային պահանջը չի գերազանցել 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Դա նշանակում է, որ Բանկը չի կարող դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից Բանկի դեմ կայացված որոշումները այն պահանջների գշով, որոնց գումարը չի գերազանցել 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:





ԾԱՆՈԹՑՈՒՄ՝ Ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին (Ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար)

Հարգելի հաճախորդ,

Ուշադրություն: Խնդրում ենք մինչև ավանդային պայմանագիրը ստորագրելը ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին: Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ), հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 6, հեռախոս՝ +374 10 583514, ինտերնետային կայքը՝ www.adgf.am: Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ Օրենք) սահմանումներին:

Հատուցման դեպքը

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

- Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ

- Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետև՝ անվճարունակ բանկ):

Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

ՈւՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր ՀՀ դրամով ավանդները համարվում են մեկ ՀՀ դրամով ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ արտարժույթային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Այն դեպքում, երբ Բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն ՀՀ դրամով ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով և արտարժույթով ավանդ	
			Եթե ՀՀ դրամով ավանդը 7 միլիոն դրամից ավել է	Եթե ՀՀ դրամով ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն ՀՀ դրամով ավանդը)	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է ՀՀ դրամով ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա: Խնդրահարույց պարտավորություն է համարվում Ձեր այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացրել եք պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի»:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:



ԻՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԲՈՂՈՔ ՈՒՆԵՔ



1 ԾԱՆՈԹԱՅԵՐ
ՉԵՐ ԴԻՍԿՈՆՏԵՆՏԵՐՆ

Բանկ յուրաքանչյուր աշխատակից պարտավոր է.

- Ձեզ ուղղորդել բոլորների հարցով զբաղվող աշխատակցի մոտ:
- Տրամադրել հաղորդակցման համար անհրաժեշտ տվյալներ (ինոպիստահամար, էլեկտրոնային հասցե):

Պատասխանատու աշխատակիցը պարտավոր է.

- Տեղեկացնել Ձեր իրավունքների և բոլորի քննության գործընթացի մասին:
- Տրամադրել կազմակերպությունում գործող համապատասխան կանոնները և Հայտի ձև:

Կարևոր իրադեպում

ԻՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԲՈՂՈՔ ՈՒՆԵՔ

«Արդշին Ինվեսթմենթս» ՓԲԸ

Գրավոր բոլոր ներկայացրեք պատասխանատու աշխատակցին կամ ուղարկեք հետևյալ հասցեներով.

office@ardshininvestbank.am

ՀՀ, ք. Երևան 0015, Պարոնյան փ., 42շ., 90 տարածք

Ձեր բոլոր կարող եք ներկայացնել նաև Ֆինանսական

- Նշեք Ձեր տվյալները՝ պատասխանը ստանալու համար:

- Հավաստիացեք, որ Ձեր բոլորը ընդունել են և պահպանեք ստացման փաստը հավաստող տեղեկատվությունը մինչև բոլորի վերջնական լուծումը:

Բանկ բոլորի վերաբերյալ որոշում է կայացնում (քավարարել, մասնակի քավարարել, մերժել) 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Հարցեր ունենալու դեպքում կապվեք պատասխանատուի հետ.

+374 (60) 655 000

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱԵՏԱՐԱՐՈՒՆ, եթե.

- Ֆիզիկական անձ եք, միկրոձեռնարկատեր հանդիսացող անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ, այդ թվում նաև՝ ներաշխատող, գրավատու կամ այլ անձ ով ապահովման միջոցի (օրինակ՝ գրավի) հետ կապված բոլոր ունի,
- բոլորը վերաբերում է մատուցվող ծառայությանը և ունեք գումարային պահանջ (մինչև 10 մլն դրամ), կամ բոլորը առնչվում է վարկային պատմությանը,
- 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխան չեք ստացել կամ պատասխանը Ձեզ չի քավարարում,
- բոլորը չի քննվում դատարանում կամ արբիտրաժային տրիբունալում կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից,
- պատասխանից հետո չի անցել 6 ամիս,
- բոլորարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել 2008թ. օգոստոսի 2-ից հետո:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՎՃԱՐ ԵՆ

(Երևան 0010, Մ.Խորենացի 15, էջիտ պազա քիզնես կենտրոն, 7-րդ հարկ, +374 60 701 111, info@fsm.am)

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼ

- Եթե Ձեր և կազմակերպության միջև կնքվել է արբիտրաժային համաձայնություն, ապա ձեր միջև ծագող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից:
- Պայմանագիր կրելիս Դուք իրավունք ունեք հրաժարվելու արբիտրաժային համաձայնագրից և կազմակերպությունը պարտավոր է Ձեզ ծառայություն մատուցել:
- Հիշեք. նույնիսկ արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, քանի դեռ բոլորը չի քննվել տրիբունալում:
- Հաշտարարը իրավասու չէ ընդունել բոլորը, եթե այն արդեն քննվում է տրիբունալում:

ԴԱՏԱՐԱՆ

- Դուք միշտ կարող եք դիմել դատարան:
- Դատարանի վճիռը ենթակա չէ վերանայման Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

- Դուք կարող եք նաև դիմել Կենտրոնական բանկ, և Ձեր բոլորին կպատասխանեն 15 աշխատանքային օրվա ընթացքում (Երևան 0010, Վ.Արզալյան 6, +374 992 697, consumerinfo@cba.am):
- Եթե Ձեր բոլորը այլ կառույցների իրավասության դաշտում է, ապա Կենտրոնական բանկը կուղղորդի նրանց տիրույթ:
- Կենտրոնական բանկը խորհուրդ է տալիս Ձեր խնդրանքով նախևառաջ դիմել Ֆինանսական կազմակերպությանը (Քայլ 2):

Հարցերի դեպքում դիմեք

(«Արդշին Ինվեսթմենթս» ՓԲԸ, ՀՀ, ք. Երևան 0015, Պարոնյան փ., 42շ., 90 տարածք, +374 (60) 655 000, office@ardshininvestbank.am, www.ardshininvestbank.am)



ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-Ի ՄԻՋՈՑՈՎ ՍՏԱՑՎՈՂ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՎԻՋԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

- 1) ՀԾՀ հայտանիշ՝ նորմալ վիճակ, հրաժարվել է
- 2) Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն, անգլերեն)
- 3) Մահացած է/մահացած չէ
- 4) Մահվան ամսաթիվ
- 5) Ծննդյան ամսաթիվը
- 6) Սեռ
- 7) Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)
- 8) Քաղաքացիությունը • Անձը հաստատող փաստաթղթի տեսակ
- 9) Անձը հաստատող փաստաթղթի սերիա և համար, երբ և ում կողմից է տրվել
- 10) Անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետը
- 11) Հասցե (ՀՀ բնակության կող, ՀՀ բնակության մարզ, Համայնք, Բնակավայր, Փողոց, Տուն/Շենք հմ., Տան տեսակ, Բնակարան)
- 12) Լուսանկար

2. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

- 1) Կազմակերպության անվանում (հայերեն, անգլերեն)
- 2) Կազմակերպարավական տեսակ
- 3) Գրանցման համար
- 4) Գրանցման ամսաթիվ
- 5) ՀՎՀՀ
- 6) Ձեռնարկության կողային դասակարգիչ (ՁԿԴ)
- 7) Գործունեության տեսակ / ԱՁ-ի գործունեության խումբ
- 8) Պետական գրանցման վկայականի համար
- 9) Սոց. ապահովագրի կոդ
- 10) Հասցե (Երկիր, Մարզ, քաղաք/գյուղ, փողոց, շենք/տուն, բնակարան, Փոստային դասիչ)
- 11) Հեռախոսահամար
- 12) Տնօրենի կամ ԱՁ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ Անուն, Ազգանուն, Քաղաքացիություն, Անձնագրի համար, Երբ է տրվել, Ում կողմից, Վավեր է մինչև, ՀԾՀ, Հասցե (Երկիր, Մարզ, Համայնք, Քաղաք/Գյուղ, Փողոց, Տան տեսակ, Շենք/տուն/տնակ, Բնակարան, Փոստային դասիչ), Հեռախոսահամար
- 13) Գործունեության տեսակի դասակարգչի կոդը,
- 14) Բաժնեմասերի ընդհանուր քանակը,
- 15) Բաժնեմասի արժեքը ՀՀ դրամով,
- 16) Գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը,
- 17) Գործադիր մարմնի ղեկավարի հեռախոսահամարը
- 18) Գործադիր մարմնի ղեկավարի էլեկտրոնային փոստի հասցեն,
- 19) Սոցիալական ապահովագրի կոդ,
- 20) մասնակցի/բաժնետիրոջ մուտքի, ելքի ամսաթիվ,
- 21) Կազմակերպության/անձի ID,
- 22) տեղեկություններ հիմնադիր լինելու մասին,
- 23) ձեռնարկության կոդ,



- 24) մասնաբաժինների քանակը,
- 25) տեղեկություն լուծարման մասին,
- 26) կազմակերպության ներկա քաղվածք, կազմակերպության կանոնադրություն

3. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

- 1) Աշխատավայրի ՀՎՀՀ
- 2) Աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները
- 3) Քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության գումար
- 4) Եկամտային հարկի չափ
- 5) Անձի կողմից կատարված սոցիալական վճարումներ
- 6) Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա (ՀԿԴ) փոխանցված գումարի սոցիալական վճարի գումար
- 7) Աշխատած ժամերի քանակը

4. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ

- 1) Քրեական պատասխանատվության/դատվածության վերաբերյալ տեղեկատվություն

5. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

- 1) Անուն, Ազգանուն, Հայրանուն
- 2) Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)
- 3) Անձը հաստատող փ/թ տեսակ՝
- 4) Անձը հաստատող փ/թ համար
- 5) Անձնագրի տրման ամսաթիվ
- 6) Անձնագիրը վավեր է մինչև
- 7) Ում կողմից է տրված անձը հաստատող փ/թ
- 8) Վիզայի համար, երբ է տրված, ում կողմից
- 9) Ազգություն
- 10) Ծննդյան ամսաթիվ
- 11) Ծննդավայր, Ծննդյան հասցե (Մարզ, Համայնք, Երկիր, Մարզ, Համայնք, Փողոց, Տան տեսակ, Շենք/տուն/տնակ, Բնակարան, Բնակվել է սկսված, Բնակվել է մինչև) • Գրանցման հասցե, Բնակության հասցե (Երկիր, Մարզ, Համայնք, Փողոց, Տան տեսակ, Շենք/տուն/տնակ, Բնակարան, Բնակվել է սկսված, Բնակվել է մինչև, Գրանցման բաժանմունք)
- 12) Սեռ՝ Արական, Իգական
- 13) Մահվան մասին տեղեկություններ՝ Մահվան ամսաթիվ, Մահվան պատճառ Մահվան վայր, Տարիք, Նույնականացում, Հասցե
- 14) Քաղաքացիություն, Երկրորդ քաղաքացիություն
- 15) Նոր ազգանուն
- 16) Ազգանունը փոխելու պատճառ
- 17) Ազգանունը ամուսնությունից առաջ
- 18) Կրթություն
- 19) Աշխատանք, զբաղմունք
- 20) Զինծառայության վերաբերյալ տեղեկատվություն
- 21) Ամուսնական կարգավիճակ
- 22) Ամուսնության գրանցման ամսաթիվ, Ամուսնության գրանցման համար, Ամուսնությունը գրանցող բաժանմունք, Ամուսնության վկայականի համար



- 23) Ամուսնալուծության պատճառ, Ամուսնալուծության գրանցման հիմք, Համատեղ երեխաների թիվը, Ամուսինների համատեղ դիմում, Խնամակալի տվյալներ
- 24) Որերորդ ամուսնությունն է
- 25) Ամուսնու/կնոջ վերաբերյալ տեղեկատվություն
- 26) Ծնող է, թե ոչ
- 27) Հայրության հիմք, Հայրության հիմքի մանրամասներ (Մոր հայտարարություն, Դիմումի ամսաթիվ, Դատարան, Վճռի համար, Վճռի ամսաթիվ)
- 28) Երեխայի մասին տեղեկություններ, Քանի երեխա է ծնվել, Որերորդ երեխան է, Ծննդի կարգավիճակ, Երեխայի տվյալները հայրությունը ճանաչելուց հետո, Տեղեկություններ որդեգրումից հետո
- 29) Ծնողների (հոր, մոր) վերաբերյալ տեղեկատվություն

6. ՄԱՀԱՅԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

- 1) Անուն
- 2) Ազգանուն
- 3) ՀԾՀ
- 4) Մահվան ամսաթիվ
- 5) Ծննդյան ամսաթիվ
- 6) Տիպ

7. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1) Ավտոմեքենայի ունիկալ ID
- 2) Ավտոմեքենայի VIN համար
- 3) Ավտոմեքենայի շարժիչի հզորություն/ձիաուժ
- 4) Քաշը առանց բեռնվածության
- 5) Ավտոմեքենայի գույն
- 6) Փաստաթղթի համար
- 7) Ավտոմեքենայի հաշվառման համարանիշի տեսք
- 8) Ավտոմեքենայի թափքի տեսակ
- 9) Ավտոմեքենայի կարգավիճակ՝ հաշվառված է, հանված է
- 10) Սեփականության վկայականի համար
- 11) Պետ. Հաշվառման վկայականի համար
- 12) Ավտոմեքենայի տեսակի խումբ
- 13) Ավտոմեքենայի մոդել
- 14) Ավտոմեքենայի վառելիքի տեսակ
- 15) Տարանցիկ համարանիշ
- 16) Հատուկ նշումներ
- 17) Ավտոմեքենայի հենասարքի համար
- 18) Ավտոմեքենայի թողարկման տարեթիվ
- 19) Ավտոմեքենայի տեսակ
- 20) Ավտոմեքենայի տեսակ ID
- 21) Առավելագույն թույլատրելի բեռնվածություն
- 22) Ավտոմեքենայի հաշվառման ամսաթիվ
- 23) ԱՏՄ շարժիչի համար
- 24) Ժամանակավոր հաշվառման համար
- 25) Դեղին հաշվառման համար
- 26) Ավտոմեքենայի մականիշ



- 27) Ավտոմեքենայի մակնիշի տիպար
- 28) Ավտոմեքենայի կարգավիճակ
- 29) Կիրառված սահմանափակումներ
- 30) Գրավադրման մասին տվյալներ (Անձի անուն, ազգանուն, հայրանուն, Անձի ՀԾՀ, Իրավաբանական անձի/Ֆիզ.անձ, Անձը հաստատող փաստաթղթի համար, Սեռ, Փաստաթղթի տեսակ, Անձի քաղաքացիություն, Անձի հասցեի նկարագիր, Գրավադրման ամսաթիվ, Գրավադրված գումարի չափ, Գրավադրված գումարի արտարժույթ, Գրավադրման վայր, Վերագրավադրման թույլտվություն)
- 31) Հաշվառված անձի մասին տվյալներ (Անձի անուն, ազգանուն, հայրանուն, Անձի ՀԾՀ, Իրավաբանական անձի/Ֆիզ.անձ, Անձը հաստատող փաստաթղթի համար, Սեռ, Փաստաթղթի տեսակ, Անձի քաղաքացիություն, Ծննդյան ամսաթիվ, Անձի հասցեի նկարագիր)
- 32) Սեփականատիրոջ մասին տվյալներ
- 33) Ապահովագրման մասին տվյալներ
- 34) Վարորդական իրավունք (ՎՎ համար, ՎՎ կարգեր, ՎՎ զրկված է և ապասկտիվացված լինելու մասին տեղեկատվություն, Անձի անուն, ազգանուն, հայրանուն, Անձի ՀԾՀ, Անձը հաստատող փաստաթղթի համար, Սեռ, Անձի քաղաքացիություն, Ծննդյան ամսաթիվ, Անձի հասցեի նկարագիր)
- 35) Անձի հասցեի նկարագիր (Պետություն, Մարզ, Համայնք, Քաղաք, Հասցե 1, Հասցե 2, Տան համար, Փողոց, Բնակարան, Փոստային դասիչ, Կազմակերպության հեռախոսահամար, Կազմակերպության, բջջ. հեռախոսահամար, Էլ. հասցե, Կայք, Հասցեն՝ ամբողջական տեսքով)